891.99
U-25

6319

891.99
Ա-25

ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՒԱԳ ԳԱՀԱՆԱՑԻ
ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

ԵՐԿՀԱՏՈՐ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԼՊՕԽԱՆ» Մուշ. պեր. № 8.
1915

24 JUN 2013

9/820

Տ. Տ. Գէորգ Ե. Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթուղիկոսի Հայրապետութեան

Տ. Տ. Սահակ Բ. Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան.

Տ. Զաւէն արք. Եպիսկոպոսի Կ. Պոլսոյ Հայոց պատրիարգութեան

Տ. Մեսրովբ Եպիսկոպոսի Թիֆլիսի Թեմական Առաջնորդութեան։

Եւ

Համաշխարհային աշխարհաւեր պատերազմների երկրորդ տարուայ արիւնոտ օրերումը լոյս տեսաւ երկասիրութիւնս։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Գոս. Գրադարան
ZUUՈ-ԱՅՍ ԳՐ
Ա. Մ. Մասիսյան
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
21287-59

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր եկեղեցիներումը տօնուող սրբերից մեծագոյն մասի օրինակելի պատմութիւնները շատերին անյայտ են, եթէ նորանցից երկասիրութեամբ՝ մանաւանդ թատերական երկասիրութեամբ փոքրիկ գրքոյկներ կազմուին ու հրատարակուին՝ և թատրոններում ներկայացուին, առանց կասկածանքի, ընթերցողներն և թէ թատերասէրներն կարող են նորանցից քաղել մեծ և արդիւնաւոր օգուտ, Ա. Հաւատքի վերայ կունենան կատարեալ հասկացողութիւն։ Բ. Ազգային պատմութեանց նշանաւոր կէտերի՞ վերայ ճիշտ տեղեկութիւն։ Գ. Տօնուող սրբերի առաքինական օրինակներին հետևողութիւն։ Դ. Հաւատք՝ առ Աստուած, սէր՝ առ եկեղեցին. եղբայրութիւն՝ առանց խտրութեան ազգի և կրօնի, հաւատարմութիւն՝ տիրող իշխանութեանը. պաշտպանութիւն՝ իրաւունքի և արդարութեան. հնազանդութիւն և պատիւ՝ ծնողներին. սրբութիւն՝ ընտանիքներում, անձնանուէր ծառայութիւն՝ ազգային պէտքերին, և զոհաբերութիւն՝ հայրենիքին։

Այս բոլորը ի նկատի ունենալով՝ փորձի համար «Գրիգոր Լուսաւորչի» ծագումից սկսած մինչև նորա «Ս. Նշխարների» գիւտը թոյլ գրչիս երկասիրութեամբ աշխատեցի ի լոյս ընծայել. յոյս ունիմ կարծածիս համապատասխան օգտակար լինի յարգելի ընթերցողներին։

Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի



Իշխան Սիմէօն Ս. Աբիմելէք-Լազարեանց

Գերազնիւ

ԻՇԽԱՆ ՍԻՄԷՕՆ Ս. ԱԲԻՄԵԼԷՔ-ԼԱԶԱՐԵԱՆՑ

Իշխան Սիմէօն Աբիմելէք Լազարեանի վեհաշուք տոհմը սերվում է Հայոց Արծրունի Թագաւորների ցեղից. Իշխանը ժառանգ է Լազարեան ազգապարծանք տոհմի, որ նոյնպէս սերվում է Հայոց Թագաւորների ցեղից՝ որ հաստատուած է օգոստափառ Եկատերինէ Բ-ի 1776 թուի Հոկտ. 3-ին շնորհած ողորմածագոյն հրովարտակով։

Վսեմափայլ իշխանը, որ ներկայումս Հոգաբարձու է Լազարեան Ճեմարանի՝ նա իւր մեծաշուք տոհմի ընածին ազնուութեանը համապատասխան՝ չի դադարում մեր կարկտահար և անօրինակ տանջանքներով յարաժամ տապակուող Հայ ազգին բիւրակերպ բարիքներ մատակարարելուց՝ առաւելապէս այժմ, որ անհրաժեշտ է, ուստի անկեղծ սրտիս ջերմագին փղձուկը փափագում եմ արտայայտել՝ սոյն երկասիրութիւնս նուիրելով ի յաւերժական յիշատակ նորին գերազանցութեան անմահ անունը և նախանձելի գործքերին. ըստ այնմ «Տուր իմաստնոյն պատճառս, և իմաստնագոյն ևս լիցի»։

Ուստի թող Տէր Աստուածն օրհնէ և երկարացնէ նորին գերազանցութեան ամենաթանկագին կեանքը, և ինչպէս որ Օգոստոս կայսրը՝ Տիբերիոս կայսերով ճիւղաւորուեց՝ նոյնպէս ճիւղաւորեալ պահէ ԱԲԻՄԵԼԷՔ-ԼԱԶԱՐԵԱՆՑ ազնիւ ցեղը ցկատարած աշխարհի։

Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՀԱՏՈՐԻ

Գրիգոր Լուսաւորչի ծագումը, Պարսից Արտաւան թագաւորի սպանուիլը, Արտաշիր Սասանեանի թագաւորելը, դատաստանը, Հայոց Խոսրով մեծի յաղթութիւնները, Անակ Պարթեւազն Պահլաւունու դաւաճանութիւնը, Գրիգոր Լուսաւորչի ծնունդը. Խոսրով մեծի մահը. Գրիգորի ամուսնութիւնը, Տրդատի մօտ ծառայելը, Տրդատի և Հռչէի մենամարտութիւնը, Տրդատի թագ և թագաւորութիւն ստանալը Դիոկղետիանոս Հռովմի կայսերից, Անահտական մեհեանը, քրմապետ, քուրմեր և քրմուհիներ, Տրդատի Գայլ գետի ափին ճաշկերոյթը։ Գրիգորի չարչարանքներ կրելը և մուտն ի Վիրապը։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Գրիգոր Լուսաւորչի ծագումը. Պարսից Արտաւան թագաւորը և թագուհին պարզ գիշերը դահլիճում նստած իրար հետ խօսակցում են. նորանց յետևը թագուհւոյ նաժիշտ Արտադուխտը կանգնած ծածուկ լրտեսում է։

Արտաւան

Թագուհի, այսօր ես ինձ շատ տխուր և վատ եմ զգում, կարծես թէ՝ մի ինչ որ սև փոթորիկ վեր է կացել և սրտիս հորիզոնը սկսել է մռայլոտել։

Թագուհի

Արեգակնափայլ մեծ թագաւոր. դու՝ որ քո անյաղթելի քաջութեամբը՝ քո առաջ խոնարհեցրիր Հռովմէացւոց Անտոնինոս Կարակաղոս կայսերին, դու մաղդեղն ես. քո առաջ դողում են բոլոր թագաւորներն. և պէտք է շատ շուտով բոլորն էլ խոնարհուին քո առաջ. և քո հուժկու բազուկը բոլորին ենթարկէ քո հզօր ձեռքի տակ. և այնուհետև ով պէտք է լինի այն չարագուշակ սև փոթորիկը՝ որ յանդգնի քո սրտի խաղաղութիւնը վրդովել. և բացի այս, ուչ ապաքէն՝ դու եզակի ես բոլոր թագաւորների մէջ, որովհետև մեր մեծ Որմիզդը միայն քեզ է պարգևել աստղաբաշխական այն բարձր գիտութիւնը՝ որով կարողանում ես ապագան անսխալ գուշակել և իմանալ ամեն մի գաղտնիք. այժմ ինչու՞ ես մտատանջվում, կարող ես ահա այս պարզ երկնակամարի աստղերին նայել և իմանալ այդ փոթորկի ծագումը։

(Դուրս է գնում աստղերին նայելու)

Արտաւան

Թագուհի, լաւ է՝ որ միտս բերիր, դուրս գնամ և տեսնեմ աստղերի դիրքը, թէ ինչ են ցոյց տալի ներկայ օրերի և տարիների համար։

(Արտաւանը նայում է աստղերին եւ մռայլոտուած ներս է մտնում)

Թագուհի, աստղերի դիրքը այնպէս տեսայ՝ որ եթէ դէպք լինի մէկին այս օրերումը ապատամբուիլ իւր տիրոջից՝ նորան

կը յաջողի. այս պատճառաւ խիստ շատ կասկածում եմ իմ թագաւորութեան վերայ. չընայելով՝ որ շուրջս ունիմ ազգականներիս լեգէոններ, Կարէնի Պահլաւունիներ. Սուրէնի Պահլաւունիներ և Ասպահապետի Պահլաւունիներ, այս բոլորն էլ Պարթեւական ցեղից առաջ եկած Արշակունիներ են, որ բեղմնաւորուած լցուել են շուրջս և թագաւորութեանս մէջ առաջի տեղերն ունին։

Թագուհի

Արեգակնափայլ մեծ թագաւոր, մի՞թէ Կարէնեան, Սուրենեան և Ասպահապետեան Պահլաւունիներն՝ Արշակունիներ են, և եթէ Արշակունիներ են՝ ապա ինչո՞ւ կոչվում են Պահլաւունիներ։

Արտաւան.

Թագուհի լսիր, երբոր պարթեւական ցեղի Արշաւիր(փրաատ) թագաւորը մեռաւ, Արշակունի թագուհուցը ծնած թողեց երեք արու որդի, Արտաշէս, Կարէն և Սուրէն. և մի աղջիկ՝ անունը Կոշմ՝ Ասպահապետի կինը. սորանց մէջ խռովութիւն ընկաւ. Արտաշէսը՝ օրէնքի համաձայն կամենում էր որդուց որդի թագաւորել՝ միւս եղբայրները հակառակվում էին. երբոր սորանց միջի խռովութիւնը սաստկացաւ, մեր ցեղակից Արշակունի պարթեւացն Արդաբը՝ որ Հայոց մեծաց թագաւորն էր, իւր հայկական զօրքովն եկաւ Պարսկաստան և իւր խոհական իմաստութեամբն՝ եղբայրներին իրար հետ հաշտեցրեց. և արաւ մի այսպիսի կարգադրութիւն. այն է՝ որ Արտաշէսը որդուց որդի թագաւորէ. իսկ նորա եղբայրներն՝ որ Բահլայ քաղաքի և աշխարհի անունով կոչվում էին Պահլաւներ, նորանք ինչպէս թագաւորի ցեղեր՝ լինին Պարսից բոլոր նախարարներից նախապատիւ, և երբ որ Արտաշէսի ցեղը վերջանայ՝ որդիներից մէկը նստի Պարսից թագաւոր. ահա այսպէս որոշուեցան Պահլաւունի երեք երեսելի ցեղերը՝ Կարէնի, Սուրէնի, և Ասպահապետի՝ որ Կոշմի պատուի համար ամուսինն էլ կոչուեցաւ Ասպահապետի Պահլաւունի. և ահա այս բոլոր ցեղականներովս՝ որ թագաւորութիւնս պէտքէ ամրացած և ուժեղացած գտնեմ, ընդհակառակն՝ տեսնում եմ, որ ահա նորանց թուլութեամբ, և անհոգութեամբ հակառակորդներս ուժեղանում են, բայց չը գիտեն՝ որ անհեռատեսութեամբ թշնամիներիս ոյժ տալով՝ յապայն իրանց հիմնովին բնաջինջ լինելու կործանումն են պատրաստում. վերջապէս, ժամանակ է երթանք և քննենք. յոյս մեծ է մեր մեծ Որմզդի օգնութեանը վերայ։

(Թագաւորն ու թագուհին գնում են արքունի սենեակում քնելու. Արտաղուխտը դահլիճում մնում է մենակ. Արտաշիր Սասանեանը՝ յանկարծ ներս է մտնում։)

Արտաղուխտ.

Այս լաւ եղաւ, որ թագաւորն ու թագուհին գնացին քնելու, բայց չ՝գիտեմ ես ինչպէս անեմ, որ կարողանամ թագաւորի գուշակութիւնը հասցնել Արտաշիրի ականջը, ո՜հ, երանի կլինէր՝ նա այս րոպէիս այստեղ գտնուէր։

Արտաշիր։

Բարև քեզ՝ իմ դիցուհի Արտաղուխտ, ինչ գաղտնիք ունիս պատմիր ինձ։

Արտաղուխտ

Վա՜հ. այս ինչ բան է, մնում եմ զարմացած, հէնց այս րոպէիս քո գալն էի մտածում, իսկ դու յանկարծ այստեղ բուսար։

Արտաշիր

Արտաղուխտ, սա գիտե՞ս ինչ բան է, սա բարի նշան է։

Արտաղուխտ

Իմ դիւցազն Արտաշիր. ուղիղ ես ասում՝ որ սա բարի նշան է. որովհետև քեզ պատմելու մի մեծ գաղտնիք ունիմ։

Արտաշիր

Պատմիր պատմիր իմ սիրելի Արտաղուխտ, քո վարձատրութիւնը՝ իմ կեանքի մեծութեան հաւասարն է լինելու։

Արտաղուխտ

Իմ դիւցազն Արտաշիր, Արտաւանը այս գիշեր աստղերին նայեց և ասաց իւր կնոջը, «Թագուհի, աստղերի դիրքը այս գիշեր այնպէս են ցոյց տալի, որ եթէ այս օրերումը դէպք լինի մէկին՝ իւր տիրոջիցը ապստամբել, կարող է մեծ յաջողութիւն ձեռք բերել». Դու՝ որ աշխատում ես Արտաւանի թագաւորութիւնը ձեռք բերել. մի կորցնել ժամանակ, բոլոր խորհուրդներդ գործ դիր, բոլոր ուժովդ աշխատիր, որ մի մարդ՝ եթէ հաստատուն կերպով կպչի մի որ և է շատ դժուարին և ամենածանր գործքի և առանց վհատելու բոլոր ուժովը աշխատի՝ անշուշտ կարող է իւր առաջն՝ահաւոր լեռներ խոնարհեցնել և հասնել նպատակին, ուստի դու էլ հէնց այս րոպէիցն սկսած աշխատիր, և աշխատելդ սկսելունպէս՝ այնպէս համարիր, որ նպատակիդ երեք մասն արդէն կատարել ես։ Դու, անպատճառ պէտք է լինիս Պարսից թագաւոր, ուրեմն երդուիր, որ երբոր թագաւոր լինիս՝ այն ժամանակ ինձ քեզ համար կին կառնես և ինձ Պարսկաստանի թագուհի կդարձնես։

Արտաշիր

Իմ սիրուհի Արտագուխտ, երբոր դու, այս մեծ ծառայութիւնն ինձ արիր, ես այս բոպէիցն սկսած բոլոր ուժովս աշխատելու եմ նպատակս իրագործելու, և երբոր յաջողիմ Արշակունեան պանծալի թագը գլուխս ընդունել. երդվում եմ մեր մեծ Որմզդի անունովն՝ որ այն ժամանակ առանց տատանուելու քեզ առնեմ ինձ համար կին. և քեզ հռչակեմ Պարսկաստանի թագուհի, միայն դու անվրիպելի ուշադրութեամբ լրտեսիր. թագաւորի խորհուրդներն ու նախագծերը՝ խոհական գաղտնապահութեամբ հաղորդիր ինձ. ուստի մնաս բարեաւ իմ ապագայ թագուհի։

Արտագուխտ

Ապահով և յուսալիր սրտով գնաս բարեաւ իմ ապագայ թագաւոր։

(Խորհուրդ նոյն դահլիճումը)

Դենպետ

Պարսկաստանի իշխան նախարարներ, այս վեհ ժողովը՝ իմ և Արտաշիր Սասանեան նախարարապետի խորհրդով բաց եմ անում այն դիտաւորութեամբ՝ որ ընդհանուր խորհրդակցութեամբ՝ վճիռ կայացնենք այն բանի համար, թէ ինչպէս անենք՝ որ ազատուինք այս Արտաւան հպարտ ու դոռոզ թագաւորիցը, որովհետև նա իւր վերին աստիճանի ամբարտաւանութեամբ՝ ձեզանից ոչ մէկին չէ տալի ձեզ վայել յարգանքը, այլև չէ տալի նոյն իսկ ինձ. չի գիտում այն՝ որ ինչպէս ինքը մեր մեծածաւալ Պարսկաստանի ժողովրդական մարմնի գլուխ և իշխանն է և նորա պանծալի թագն է կրում, նոյնպէս էլ ես՝ նոյն իսկ իրա և բոլոր ժողովրդի հոգիների իշխողն եմ, և մեծ Որմզդի հրամանակատարն։

Արտաշիր

Մեծափառ տէր Դենպետ, մենք մեր մեծ Որմզդից յետոյ՝ քեզ ենք ճանաչում Պարսկաստանի հոգին ու կենդանութիւնը, քո բերանից արձակած ամեն մի խօսք՝ մեզ համար աստուածի հրամաններ են, ինչ որ դու վճռես՝ նա մեր բոլորի կամք ու հաճութիւնն է։ Ցայտնի բան է, որ մենք թագաւորի աջ բազուկն ենք և նորա ոյժն ու փառքը. իսկ դու մեծափառ տէր, ոչ միայն նորա ոյժն ու փառքը՝ այլև նորա հոգևոր հայրն ես, նորա ուղեցոյցը, Որմզդի բերանից նորան պատգամներ, խորհուրդներ տուողը, սակայն ցաւալին այն է՝ որ թագաւորը ոչ քեզ է լսում և ոչ մեզ, խելք ու հանճար ասած բանը՝ կարծում

է, որ միայն ինքն ունի, փոխանակ մեզ իւր շուրջն հաւաքելով և մեզ հետ սիրով խորհրդակցելու և այնպէս գործելու, նա իւր դոռոզութեամբ մեզ իրանից հեռացնելով խորթացնում է և այնպէս դառնում պատճառ ատելութեան։

Զեհ նախարար

Ի սրտէ համամիտ եմ մեր մեծ նախարարապետ Արտաշիր Սասանեանին և աւելացնում եմ, որ մեր Արտաւան թագաւորն ունի դոռոզ՝ բայց տարօրինակ դոռոզ բնաւորութիւն. նա չէ յիշում այն՝ որ մենք մեր անձնազոհութեամբ բարձրացրել ենք իրան թագաւորների շարքի բարձրագոյն տեղը, և սորա հակառակը՝ նա չէ մտածում ոչ մեր դիրքի, ոչ մեր պատուի բարձրութեան և ոչ իսկ մեր կենսականի վերայ. այլև իւր կատարելի ազգային և պատերազմական գործերի վերաբերութեամբ՝ նախապէս մեզ հետ չի խորհրդակցում, այլ իւր հրամանները յանկարծակի է արձակում, որով թէ գործն է փչացնում և թէ մեզ շշմեցնում մեր կատարելու պարտաւորութիւնների մէջ, և այսպէս Պարսկաստանը լինում է միշտ վնասների մէջ։

Արտաշիր

Զեհ իշխան, շատ ուղիղն էք ասում, բայց մեր թագաւորը իւր հպարտ բնաւորութեամբն ոչ թէ միայն մեզ չէ լսում և մեզ հետ չէ խորհրդակցում, այլ և անգամ մեր մեծափառ տէր Դենպետին էլ չէ լսում և չի տալի իւր յարգանքը, յայտնի բան է՝ որ մեր Դենպետը մեր մեծ Որմզդի փոխանորդը և պատգամախօսն է, բայց զարմանալին այս է՝ որ չէ եղել մի որևէ գործ՝ որ թագաւորը սորա հետ խորհրդակցելով կատարած լինի։

Զեհ

Ես մտածում եմ և այսպէս դատում, որ մեր թագաւորին ամենից նպաստաւորը գահիցն հրաժարեցնելն է և այնպէս վերջ տալ Պարթևական օտար ցեղի թագաւորութեանը և սկիզբն առնել ընտրելու մեր Պարսկական ցեղից մէկին թագաւոր։

Կարէն

Մեր թագաւորը՝ իւր հպարտ և դոռոզ բնաւորութեամբը կործանումն է սպառնում մեր հայրենիքին, մեր փառապանծ Պարսկաստանին՝ այն Պարսկաստանին, որ ունեցել է աշխարհակալ թագաւորներ և թագաւորներին հրամայող ու սարսափեցնող վեհապետներ, իսկ սա՝ մեր թագաւորութիւնը խաղալիք է դարձրել և օտարներին ծաղրալի, ուստի պէտք է շտապենք սորան շուտով գահիցը հեռացնել։

Դենպետ

Դենշապուհ իշխան. դու ինչու՞ ես լռել, ինչու՞ դու քո կարծիքը չես խօսում, մեր թագաւորի կեանքը և նորա գոռոզ և ինքասակար բնաւորութիւնը՝ արդեօք քո վերայ ինչ տպաւորութիւն է թողել, խօսիր՝ որ իմանանք և քո կարծիքը։

Դենշապուհ

Մեծափառ տէր Դենպետ, ճշմարտախօսութիւնը պահանջում է անձնազոհութիւն, ուստի ես լաւ եմ համարում լռել՝ քան խօսիլ ճշմարտութիւնը, որ ոչ միայն չեմ կարող իւր մաքուր ուղղութեամբն առաջ տանել, այլ հակառակը կպատճառեմ թէ անձիս, թէ պատուիս և թէ տոհմիս կործանումն։

Դենպետ

Այդ ինչպիսի ճշմարտութիւն է, որ եթէ խօսիս՝ կպահանջէ անձնազոհութիւն և կործանումն. ճշմարտութիւնը խօսիր Դենշապուհ, գուցէ քո խօսեցած ճշմարտութիւնը ազդէ՝ եթէ ոչ այս բոլորին՝ գոնէ ինձ, որ ճշմարտութեան քարոզիչն ու առաջնորդն եմ։

Դենշապուհ

Մեծափառ տէր Դենպետ, հաւատում եմ, որ դու ճշմարտութեան քարոզիչն ես, և հէնց այս կէտումն զարմանքն ինձ պաշարում է, որ դու հակառակ քո բարձր կոչմանը՝ մեզ ժողովել ես քո շուրջը, փոխանակ թագաւորի և մեր մէջը սէր և միութիւն խօսելու. և մի հնար մտածելու, որ մենք խոհականութեամբ համակերպուինք մեր օրինաւոր թագաւորի հետ. թողնենք այս՝ այն խօսինք, եթէ մեր թագաւորն ունի՝ իցէ թէ հպարտ ու գոռոզ բնաւորութիւն, հետն էլ մի քանի պակասութիւն, ապա էլ ուրիշ ինչու՞ մէջն պէտք է երևի մեր հեռանկատ խոհեմութիւնը, որ չը կարողանանք մեր թագաւորի պակասութիւնները ծածկել, և ջանալ լաւն ու ուղիղը հրատարակել, որ մեր թագաւորի և մեր ազգի փառքի փայլին՝ խաւարի մռայլը չարատաւորէ։ Դուք լաւը գիտէք՝ որ թագաւորի անձն անձեռնմխելի է, և եթէ դուք այսօր ժողովել կամենում էք թագաւորին գահիցը հրաժարեցնել և հետևապէս մեզանից մէկին թագաւոր նստեցնել, շատ լաւ, ոչ ապաքէն մեր թագաւորն էլ ունի իւր կուսակից նախարարներ և զօրք, և բացի սորանից՝ այն էլ ի նկատի պէտք է առնէք, որ Հայաստանի սէգ Սուիւ մեծ Խոսրով թագաւորը հարկաւ կլսէ, որ իւր Պարթևական ցեղից շառաւիղած Արշակունի Արտաւան թագաւորին գահիցը հրաժարեցրել էք և տեղը օտար ցեղից մէկին

գահ էք բարձրացրել, անհերքելի ճշմարտութիւն է, որ նա այս յանդգնութիւնը չի կարող տանել և մի՞թէ այն էլ չգիտէք, որ այս երկու մեծ ազգերի խաղաղութիւն ու հանգստութիւնը՝ մինչև օրս պահպանել է արքայական ցեղի միութիւնը, երբոր այս միութեան կապը Արտաւանի գահիցն հրաժարեցնելով կըտրէք, այնուհետև դուռը կբանաք մեծ Խոսրովի՝ ահարկու Սուիւծի առաջ՝ և նա յոխորդաբար կդիմէ Պարսկաստան և զարհուրելի աւերածութեամբ մեր հայրենիքը սև սուգի կնստեցնէ։

Դենպետ

Դենշապուհ իշխան, ինչպէս երևում է Արշակունիների վախը՝ քեզ ճշմարտախօսութիւն է սովրեցրել և այդ ծակոտուած ճշմարտախօսութեամբդ կամենում ես մեզ մեր ազգագուտ խորհրդակցութիւնից կասեցնել, լաւ մտածիր, դա անհնարին է։

Դենշապուհ

Մեծափառ տէր Դենպետ, ես կամենում եմ իմ կարծիքն ասել ձեզ և յիշեցնել, որ ձեր կատարելու այս մեծ գործքի բոլոր կողմերը յուշի ուշով քննէք և տեսնէք, թէ արդեօք այս երկու չարիքից ո՞րն է փոքրագոյնը, ո՞րն է անվնասակարը, մեր օրինաւոր թագաւորի հպարտ ու խրոխտ թագաւորութիւն շարունակելը ծանր կընստի մեզ՝ թէ մի ուրիշին օրէնքի և իրաւունքի հակառակ թագաւորեցնելը, կարող էք վստահութեամբ ասել՝ որ նորընտիրը նորանից աւելի վատթարագոյնը չի լինի և մեր Պարսկաստանի լեռներն ու հովիտները արիւնով չի ներկէ և մեր շքեղ քաղաքները ու աւանները աւերակի կոյտեր չի դարձնէ։

Դենպետ

Դենշապուհ և Պարսկաստանի իշխան նախարարներ լսեցէք ինձ. առաւօտուս երբոր աղօթքի էի կանգնած, մեր մեծ Որմիզդը ինձ երևեցաւ և ասաց «Քո աղօթքը՝ ինձ լսելի եղաւ, և այս պատճառաւ տալիս եմ քեզ իմ պատգամը. գնա և պատմիր նախարարներին ու ասա. ձեր ասուած Որմիզդն ասում է, բաւական է՝ որքան Արշակունիները թագաւորեցին Պարսկաստանի վերայ. այժմ իմ խիստ հաճութեամբը թագաւորեցրու Պարսկական ազնուազոյն ցեղից մէկին, արդ՝ նախարարներ, այս սուրբ պատգամի դէմ ինչ ունիք ասելու։»

Նախարարներ

Մենք ընդունում ենք մեր մեծ Որմիզդ աստուծոյ սուրբ պատգամը և նորա ահաւոր անունովն երդվում, որ երբոր կամենաս ընտրել մեզանից մէկին թագաւոր մենք պատրաստ ենք

ամենայն հաւատարմութեամբ և հնազանդութեամբ ծառայել նորան և հարկաւոր դէպքում մեր անձը նուիրել նորա փառքը բարձրացնելու համար։

Դենպետ

Դենշապուհ իշխան, դու ինչ ունիս ասելու այս սուրբ պատգամի դէմ։

Դենշապուհ

Ամեն մարդ, ով կամենում է ճշմարիտն ասել, նա պէտք է ձեռք վերցնէ թէ պատուիցը, թէ կայքիցը և թէ նոյն իսկ իւր գլխիցը. ես սկզբումը լռում էի, որովհետև գիտէի ճշմարտախօսութեան ծանր վտանգը, բայց քանի որ սկսեցի ճշմարիտ խօսելը, ուստի այրական քաջութեամբ մինչև շնչիս վերջին կէտը պէտք է պաշտպանեմ ճշմարտութիւնը. ես չեմ ընդունում աստուծոյ այն պատգամը՝ որ հակառակ է ճշմարտութեանը. պատճառ՝ թագաւորի արդար իրաւունքի խորտակման. և առիթ՝ անողորմ սրածութեան և արտասուելի աւերածութեան. մնացէք բարեաւ։

Դենպետ

Կարէն իշխան, հասիր Դենշապուհուն սրիդ մի հարուածով՝ նորան սովրեցրու դիւցազներին պատկան ճշմարտախօսութիւնը։

(Սպանում է Դենշապուհուն եւ յետ դառնում)։

Կարէն

Մեծափառ տէր Դենպետ, հասայ Դենշապուհուն և քո հրամանը ճշտութեամբ կատարեցի, բայց զարմանք պաշարեց ինձ, որովհետև. այն յանդուգն գլուխը գետնին թաւալած ժամանակին էլ հատկեալ ասում էր, սրով սկսեցիք, սրով տանջուիք և սրով մեռնիք։

Արտաշիր

Արդարև թագաւորի կեանքի երջանկութիւնը՝ սուրն է. ժողովրդի հանգստութիւնը՝ սուրն է, զօրքի ոյժը՝ սուրն է. պարծանքը՝ սուրն է, սրով պէտք է ապրինք և սրով էլ մեռնինք։

Դենեպետ

Վատահոգի Դենշապուհը վերացաւ մեր միջից, ժամանակը ամենաթանկագինն է, ամեն մի վայրկեան՝ առանց մի մեծ գործք կատարելու չը պէտք անցնենք, ապա թէ ոչ՝ կըտուժենք. ուրեմն Զեհ և Կարէն, դուք երկուքդ կգնաք պատգամաւոր՝ իմ և այս բոլոր նախարարների կողմից Արտաւանի մօտ և կասէք նորան, որ Պարսկաստանի մեծափառ տէր Դենպետը. Արտաշիր Սասանեանը և բոլոր նախարարները պահանջում են քեզանից, որ դու քո կամքով հրաժարուիս Պարսից թագաւորութիւնից, որովհետև նոքա այլևս չեն կամենում ունենալ թագաւոր Պարթևներից՝ այլ Պարսիկներից։

Պատգամաւորներ (նոյն դահլճում)

Ողջոյն քեզ մեծ թագաւոր, Պարսկաստանի մեծափառ տէր Դենպետը, մեծ իշխան Արտաշիր Սասանեանը և բոլոր նախարարները՝ իրանց կողմից մեզ պատգամաւորներ ուղարկեցին քեզ մօտ. նորանք պահանջում են՝ որ դու քո յօժար կամքով հրաժարուիս գահից, նորանք այլևս չեն կամենում ունենալ թագաւոր Պարթևներից՝ այլ Պարսիկներից. Դենշապուհուն էլ սպանեցին։

Արտաւան

Դենշապուհուն սպանեցին՝ արդեօք ինչու համար սպանեցին։

Պատգամաւորներ

Դենշապուհուն սպանեցին ճշմարտախօսութեան և քո մեծութեան արքայական իրաւունքը և արդարութիւնը պաշտպանելու համար։

Արտաւան

Պատգամաւորներ, ցաւում եմ, որ Դենպետը՝ մեր հոգևոր Պետը՝ իւր բարձր կոչման սահմանից դուրս է եկել, իսկ գալով Արտաշիր Սասանեանին և նախարարներին ասացէք այդ տիրանենք դաւաճաններին, թագաւորն ասում է. ես գահիցս երբէք չեմ հրաժարուի, և քանի որ երակներիս մէջ եռում է Պարթևական ազնիւ արիւնը և ռազմասէր ոգին՝ պէտք է ամեն միջոց գործ դնեմ և բոլոր ուժովս մարտնչիմ. երբոր յաղթութիւնը տանեմ՝ դուցէ այն ժամանակ հրաժարուիմ և ձեզ առաջարկեմ գահս։

(Արտաւանը իւր հաւատարիմ նախարարներին)

Արտաւան

Իմ հաւատարիմ իշխան նախարարներ, Ասորեստանի Ստահր գաւառից Սասունի որդի Արտաշիրին առաջ քաշեցի. հոգացի՝ որ նա վարժուի զանազանակերպ կրթութիւնների և զինամարզութեան մէջ, և աստիճան առ աստիճան բարձրացնելով դարձրի մեծ իշխան նախարար, որ հարկաւոր ժամանակին իւր հաւատարմութեամբ և անձնանուէր ծառայութեամբը ինձ պէտք դայ իսկ նա՝ երախտեացս փոխարէնը՝ դարձել է ինձ դահիճ. և ինձանից խորթացրել է ոչ միայն նախարարներիցս շատերին,

21987-ՀՅ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека

այլ նոյն իսկ և Դենպետին. և պատրաստուել է իմ դէմ պատերազմի և այս կերպով կամենում է ինձ գահիցս իջեցնել և ինքը նստել իմ տեղը Թագաւոր. հարկաւ Արտաշիրի այս լրբութիւնը անտանելի է, պէտք է շատ շուտով զօրք ժողովել և ահեղ պատերազմով պատժել նորա յանդգնութիւնը, ընդ նմին և նախարարների, որ թողել են իրանց օրինաւոր Թագաւորը և մի հասարակ մահկանացուի փառամոլութեանը յագուրդ տալու համար՝ միացել են նորա հետ՝ որով դառնալու են պատճառ միլիոնաւոր անմեղ մարդկանց զուր իզուր տեղը արիւնները թափելու և Պարսկաստանը Պարսիկների արիւնով ողողելու. իսկ դուք մի վհատիք, զօրացէք և սկսեցէք Պարթևներից, Մարերից և Պարսիկներից զօրք ժողովել և շուտով պատերազմը սկսելով աշխատեցէք այն դաւաճաններին յանկարծակի բերել և թակարդի մէջ լարելով սրակոտոր խողողել։

Նախարարներ

Արեգակնափայլ մեծ Թագաւոր, դու հանգիստ եղիր, ունինք մեզ անթիւ ու անհաշիւ հաւատարիմ զօրք, յուսով ենք՝ որ շուտով Արտաշիրին և նորա համախոհ մի խումբ նախարարների լրբութիւնը պատժել։

Արտաւան

Վստահ եմ ձեր հաւատարմութեանը՝ քաջ իշխան նախարարներ, ձեր ուժեղ բազուկների փառքի ու պատուի պսակը՝ ձեր հերոսական յաղթութիւնից յետոյ կրկին առաւելութիւններով կստանաք. հապա ծն անդր առաջ՝ գործքի կանգնեցէք։

(Առանձին ողբում է Դենշապուհու սպանումը)

Արտաւան

Ո՜հ, Դենշապուհ, Դենշապուհ, իմ սիրելի Դենշապուհ, եղար հաւատարիմ աստիճանիդ, հաւատարիմ կոչմանդ, դու՝ քո հերոսական մահովը՝ արևափայլ ճառագայթներով լուսապայծառ անմահ ապրելու արձան կանգնեցրիր քեզ համար, ես այդ արձանի վերայ փորագրել տալու եմ «Դենշապուհ՝ պաշտպան իրաւունքի և արդարութեան. և զոհ ճշմարտախօսութեան»։

(Հաւատարիմ նախարարները պատերազմից դարձած ներկայանում են Թագաւորին)։

Նախարարներ

Ողջոյն քեզ արեգակնափայլ մեծ Թագաւոր։

Արտաւան

Ո՞ղջ եկիք, իմ հաւատարիմ նախարարներ, պատերազմից ինչ լուր ունիք՝ խօսեցէք։

Նախարարներ

Տէր Թագաւոր, ահա լրանում է տարին՝ ինչ որ շարունակ պատերազմում ենք, ամբողջ Պարսկաստանը սպանուածների արիւնովը ողողուել է, չկայ ընտանիք՝ որից մէկ կամ երկու և աւելի անդամ սպանուած չլինի, և չը կայ տուն՝ որի ճակատին մահը մի սև կնիք դրոշմած չը լինի։

Արտաւան

Իշխան նախարարներ, Պարսկաստանը երբոր լսեց, որ մի ծառայ վեր է կացել իրանց Թագաւորի դէմ և կամենում է նորան գահիցը իջեցնել և ինքը նստել նորա տեղը, առանց սպասելու իմ հրամանին՝ իրանք իրանցից ոգևորուած պէտք է ոտքի կանգնէին և այս նախատինքը իրանց վերայիցը վերցնէին. սրակոտոր անելով թէ տիրանենգ ծառային և թէ դաւաճան և վատահոգի նախարարներին, բայց քանի որ իրանք այս վեհանձնական նախանձը չունեցան, մանաւանդ՝ որ այս վերջի պատերազմի ժամանակին էլ ինձանից մի հատուած զօրք անամօթաբար գնաց և միացաւ իմ տիրանենգ ծառային, այս բոլոր նախատինքը ես այլևս չեմ կարող տանել, ուստի վաղը կրկին մասնակցելու եմ պատերազմին. և վճռական որոշել եմ, որ բուռն քաջութեամբ կամ պատժեմ իմ անհաւատարիմ ծառայի լրբութիւնը և կամ հերոսական մահով ընկնիմ և վերջ տամ պատերազմին։

Նախարարներ

Զէ, մեծ Թագաւոր, բաւական է՝ որքան այս եղբայրասպան պատերազմի մէջ յոգնեցար, այժմ դու հանգիստ եղիր, մենք մեր բոլոր ուժովը կըպատերազմենք, դեռ մեզ՝ մեծ յոյս կայ յաղթութիւն ձեռք բերելու։

Արտաւան

Ո՜չ, ազնուասիրտ նախարարներ, վճիռս վճիռ է. անպատճառ պէտք է մասնակցեմ պատերազմին։

Նախարարներ

Մեծ Թագաւոր, եթէ հաստատ այդպէս էք վճռել, պատրաստ ենք և մենք՝ քեզ հետ ապրիլ և քեզ հետ մեռնիլ։

Արտաւան

Թագուհի, այսօր ես գնալու եմ պատերազմ. իսկ դու արթուն եղիր, և շրջահայեաց արթնութեամբ կառավարիր Թագաւորութիւնս մինչև վերադարձս։

Թագուհի

Արեգակնափայլ տէր Թագաւոր, արի այս մի անդամին էլ քո Թագուհուն պատուիր, մի գնար պատերազմ։

Արտաւան

Չէ՞ թագուհի, անպատճառ գնալու եմ պատերազմ, այս կէտումը մի՛ վշտանար, որ չեմ կատարելու քո խնդիրը։

Թագուհի

Արեգակնափայլ տէր թագաւոր. յիշիր աստղերի գուշակութիւնը, արի ինձ պատուիր աղաչում եմ քեզ, մի՛ գնար պատերազմ։

Արտաւան

Թագուհի, վճիռս անեղծանելի է, նժոյգս բերէք։

Ալսոռապետ

Մեծ թագաւոր, ահա նժոյգդ, միայն պէտք է սանձը փոքր ինչ թոյլ թողնել, այնուհետև արծուի պէս որ կողմը կամենաք՝ իսկոյն այն կողմը կըսլանայ։

Արտաւան

Մնաս բարեաւ, իմ սիրելի թագուհի։

Թագուհի

Վերադառնաս բարեաւ իմ սիրելի թագաւոր։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Պատերազմի երկու կողմի զօրքերը երբոր իրար հանդէպ կանգնած սպասում են։ Արտաւանը կանգնում է իւր կողմի զօրքի ճակատին. Արտաշիրը առաջ է գալի և բարձրաձայն ասում.

Նախարարներ

Մեծ թագաւոր, երկու կողմի զօրքերն ահա դէմ առ դէմ կանգնել են, մենք անցնենք մեր զօրքի ճակատը։

Արտաւան

Անցնինք։

Նախարարներ

Մեծ թագաւոր, տես, Արտաշիրը ահա առաջ է գալի։

Արտաւան

Թող առաջ գայ՝ լայնաբերան նիզակս կտայ նորան պատասխան։

Արտաշիր

Ո՜վ Արտաւան, ինչո՞ւ զուր տեղը զօրքդ կոտորել ես տալի, հնազանդիր ինձ, յիշիր այն գուշակութիւնը, ինչ որ պալատիդ դահլճումը խօսեցար քո թագուհու հետ, քո թագաւորութեանը կործանման համար։

Արտաւան

Ո՜հ. կինը ոբքան դառն է, Ներսեհ, շուտ հասիր պալատս և առանց խնայելու կտրիր թագուհուս գլուխը՝ և դարձիր։

(Արտաւանը՝ նիզակը նետում է Արտաշիրի վերայ)։

Արտաւան

Դու տիրանենգ Արտաշիր, ահա այս նիզակս թող վերջ տայ քո կեանքին։

(Արտաշիրը մի կողմն է փախչում, եւ յանկարծակի յետ է դառնում եւ Արտաւանին սպանում)։

Արտաշիր

Դու, ով դոռոզ թագաւոր, ահա այս կէտումն էլ գործեցիր սխալ, որովհետև առանց ստուգելու, որ յանցաւորը թագուհիդ չէր՝ այլ նաժիշտն էր. դու իսկոյն անմեղ թագուհուդ գլուխը կտրել տուիր, ահա այս սուրս էլ թող քո գլուխը կտրէ և վերջ տայ քո թագաւորութեանը և պատերազմին։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Դենպետը արքայական թագը դնում է Արտաշիրի գլուխը. և սուրը կապում է մէջքից, առաջ են գալի երկու կողմի նախարարներն և երդվում են հաւատարիմ լինել նոր թագաւորին։ Արտաշիրի դատաստանը։

Դենպետ

Ո՜վ մեծդ Որմիզդ, օրհնիր արքայական այս պանծալի թագը, թող սորանով վերջ լինի Արշակունի թագաւորութեան՝ և սկիզբն Սասանեան քաջազն թագաւորութեան, թող սորա առաջ խոնարհուին ոչ միայն Պարսիկները, այլ աշխարհի բոլոր ազգերն ու թագաւորներն։

(Թագը դնում է Արտաշիրի գլուխը, յետոյ սուրն է օրհնում եւ կապում մէջքիցը)։

Ո՜վ մեծդ Որմիզդ, օրհնիր մարդեղներին յատուկ այս սուրը որ միշտ կտրուկ և ջախջախող լինի թագաւորիս թշնամիների գլուխները։

Արտաշիրի համախոհ նախարարները

Թագաւոր, ինչպէս որ սկզբից քեզ հետ միացանք՝ այնպէս էլ մինչև մեր մահը՝ մնալու ենք քեզ հետ հավակամ քո կատարելու բոլոր գործքերին, ահա տեսնելով՝ որ այսօր մեր բազուկների ուժով հասել ես քո ցանկալի նպատակին. երդվում ենք, որ մինչև մեր կեանքի վերջին կէտն էլ քեզ հնազանդ և հաւատարիմ լինել, կեցցէ՛ մեր թագաւոր Արտաշիրը։

Արտաշիր

Սրտագին շնորհակալութիւնս յայտնում եմ ձեզ, մեծափառ Դենպետի հետ մտէք փառազարդ դահլիճը, որտեղ կսպասէք՝ որ ձեր վարձատրութիւնը ստանաք։

Արտաղուխտ

Նորապսակ թագաւոր, շնորհաւորում եմ քո թագաւորութիւնը, ուրախ եմ՝ որ հասար նպատակիդ և յոյս ունիմ՝ որ երդմանդ համաձայն ինձ կառնես քեզ կին և կդարձնես Պարսկաստանի թագուհի։

Արտաշիր

Արտաղուխտ. անբացատրելի սէրս և շնորհակալութիւնս յայտնում եմ քեզ՝ մտիր ծաղկազարդ դահլիճը։

Արտաւանի հաւատարիմ նախարարները

Արեգակնափայլ տէր թագաւոր, երբոր Արտաւան թագաւորը կենդանի էր, մենք մեր երդման համաձայն հաւատարիմ մնացինք նորան՝ մինչև նորա հերոսական մահը, այժմ քո մեծութիւնն է նորա արքայական դահը բարձրացել, մենք այժմ քեզ ենք ճանաչում մեզ թագաւոր և երդվում ենք, որ մինչև մեր վերջին շունչը քեզ հնազանդ և հաւատարիմ լինինք, ինչպէս եղանք Արտաւանին. կեցցէ՛ մեր թագաւոր Արտաշիրը։

Արտաշիր

Իշխան նախարարներ, դուք՝ արդարև ձեր երդման համաձայն հաւատարիմ մնացիք մեր Արտաւան մեծ թագաւորին՝ մինչև նորա դիւցազնական մահը. դուք՝ ձեր իսկական պարտքը ազնուութեամբ կատարեցիք և պարզերեսութեամբ եղաք հաւատարմութեան նախանձելի օրինակներ. անկեղծ սէրս յայտնում եմ ձեզ. և միայն ձեզ եմ ընդունում ինձ հաւատարիմ նախարարներ. հաւատում եմ, որ դուք՝ ինչպէս որ հաւատարիմ եղաք Արտաւանին՝ նոյնպէս էլ հաւատարիմ կլինիք ինձ. և այսօրուանից սկսած ձեզ եմ յանձնում տէրութեանս բոլոր գործքերը, վստահ եմ, որ կարող էք գերազանց խոհականութեամբ կառավարել և շնչասպառ Պարսկաստանին նոր շունչ և նոր ոգի տալ. մնացէք այստեղ՝ մինչև որ ձեր աչքով տեսնէք իմ արդարասիրութիւնը։

(Դառնալով սպասաւորին ասում է)

Պերոզամատ, Արտաղուխտին հրաւիրիր այստեղ։

(Արտաղուխտը հրճուանքով գալիս է)

Արտաղուխտ

Ողջոյն քեզ, նորապսակ թագաւոր։

Արտաշիր

Ողջ եկիր Արտաղուխտ, ես՝ իմ խոստման համաձայն կամենում եմ քեզ՝ ինձ համար կին առնել և քեզ դարձնել Պարսկաստանի թագուհի՝ քո ծառայութեանը համար, բայց երբ մըտածում եմ այս բանի վերայ՝ սիրտս պղտորվում է, որովհետև ես թէև նպատակ ունէի թագաւորիցը ազատամբիլ՝ բայց սիրտ չէի անում. երբեմն էլ, իմ և նախարարների միջի անհամաձայնութիւնը՝ ինձ բոլորովին յետ էր կանգնեցնում՝ իմ անվայելուչ խորհրդիցը և այնուհետև աւելի լաւ էի համարում թագաւորիս հաւատարիմ մնալ՝ քան ընկնիլ արիւնի ծովի մէջ և արիւնհեղութիւններով թագաւոր լինիլ։ Իսկ դու, դաւաճանեցիր թագուհուդ, մատնեցիր թագաւորիդ և ինձ գոգոելով մոլեգնեցիր, որ ահա քո մատնութեամբը թագուհին անմեղ տեղը սպանուեցաւ, թագաւորը հերոսական մահով ընկաւ, և Պարսկաստանը միլիոնից աւելի անմեղ մարդկանց արիւններով ողողուեցաւ. ահա այսքան չարեաց պատճառը դու եղար. և երբոր դու քո թագուհուն և թագաւորին չեղար հաւատարիմ՝ ինչպէս կարող ես ինձ հաւատարիմ կին լինել, դահիճ՝ սորան տար դուրս՝ կտրիր վիզը և իւր արիւնովը պսակիր գլուխը։

Պերոզամատ, Դենպետին հրաւիրիր այստեղ.

(Դենպետը նազաքայլ առաջ է գալի եւ ողջունում)։

Դենպետ

Ողջոյն քեզ արեգակնափայլ թագաւոր։

Արտաշիր

Ողջ եկիր մեծափառ Դենպետ, գիտեմ, որ դու մեր հոգեւոր Պետն ես, և մեզ բոլորիս դէպի արդար ճանապարհը առաջնորդողը՝ այն էլ դու ես, ուրեմն դու երբոր տեսար իմ փառասիրական մոլութեամբ պաշարուիլը՝ և թագաւորիցս ազատամբուիլը՝ դու քո կոչման պարտաւորութեանը համաձայն՝ ինչու ինձ չը սաստեցիր, չը խրատեցիր, և ինձ՝ իմ չար խորհրդիցը յետ չը կանգնեցրիր, այլ շուտով ինձ հետ միանալով՝ դարձար այսքան արիւնհեղութեան պատճառ. ոստիկանապետ, սորան շուտով հեռացրէք Մեղէթ, և այնտեղ մնայ ցմահ բանտարկուած, որ ապաշխարէ իւր մեծ սխալմունքը։

Պերոզամատ, հրաւիրիր այստեղ իմ հաւատարիմ նախարարներին։

Նախարարներ

Ողջոյն քեզ արեգակնափայլ թագաւոր։

Արտաշիր

Ողջ եկիք իշխան նախարարներ, դուք ինձ օգնող, իմ քաջարի զիւցազներ, չը գիտեմ՝ ձեզ ինչպէս վարձատրեմ և ինչ փառքի բարձրացնեմ, որովհետեւ ձեր աջակցութեամբ ես բարձրացայ Պարթեւաղն Արշակունիների փառապանծ գահը, բայց երբոր մտածում եմ այն՝ որ դուք չեղաք հաւատարիմ ձեր օրինաւոր թագաւորին՝ ինչպէս կարող եմ հաւատալ՝ որ դուք կլինիք ինձ հաւատարիմ. դահիճներ, կտրեցէք այս անհաւատարիմ դաւաճանների գլուխները. և սորանց գարշելի արիւնը խառնեցէք Արտաղուխտի արիւնի հետ, որ թագաւորութիւնս՝ նոյն իսկ առաջին օրից մաքրուի վատահոգի դաւաճաններից։

Պերոզամատ

Արեգակնափայլ մեծ թագաւոր Ներշապուհն եկել է։

Արտաշիր

Ներշապուհուն ներս հրաւիրիր։

Ներշապուհ

Ողջոյն քեզ արեգակնափայլ տէր թագաւոր. շնորհաւորում եմ քո մեծութեան թագաւորութիւնը, որ Պարսկաստանի փառքի համար լինի ամենայն ցանկալի յաջողութիւններով յարատեւ։

Արտաշիր

Ներշապուհ իշխան, քո շնորհաւորութեան փոխարէնը յայտնում շնորհակալութիւնս. և մի և նոյն ժամանակ հրամայում եմ, որ Արտաղուխտին թաղել Դենշապուհու շիրմի մօտ, երկուսի վերան էլ շքեղ քանդակով արձաններ կը կանգնեցնես. և վերանները փորագրել կտաս. Դենշապուհու արձանի վերայ այս խօսքերը «Դենշապուհ, հաւատարմութեան՝ նահատակ. ճշմարտախօսութեան՝ զոհ յաւիտենական պարծանք, պատիւ ոսկոռներիդ». իսկ Արտաղուխտի արձանի վերայ այս խոսքերը. «Արտաղուխտ. մատնիչ՝ թագաւորին. դաւաճան՝ թագուհուն. պատճառ՝ արիւնահեղութիւնների. թուք և սև մուր գարշելի ոսկոռներիդ։»

(Արձանները պատրաստելուց յետոյ։)

Ներշապուհ

Արեգակնափայլ տէր թագաւոր, հրամանիդ համաձայն արձանները պատրաստեցի, եթէ կհաճիք՝ կարող էք տեսնել։

Արտաշիր

Շատ լաւ պատրաստել ես, և լաւ էլ կանգնեցրել ես, պատի՛ւ ոսկոռներիդ Դենշապուհ. թուք և անարգանք ոսկոռներիդ Արտաղուխտ։»

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Գրիգոր Լուսաւորչի ծնունդը

Ժողով

Խոսրով մեծ

Հայկազունի իշխան նախարարներ, լսում եմ՝ որ Պարսկաստանը մեծամեծ խռովութիւնների մէջ տապակվում է, Սասանեան Արտաշիրը ապստամբուել է Արտաւան Արշակունի թագաւորից և կամենում է նորան գահից իջեցնել և ինքը նորա տեղը նստիլ թագաւոր, այս բանը Արտաշիրի կողմից մի ամենամեծ յանդգնութիւն է. այսպիսով աշխարհի ազգերի վերայ օրինադրուած բարեկարգութեան կարգը կը խանգարուի, ամեն մի թագաւորողի կեանքը՝ շարունակ կը լինի վտանգի մէջ, այլև արքունի թագը ձեռք բերելու համար՝ նախարարների մէջ ընդ միշտ խռովութիւն և անհաւատարմութիւն. այս կարգը չը խանգարելու և մանաւանդ իմ ազգական Արշակունի Արտաւան թագաւորին օգնելու համար՝ զօրքի պատրաստութիւն տեսէք, որ Ասորեստանի վերայով գնամ Պարսկաստան։

Արտաւազդ Մանդակունի

Մեծ թագաւոր, արդարացի է ձեր մեծութեան հրամայածները՝ պէտք է շուտով հանիլ և ջախջախել այն յանդուգն Արտաշիրի գլուխը, քանի որ իւր ոյժը չէ ամրացրել և վնասը չէ հասցրել գագաթնակէտին։

Խոսրով մեծ

Իշխան Մանդակունի, արդէն ժամանակ է, շտապիր գնա և գիտեցածիդ պէս տես ուժեղ պատրաստութիւն։

Մանդակունի

Մեծ թագաւոր, պատիւ ունիմ յայտնել ձեր մեծութեանը՝ որ զօրքը իւր ամբողջ կազմակերպութեամբ արդէն պատրաստ է։

Խոսրով մեծ (խրախուսում է զօրքին)

Քաջարի զօրապետներ և արիասիրտ զօրքեր, Պարսից Արտաւան թագաւորի դէմ վեր է կացել Արտաշիր Սասանեանը և կամենում է նորա տեղը ինքը թագաւորել, գնացէք պատժելու նորա անօրինակ յանդգնութիւնը, զօրացէք, քաջացէք և ձեր անպարտելի քաջութեամբ անխնայ կոտորեցէք և ձեռները զէնք ունեցողներին չը թողնէք կենդանի. սուր սրի մաշեցէք ձեր դէմ

դուրս եկողների վերայ։ Եւ բացի այս՝ այլև տալիս եմ ձեզ և այս իմ խստագոյն հրամանը այն է.պատերազմում վիրաւորուածի և գերի ընկածի կեանքը խնայեցէք, անզէններին և անմեղ բնակչութեանը՝ ոչ մէկին ձեռք չտաք, նոյնպէս շինութիւններին, անասուններին և ուտեստներին ամենևին ձեռք չտաք. իսկ ակնեղէն, ոսկեղէն, արծաթեղէն և բոլոր թանկարժէք հարստութիւնները արքունիքներից սկսած մինչև վերջինների բոլոր տները աւարի կառնէք. ահա այս է իմ հրամանը ուրեմն զօրացէք և աշխատեցէք փառքի յաղթանակով և մեծ աւարով վերադառնալ։

Զօրքեր

Մեծ թագաւոր, Հայի մեծագոյն պարծանքի համար՝ թող ձեր մեծութիւնը երկար ապրի, մենք ձեր ողևորութեամբ այժմ առիւծներ կվանենք, մենք սովոր ենք միշտ յաղթել և փառքի յաղթանակը պարզերես տանել, կեցցէ մեր մեծ թագաւորը կեցցէ, կեցցէ և միշտ կեցցէ։

(Պատերազմ)

Զօրապետ

Առիւծասիրտ զինուորներ, ժամանակն է առաջ անցէք, զարկեցէք, սպանեցէք, զօրացէք, ահա տարանք յաղթութիւնը, թող փախչին վախկոտ թշնամի զօրքերը՝ դուք յետևներիցը հասէք, զարկեցէք, սպանեցէք և բնաջինջ արէք և ձեռքը ղէնք ունեցողներից ոչ մէկին էլ կենդանի չթողնէք։

(Յաղթութիւնը տանելուց յետոյ)։

Զօրք

Քաջ զօրապետ, մեր դէմը դուրս եկող պարսկական զօրաբանակը՝ ամբողջովին բնաջինջ արինք, այժմ ինչ էք հրամայում պատրաստ ենք և դեռ այժմներս տեղն է։

Զօրապետ

Կեցցէք իմ քաջ զինուորներ, այժմ աւարը ժողովեցէք, որ հարուստ աւարով, ուրախ սրտերով և յաղթութեան դրօշակներով երևինք մեր թագաւոր Մեծ Խոսրովին.

(Զօրքը վերադառնալով պատերազմից ուզում է տեսնել թագաւորին)։

Մանդակունի

Մեծ թագաւոր, զօրքը մեծ յաղթութեամբ դարձել է և կամենում է ձեր մեծութեանը երեսը տեսնել։

(Խոսրովը դուրս է գալիս զօրքի առաջ)։

Զօրք

Մեծ թագաւոր, յաղթութիւնը տարանք կեցցէ, կեցցէ մեր թագաւորը։

Խոսրով Մեծ

Իմ քաջարի զօրք, դուք ամենդ էլ մի-մի հսկայ դիւցազներ էք, սրտագին շնորհակալութիւնս յայտնում եմ ձեզ, զօրացէք և միշտ արթուն կացէք։

(Դառնալով զօրապետին)։

Զօրապետ, ամբողջ աւարը բաշխեցէք այս իմ քաջասիրտ զօրքին և բոլորին հաւասար։

Զօրքը

Կեցցէ մեր առատասիրտ մեծ թագաւորը կեցցէ, կեցցէ, կեցցէ։

——— (Ասորեստանում)։

Օտայ Ամատունի

Մեծ թագաւոր, վստահանում եմ ձեր մեծութեանը յայտնել, որ Արտաշիրը՝ արդէն սպանել է Արտաւանին և ինքը նորա տեղը նստել է թագաւոր, այլև բոլոր նախարարները միացել են Արտաշիրի հետ՝ բացի Կարենեան Պարթևաղն ցեղից։

Խոսրով մեծ

Օտայ իշխան, ում պատմեց քեզ այդ սև լուրը։

Օտայ

Մեծ թագաւոր, այդ սև լուրը արդէն տարածուել է ամբողջ Ասորեստանում, որի ճշմարտութեանը՝ այլևս չկայ ոչ մի կասկած։

Խոսրով մեծ

Օտայ իշխան, այդ սև ու տխուր լուրը՝ սրտիս կենսական թելերին ուժգնապէս ազդեց, կանչիր այստեղ Հրահատ և Վիշապունի իշխաններին։

Օտայ

Մեծ թագաւոր, Հրահատ և Վիշապունի իշխաններն եկել են։

Խոսրով մեծ

Իշխաններին ներս հրաւիրիր։

Իշխաններ

Ողջոյն ձեր մեծութեանը մեծ թագաւոր, պատրաստ ենք ձեր հրամանը լսել։

Խոսրով մեծ

Պատուական իշխաններ, դուք երկուքդ իմիասին կգնաք

Պարսկաստան իմ կողմից պատգամաւորներ. իմ ազգական Պահլաւունիների մօտ և նորանց կասէք. Հայոց մեծաց Խոսրով Թագաւորն ասում է. «Հեռու կացէք, մի՛ հաւատաք Արտաշիրի խաբէական պատիւներին, նա այսօր նեղ վիճակի մէջ է՝ հարկիցն ստիպուած ձեզ մեծամեծ խոստումներով շողոքորթում է, իսկ երբոր բոլոր կասկածաւոր կողմերից իրան ապահովացնէ, այն ժամանակ իւր իսկական գոյնը՝ նոր ցոյց կտայ ձեզ. և ինքնաստեղծ յանցանքներով ձեզ բնաջինջ կանէ, խելքի եկէք խելքի, և քանի վաղ է միացէք իրար հետ. հեռացրէք գահից Արտաշիրին և Թագաւորեցրէք ձեր օրինաւոր Թագաւոր Արտաւանի որդիներից մէկին՝ որ Պարթևական իշխանութիւնը հաստատ մնայ Արշակունեաց ցեղի մէջ»։

Պատգամաւորներ

Մեծ Թագաւոր, պատրաստ ենք ձեր մեծութեան հրամանը կէտ առ կէտ ճշտութեամբ կատարել. և ահա ուղեւորվում ենք։

(Պատգամաւորները գնում են)։

(Խոսրովը նստած)։

Խոսրով

Իշխան Մանդակունի, այս հրդեհը՝ որ վառել է Արտաշիրը՝ մեծ և ահեղ ծաւալ է ստանալու. ուստի մինչև մեր պատգամաւորների դարձը՝ պէտք է տեսնէք համապատասխան ուժեղ և լիակատար պատրաստութիւն, որ ընդմիշտ պատերազմենք նորա հետ և անհանգիստ անենք նորա խաղաղութիւնը՝ մինչև որ նորան մի կերպ ձերբակալենք։

Մանդակունի

Մեծ Թագաւոր մեր ահռելի զօրքի կազմը՝ բոլոր կողմերից ամրապինդ պատրաստի ունենք և պատրաստ ենք պատերազմելու. մենք չենք վախենում ոչ եօթնագլուխ վիշապներից և ոչ ահեղագոչ առիւծներից, մեզ աշխարհիս ոչ մի ոյժ չէ կարող ահաբեկել. մեզ կարող է ընկճել միմիայն բարեկամների դաւաղրութիւնը. որովհետև, որտեղ ոյժը թուլանում է՝ այնտեղ դաւաղրութիւնը զօրանում է. ուստի մենք միշտ ի նկատի ունենալով դաւաղրութիւնը՝ պէտք է արթուն և կասկածաւոր աչքով հեռուն նկատող լինինք և այնպէս յոխորտանքով յառաջ ընթանանք և անվներ քաջութեամբ պատերազմենք։

Սպասաւոր

Մեծ Թագաւոր, պատգամաւորներն դարձել են։

Խոսրով մեծ

Ուրեմն նորանց ներս հրաւիրէ։

Սպասաւոր

Իշխաններ, պատիւ ունիմ յայտնել ձեզ, որ կարող էք ներկայանալ մեր մեծ Թագաւորին։

Խոսրով մեծ

Իշխաններ, խօսեցէք, ձեր պատգամաւորութիւնը՝ ի՞նչ հետևանք ունեցաւ։

Պատգամաւորներ

Մեծ Թագաւոր, գնացինք Պարսկաստան. Պահլաւներին ժողովեցինք. ձեր մեծութեան պատգամը կէտ առ կէտ խօսեցինք, ամեն միջոց գործ դրինք համոզել նորանց, բայց ոչ մի կերպով հնարաւորութիւն չեղաւ նորանց խելքի բերել և բան հասկացնել. նորանք՝ բոլոր Պարթևները միաձայն ասացին «Մեծ Թագաւոր Խոսրովին ասացէք, դու հանգիստ եղի՛ր, մեր Թագաւոր Սասանեան Արտաշիրը՝ մեր կեանքը, մեր գոյքը, մեր պատիւ և աստիճանը հաստատուն կերպով ապահովացրել է, մենք՝ եթէ կարողանանք էլ՝ բայց չենք կամենալ Արտաշիրին թողնել և Արտաւանի որդիներից մէկին դնել Թագաւոր, այն էլ միայն նորա համար՝ որ նորանք օրինաւոր Թագաւորի որդիներ են և մեր ազգական. չէ, մենք ազգական չենք ճանաչում, մենք օգտակար ճանաչում ենք Արտաշիրին, մենք սորան չենք թողնիլ, սորան աւելի ենք գերադասում՝ քան Արտաւանի որդիներից մէկին, այս է մեր հաստատ կամքը և անեղծանելի վճիռը։»

Խոսրով մեծ

Պարթևները թող անհեռատեսութեամբ հաստատ մնան իրանց վճռին, յետոյ շուտով կտեսնեն իրանց անխոհեմութեամբ կորցրած մեծագոյն և անդառնալի կորուստը, կղզեան՝ բայց անօգուտ։

Պատգամաւորներ

Մեծ Թագաւոր, զղջալը՝ անպատճառ զղջալու են, որովհետև իրանց մէջն արդէն երևում էր հակառակութիւն։

Խոսրով մեծ *(դառնալով Նախարարներին)*

Իշխան նախարարներ, ահա լրանում է երկու տարին՝ ինչ որ այս կողմերումը նստած պատգամաւորներ պատգամաւորների յետևից ուղարկեցի խելքի բերելու իմ ազգական պարթևաղն Պահլաւներին՝ բայց հնար չեղաւ. որքան յիշեցրի՝ որ սթափուին իրանց ազգամոլ թմրութիւններից՝ որ յետոյ չը

զղջան և չըզրկուին Պարթևական իշխանութիւնից, բայց հնար չեղաւ. քանի՞ քանիցս սոսկալի արիւնհեղութիւններով հալածեցի Արտաշիրին, Պահլաւները դարձեալ խելքի չեկան. այժմ դառնում եմ Հայաստան՝ ոչ այնքան տարած մեծամեծ յաղթութեանցս վերայ՝ որքան տրտում, Պարսկաստանից իմ ազգական Արշակունիների իշխանութեան վերջաւորութեան վերայ։

Սպասաւոր

Մեծ թագաւոր, նոր պատգամաւորներ են եկել Պարսկաստանից։

Խոսրով մեծ

Պատգամաւորներին ներս հրաւիրեր։

Պատգամաւորներ

Ողջոյն քեզ մեծ թագաւոր։

Խոսրով մեծ

Ողջ եկիք իշխաններ, խօսեցէք՝ ինչ ունիք։

Պատգամաւորներ

Մեծ թագաւոր, Պարսկաստանից ենք գալի և աւետում քեզ, որովհետև Կարինեան Պահլաւունիներն իրանց Վեհսաճան նահապետովը Արտաշիրին չընդունեցան և ահա գալիս են քեզ մօտ. իսկ մեզ պատգամաւորներ ուղարկեցին։

Խոսրով մեծ

Արդ՝ ձեր աւետիքը՝ ինձ վերայ մեծ ուրախութիւն աղդեց, կեցցեն Կարենեան Պահլաւները, նորանք թագաւորութեանս մէջ՝ առաջի տեղը կունենան, կլինին ինձ խորհրդակից. սեղանակից և թև ու թիկունք

Օտայ

Մեծ թագաւոր, յակամայիցս հարկադրուած եմ՝ առաւօտեան ուրախացուցիչ աւետեաց փոխարէնը՝ այժմ տխրեցուցիչ բօթ դուժել ձեր մեծութեանը. որովհետև Արտաշիրը լսելով Կարենեանների փախուստը՝ կատաղի զօրքով վերայ է հասնում և նորանց բոլոր արուներին սրակոտոր սպանում, բացի Վեհսաճանի որդի Պերոզամատից. որ Բուրդ անունով մի Պարսիկ իշխան՝ որ վեհսաճանի տանը շատ մօտ բարեկամ էր՝ յափշտակելով տղային փախցրեց Արեաց աշխարհը. և բացի սորանից, Արտաշիրը խիստ շատ զօրք է ժողովում, որ ոչ միայն ձեր մեծութեանը դէմ՝ այլև Հռոմէացւոց և մինչև անգամ սպառնում է տիրապետել և այն բոլոր տեղերին՝ որոնց տիրել էին Կիւրոսի յաջորդ Պարսից նախնի թագաւորները։

Խոսրով մեծ

Օտայ իշխան, փառամոլութիւնը՝ Արտաշիրին հասցրել է ցնորման վիճակի, ինչ և իցէ՝ թող մտածէ մինչև անգամ աշխարհակալութեան, բայց ես թեթև չեմ նստեցնել Կարենեան Պահլաւների արուների կոտորելը, կրկին կարշաւեմ Պարսկաստան՝ որ այժմ սև թագ դնեմ Արտաշիրի գլխին և արիւնով ներկեմ նորա երազած աշխարհակալութիւնը, սպասաւոր այստեղ հրաւիրիր մեծ սպարապետին և ընդհանուր զօրաց հրամանատարին։

Մեծ սպարապետ և հրամանատար

Ողջոյն ձեր մեծութեանը մեծ թագաւոր։

Խոսրով մեծ

Ողջ եկիք մեծ իշխաններ. նստեցէք։

Մեծ իշխաններ

Մեծ թագաւոր, հրամայեցէք, պատրաստ ենք լսելու ձեր մեծութեան հրամանը։

Խոսրով մեծ

Մեծ իշխաններ, հրաման արձակեցէք թագաւորութեանս բոլոր աշխարհները, և բոլոր կողմերից ժողովեցէք կորիչ երիտասարդներից անթիւ ու անհաշիւ զօրք, որովհետև ահեղ զօրաբանակներով դիմելու եմ Պարսկաստան. այս անգամ ոչ միայն Արտաւանի՝ այլև Կարենեան Պահլաւների կոտորելու վրէժն առնել Արտաշիրից և Պարսկաստանը ողողել արիւնհեղութեամբ։

Մեծ իշխաններ

Մեծ թագաւոր, այդ բանը մենք ի վաղուց գիտէինք, և այդ իսկ պատճառաւ զօրքը և զօրքի բոլոր կազմը պատրաստել ենք, միմիայն սպասում ենք ձեր մեծութեան հրամանը լսելու։

Խոսրով մեծ

Մեծ իշխաններ, որովհետև դուք՝ ձեր վերին աստիճանի պարտաճանաչութեամբ վաղօրօք տեսել էք պատերազմի պատրաստութիւնը, ուրեմն կեցցէք, ես ևս պատրաստ եմ, երթանք պատերազմ, երթանք բոլորս էլ սրտով՝ բոլորս էլ ուրախ։

(Պատերազմ)

Խոսրով մեծ

Զօրք և զօրապետներ, աչքներդ ուղղեցէք իմ վերայ. տեսէք՝ ինչպէս որ ես իմ երկսայրի սրովս գերանդու նման կը հնձեմ Պարսկական գլուխները՝ դուք էլ քաջացէք և ինձ հետևեցէք, որոնեցէք Արտաշիրին և ջախջախեցէք նորա գլուխը։

Զօրապետ

Մեծ թագաւոր, ահա այժմ պատերազմի թունդ ժամանակին, ես տեսայ՝ որ Արտաշիրը փախչում էր, մեր զինուորներից քաջերին հրամայեցի՝ որ նորա յետևից ընկնին և նորանք կայծակի պէս ընկան յետեւից և անյայտացան։

(Արտաշիրին հալածող զինուորները յետ են դառնում)։

Զինուորներ

Մեծ թագաւոր. Արտաշիրին հալածեցինք մինչեւ Հնդկաստանի խորքերը՝ նա այնտեղ կիրճերի մէջ մտնելով անյայտացաւ։

Խոսրով մեծ

Մեծ սպարապետ, երբոր Արտաշիրին փախցրիք և Պարսկաստանիցը դուրս վռնդեցիք դէպի Հնդկաստանի խորքերը, ուրեմն դադարեցրէք պատերազմը. սկսեցէք ժողովել թագաւորական պալատի դանձերը, ակնեղէնները, ոսկեղէնները, արծաթեղէնները և բոլոր թանկագին իրեղէնները և բոլոր հարստութիւնները լցրէք առանձին առանձին արկղների մէջ և բարձեցէք կառքերի և սայլերի վերայ, այլ և բեռնաւորեցէք ուղտերը, ձիերը և բոլոր գրաստները, որ այսպէս լի ու ճոխ աւարով և ուրախ սրտով դառնանք Հայաստան։

Մեծ սպարապետ (վերադառնում է եւ ասում)

Մեծ թագաւոր, մենք եւ մեր զօրքը՝ մեր բոլոր աւարների բեռներովը արդէն պատրաստ ենք։

Խոսրով մեծ

Եթէ պատրաստ էք, ուրեմն ընկնինք ճանապարհ դառնանք դէպի Հայաստան։

Վաղարշապատեցիք (դիմաւորելով)

Ահա մեր թագաւորն իւր զօրքովը եւ մեծ աւարով դալիս է, կեցցէ մեր մեծ թագաւորը, կեցցեն մեր քաջ զօրապետներն եւ զօրքը, որ մեծ յաղթութեամբ վերադառնում են եւ փառք են բերում Հայաստանին ու պարծանք՝ Հայերիս։

Խոսրով մեծ

Փառք մեր աստուածներին, որ մեզ տուին մեծ յաղթութիւն, կեցցէ մեր թագաւորութիւնը, կեցցէ եւ մեր Հայ ժողովուրդը։

Ժողովուրդը

Կեցցէ մեր մեծ թագաւոր Խոսրովը կեցցէ, կեցցէ եւ միշտ կեցցէ։

Խոսրով մեծ

Իշխան Մանդակունի, մեր ատենադպրին դրել տուր հրովարտակներ եւ ուղարկիր թագաւորութեանս բոլոր կառավարչապետներին՝ այն բանի համար, որ մենք մեր աստուածների՝ մանաւանդ հրաշագեղ Անահիտի օգնութեամբ՝ Պարսկաստանը աւերելով տիրապետ Արտաշիրին փախցրինք մինչև Հնդկաստան. և այժմ՝ որ թանկագին և ճոխ աւարով, այլև մեծ յաղթութեամբ դարձել ենք մեր հայրենիքը Հայաստան. ուստի մեր բոլոր հաստատութիւնները պէտք է սրտագին շնորհակալութեամբ մեր կուռքերին ընծայ տանին սպիտակ ցուլեր, սպիտակ այծեր, սպիտակ ձիեր և սպիտակ ջորիներ զարդարուած ոսկեղէն և արծաթեղէն զարդերով և թանկագին ակներով. այլ և բոլոր աւարի հինգերորդ մասը՝ մեծամեծ պարգևներով կբաշխէք մեր քուրմերին՝ և բացի այս ամենից, խիստ շատ առատ պարգևներ կտաք զօրքին և կարձակէք, որ կարողանան հանգիստ շունչ առնել և ի հարկին պատրաստ լինին պատերազմի։ Իշխան, ինչպէս որ մեր աստուածները մեզ մեծ յաղթութիւն տալով մեզ ուրախացրին, նոյնպէս էլ մենք պէտք է ուրախացնենք իրանց և իրանց քուրմերի և բոլորի սրտերը, ուստի գնա և հրամանս ճշտութեամբ կատարիր։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

(Սասանեան Արտաշիրի ժողովը)

Արտաշիր

Թագաւորներ, կուսակալներ, նախարարներ, զօրավարներ, մեծեր և իշխաններ. դուք՝ որ կազմում էք Պարսկական թագաւորութեան ոյժն ու փառքը, ես ձեզ բոլորիդ ժողովել եմ այստեղ՝ այն դիտաւորութեամբ, որ ձեզ յայտնեմ իմ նպատակը. արդ՝ ես Հնդկաստանից նոր եմ դարձել, չեմ կամենում հանգիստ մնալ, ժամանակը թանկագին է, աղաչում եմ ձեզ. Պարսկական մեծ թագաւորութիւնը՝ մեծ և ամենամեծ վտանգի մէջ է, որովհետև քանի որ Հայոց մեծաց Խոսրով մեծ թագաւորը կենդանի է, մենք չենք ունենալ հանգստութիւն և չենք կարող նորան պատերազմով յաղթել. պէտք է նորան խաբէութեամբ որոգայթի մէջ ձգել և այնպէս սպանել, աղաչում եմ ձեզ, մի հնար մտածեցէք և ով որ ձեզանից յանձն առնէ այս մեծ գործը կատարելու, նորան կտամ ոչ միայն մեծամեծ պարգևներ՝ այլև նորան կնստեցնեմ իմ տէրութեան երկրորդ գահը, ես միայն աթոռով կլինիմ բարձր։

Անակ

Արեգակնավայել տէր թագաւոր, քեզ քաջ յայտնի է՝ որ ես թէև Պարթևների տէրութեան գլխաւոր նահապետն եմ, սա-

կայն յանձն եմ առնում վրէժխնդիր լինիլ իմ ազգական Խոսրով մեծին. և խարէական միջոցով նորան սպանել. դու այս կողմից հանգիստ եղիր։

Արտաշիր

Անակ իշխան, եթէ այդ վրէժխնդրութիւնը անկեղծութեամբ կատարես՝ ձեր Պարթևական սեպհական Պահլաւը և բնակութիւնը ձեզ կդարձնեմ. քո գլխին թագ կդնեմ, քեզ կը փառաւորեցնեմ իմ թագաւորութեան մէջ, քեզ երևելի և փառաւոր կանեմ և իմ երկրորդը կդարձնեմ։

Անակ

Արեգակնափայլ տէր թագաւոր, դու իմ ազգի ճնացորդին այստեղ կպահես, իսկ ես և իմ հարազատ եղբայրը՝ մեր ընտանիքովը, կնիկներովը, որդիներովը, բոլոր ծառաներովը և աղախիներովը այսօր քեզանից ապստամբած կփախչինք Հայոց մեծաց աշխարհը, այնտեղ ես իմ կազմած խաղը՝ յուսով եմ յաջող խաղալ։

Արտաշիր

Անակ իշխան. գնա և դիւցազներին յատուկ հերոսութեամբ կատարիր խոստումդ, մեծ Որմիզդը լինի քեզ օգնական։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Մանդակունի

Մեծ թագաւոր, ձեր մեծութեան ազգական Պարթեւաղն Սուրէնեան Պահլաւունի Անակ նահապետը և իւր եղբայրը իրանց բոլոր ընտանիքովը եկել են և կամենում են ներկայանալ ձեզ։

Խոսրով մեծ

Մեծ իշխան, Անակին և իւր եղբօրը ներս հրաւիրիր։

Անակ

Ողջոյն քեզ, մեծ թագաւոր։

Խոսրով մեծ

Բարի եկիք Անակ մեծ իշխան, ինչ, և ո՞ր հարկն է ձեզ ստիպել՝ որ եկել էք Հայաստան, այսու ամենայնիւ մեծ ուրախութիւն զգացի ձեզ տեսնելով։

Անակ

Մեծ թագաւոր, տեսնելով՝ որ Արտաշիրը իւր խրոխտ յանդգնութեամբ մեր ազգական Արտաւանին սպանելով վերջ տուաւ Արշակունի թագաւորութեանը. և նորա տեղը ինքը նստեց թագաւոր, և այնուհետեւ սկսաւ կոտորել Կարենեան Պահլաւունիներին. և մեզ վերայ էլ խորթ աչքով էր նայում.

ուստի բարւոք համարեցինք օր առաջ՝ քանի որ նորա սուրը մեզ վերայ չէր թեքուել՝ փախչիլ և գալ Հայաստան. և որովհետեւ լսեցինք, որ դու գտնվում ես Հայոց մեծաց թագաւորների ձմեռայնոց Ուտի գաւառի Խաղխաղ քաղաքում. ուստի մենք դիմեցինք այստեղ, որ մեր բազուկի ոյժը նուիրենք քեզ, որ միացեալ ուժով դուրս գանք Արտաշիրի դէմ և յախուռն վրէժխնդրութեամբ նորա գլխին սև թագ դնենք և այնպէս լուծենք Արտաւանի և Պարթևական ազգի վրէժը։

Խոսրով մեծ

Անակ իշխան, տեսնում եմ՝ որ դուք եկել էք ձեր ընտանիքով. հաւատում եմ ձեր անկեղծութեանը. և սորա համար մեր թագաւորական օրէնքի համաձայն տալիս եմ ձեզ այն պատիւը՝ որ յատուկ է Պարթևական մեծ տոհմին և աստիճանին, ուստի նստեցնում եմ ձեզ իմ թագաւորութեան երկրորդ աթոռում, և որովհետև ժամանակը ձմեռային է, այս պատճառով այս ցուրտ և հողմաշունչ սառնամանի օրերը՝ այստեղ ուրախութեամբ անցնենք, մանաւանդ՝ որ դուք ճանապարհին բաւականի նեղութիւն կրած կլինիք՝ ձեզ հարկաւոր է հանգստութիւն։

Անակ

Մեծ թագաւոր, ճանապարհները շատ յաջողակ էր, մենք մեր սեպհական Պահլաւիցը դուրս եկանք Մարգաց ամսի 25 ին, (յուլիսի մէկին) և ապահով հասանք Արտազ, այդտեղ մնացինք մի քանի օր, մի գիշեր՝ մի զարմանալի երազ տեսայ, որպէս թէ՝ ես կանգնած՝ նայում էի դէպի Մասիս սարը, և յանկարծ տեսայ՝ մեր պառկած տեղի գերեզմանիցը մի բոցավառ լոյս ճառագայթեց և մօտիս քնած կնոջս վերայ կամարակապ կանգնեց, և սկսաւ աւելի բոցավառիլ, այդ լուսովը՝ մութ գիշերը ցերեկուայ նման լուսաւորուեցաւ և լոյսն սկսաւ աւելի հեռաւոր տեղերը լուսաւորել, ես այս տեսածիցս վախենալով՝ վեր թռայ և տեսայ՝ որ կինս հանգիստ քնում է. առաւօտուն տեղացիներից իմացայ՝ որ այն գերեզմանը Թադէոս առաքեալ անունով մի քրմապետի դամբարան է եղել, և այնուհետև այլևս այնտեղ չմնացինք, այլ ճանապարհները զանազան տեղերում հանգիստ առնելով շարունակեցինք։

Խոսրով մեծ

Անակ իշխան, երբոր դու հաւատարմութեամբ չուել ես Հայաստան քո Պարթևաղն ազգականի մօտ, հարկաւ մեր մեծ Արամազդը քեզ չի թողնել առանց վարձատրութեան՝ բայց պէտք է երազագէտ հրաւիրել։

կայն յանձն եմ առնում վրէժխնդիր լինել իմ ազգական Խոսրով մեծին. և խաբէական միջոցով նորան սպանել. դու այս կողմից հանգիստ եղիր։

Արտաշիր

Անակ իշխան, եթէ այդ վրէժխնդրութիւնը անկեղծութեամբ կատարես՝ ձեր Պարթևական սեպհական Պահլաւը և բնակութիւնը ձեզ կդարձնեմ. քո գլխին թագ կդնեմ, քեզ կը փառաւորեցնեմ իմ թագաւորութեան մէջ, քեզ երևելի և փառաւոր կանեմ և իմ երկրորդը կդարձնեմ։

Անակ

Արեգակնափայլ տէր թագաւոր, դու իմ ազգի մնացորդին այստեղ կպահես, իսկ ես և իմ հարազատ եղբայրը՝ մեր ընտանիքովը, կնիկներովը, որդիներովը, բոլոր ծառաներովը և աղախիններովը այսօր քեզանից ապստամբած կվախչինք Հայոց մեծաց աշխարհը, այնտեղ ես իմ կազմած խաղը՝ յուսով եմ յաջող խաղալ։

Արտաշիր

Անակ իշխան. գնա և դիւցազներին յատուկ հերոսութեամբ կատարիր խոստումդ, մեծ Որմիզդը լինի քեզ օգնական։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Մանդակունի

Մեծ թագաւոր, ձեր մեծութեան ազգական Պարթեւաղն Սուրէնեան Պահլաւունի Անակ նահապետը և իւր եղբայրը իրանց բոլոր ընտանիքովը եկել են և կամենում են ներկայանալ ձեզ։

Խոսրով մեծ

Մեծ իշխան, Անակին և իւր եղբօրը ներս հրաւիրիր։

Անակ

Ողջոյն քեզ, մեծ թագաւոր։

Խոսրով մեծ

Բարի եկիք Անակ մեծ իշխան, ինչ, և ո՞ր հարկն է ձեզ ստիպել՝ որ եկել էք Հայաստան, այսու ամենայնիւ մեծ ուրախութիւն զգացի ձեզ տեսնելով։

Անակ

Մեծ թագաւոր, տեսնելով՝ որ Արտաշիրը իւր խրոխտ յանդգնութեամբ մեր ազգական Արտաւանին սպանելով վերջ տուաւ Արշակունի թագաւորութեանը. և նորա տեղը ինքը նստեց թագաւոր, և այնուհետեւ սկսաւ կոտորել Կարենեան Պահլաւունիներին. և մեզ վերայ էլ խորթ աչքով էր նայում.

ուստի բարւոք համարեցինք օր առաջ՝ քանի որ նորա սուրը մեզ վերայ չէր թեքուել՝ փախչիլ և գալ Հայաստան. և որովհետեւ լսեցինք, որ դու գտնվում ես Հայոց մեծաց թագաւորների ձմեռայնոց Ուտի գաւառի Խաղխաղ քաղաքում, ուստի մենք դիմեցինք այստեղ, որ մեր բազուկի ոյժը նուիրենք քեզ, որ միացեալ ուժով դուրս գանք Արտաշիրի դէմ և յախուռն վրէժխնդրութեամբ նորա գլխին սև թագ դնենք և այնպէս լուծենք Արտաւանի և Պարթևական ազգի վրէժը։

Խոսրով մեծ

Անակ իշխան, տեսնում եմ՝ որ դուք եկել էք ձեր ընտանիքով. հաւատում եմ ձեր անկեղծութեանը. և սորա համար մեր թագաւորական օրէնքի համաձայն տալիս եմ ձեզ այն պատիւը՝ որ յատուկ է Պարթևական մեծ տոհմին և աստիճանին, ուստի նստեցնում եմ ձեզ իմ թագաւորութեան երկրորդ աթոռում, և որովհետև ժամանակը ձմեռային է, այս պատճառով այս ցուրտ և հողմաշունչ սառնամանի օրերը՝ այստեղ ուրախութեամբ անցնենք, մանաւանդ՝ որ դուք ճանապարհին բաւականի նեղութիւն կրած կլինիք՝ ձեզ հարկաւոր է հանգստութիւն։

Անակ

Մեծ թագաւոր, ճանապարհներս շատ յաջողակ էր, մենք մեր սեպհական Պահլաւիցը դուրս եկանք Մարգաց ամսի 25 ին, (յուլիսի մէկին) և ապահով հասանք Արտազ, այդտեղ մնացինք մի քանի օր, մի գիշեր՝ մի զարմանալի երազ տեսայ, որպէս թէ՝ ես կանգնած՝ նայում էի դէպի Մասիս սարը, և յանկարծ տեսայ՝ մեր պառկած տեղի գերեզմանիցը մի բոցավառ լոյս ճառագայթեց և մօտիս քնած կնոջս վերայ կամարակապ կանգնեց, և սկսաւ աւելի բոցավառիլ, այդ լուսովը՝ մութ գիշերը ցերեկուայ նման լուսաւորուեցաւ և լոյսն սկսաւ աւելի հեռաւոր տեղերը լուսաւորել, ես այս տեսածիցս վախենալով՝ վեր թռայ և տեսայ՝ որ կինս հանգիստ քնում է. առաւօտուն տեղացիներից իմացայ՝ որ այն գերեզմանը Թաղէոս առաքեալ անունով մի քրմապետի դամբարան է եղել, և այնուհետև այլևս այնտեղ չմնացինք, այլ ճանապարհներս զանազան տեղերում հանգիստ առնելով շարունակեցինք։

Խոսրով մեծ

Անակ իշխան, երբոր դու հաւատարմութեամբ չուել ես Հայաստան քո Պարթևաղն ազգականի մօտ, հարկաւ մեր մեծ Արամազդը քեզ չի թողնել առանց վարձատրութեան՝ բայց պէտք է երազագէտ հրաւիրել։

Օտայ

Մեծ Թագաւոր, երազացոյց Տիւր դից Որմզդական մեհեանի քրմապետն այստեղ է, եթէ ձեր մեծութիւնը հրամայէ՝ նորան ներս կը հրաւիրեմ, որ երազը մեկնէ։

Խոսրով մեծ

Հրաւիրիր։

Քրմապետ

Ողջոյն քեզ մեծ Թագաւոր։

Խոսրով մեծ

Ողջ եկիր սուրբ քրմապետ։

Քրմապետ

Մեծ Թագաւոր, հրամայիր՝ պատրաստ եմ հրամանդ լսելու։

Խոսրով մեծ

Անակ իշխանը երազ է տեսել, կարող ես նորա երազը մեկնել։

Քրմապետ

Երազացոյց Տիւր Դից դպրութիւնը սովորել եմ, հարկաւ կարող եմ մեկնել երազը՝ թող Անակ իշխանը պատմէ տեսածը։

Անակ

Երազումս տեսայ կինս մօտիս քնած՝ մեր պառկած տեղի գերեզմանից լոյս ճառագայթեց և կնոջս վերայ կամարակապ կանգնեց. և սկսաւ աւելի բոցավառիլ, որի լուսովը մութ գիշերը արևի լոյսից աւելի բոցավառուեց և սկսաւ հեռաւոր տեղերը լուսաւորել։

Քրմապետ

Անակ իշխան, երազիդ մեկնութիւնն այս է, այն տեղը՝ որտեղ կինդ քնել էր՝ ուղիղ նա մի մեծ և սուրբ քրմապետի գերեզման է, լոյսը՝ նորա շնորհքն է որ ցողել է յդի կնոջդ արգանդի տղայի վերայ. իսկ այդ տղան՝ ծնուելուց յետոյ կլինի ժամանակին մի շնորհալի և շատ իմաստուն քրմապետ. նա՝ իւր շնորհալի գիտութիւնը տարածելու է ամբողջ Հայաստան աշխարհը և լուսաւորելու է մեր մեծ Արամազդի լուսաւոր գիտութեամբ բոլոր Հայերի խաւար մտքերը։

Անակ

Մեծ Թագաւոր, խորին յարգանքով յայտնում եմ շնորհակալութիւնս՝ որ հոգացիք երազիս մեկնութեան համար. նոյնպէս յայտնում եմ քեզ՝ քրմապետ հայր՝ որ երազս ճշտութեամբ մեկնեցիր. ուստի ընդունիր ինձանից՝ այս իմ Պարթեւական ընծան։

Քրմապետ

Օրհնեալ լինի մեր մեծ Թագաւորը, օրհնեալ լինիս և դու Անակ մեծ իշխան, յայտնում եմ շնորհակալութիւնս ձեր պարգեւի մասին, այլև յայտնում եմ ձեզ, այն՝ որ գիտենաք. երազագիտութեան այս մեծ իմաստութիւնը տուել է ինձ Տիւր աստուածը՝ որի երազացոյց մեհեանը գտնվում է Վաղարշապատից ոչ հեռու դէպի արևելք։

Օտայ

Մեծ Թագաւոր, արդէն ուշ ենք դրել գարնան շէմքին, օրերն սկսել են տաքանալ և երկարիլ, ձեր մեծութիւնը արդեօք չի՞ հաճի հրամայել, որ պատրաստութիւն տեսնենք վերադառնալու մեր ամառայնոց արքայանիստ մայրաքաղաք Վաղարշապատը։

Խոսրով մեծ

Օտայ իշխան, շատ լաւ արի՞՝ որ ինձ յիշեցրիր. արդարև ժամանակ է վերադառնալու։ ուստի հրամայում եմ քեզ՝ որ հայկական ճաշակին յատուկ պատրաստութիւն տեսնես՝ որ վաղն և եթ մեր շքախմբովը վերադառնանք։

Օտայ

Մեծ Թագաւոր, վերադառնալու համար՝ տեսած եմ հարկ եղած շքեղագոյն պատրաստութիւն։

Խոսրով մեծ

Ուրեմն վերադառնանք։ (Վերադառնում են)։

Օտայ

Ահա Վաղարշապատն երեւաց։

Անակ

Արարատեան աշխարհը՝ այս ՞րքան գեղեցիկ է, իսկ Արարատ լեռը՝ կարծես թէ ինչպէս մի պատկառելի թագուհի բազմած է Արարատեան դրախտի ճակատին՝ և ինչպէս մի թանկագին գոհար՝ ժատանիի գլխին, հաւատում եմ՝ որ դա կլինի մեր մեծ Որմզդի լուսապայծառ սուրբ գահը։

Խոսրով մեծ

Զէ՞ Անակ իշխան, այս դրախտավայր դաշտը և մեր պատկառելի Արարատը՝ մեր չքնաղագեղ Անահիտ աստուածուհու բազմելու գահն է։

Անակ

Մեծ Թագաւոր, թէ այսպէս և թէ այնպէս, Արարատեան աշխարհը դրախտ է. և դուք երջանիկ էք, որ այսպիսի սքանչելի դրախտի մէջ ապրում էք։

Խոսրով մեծ (Վաղարշապատում)

Անակ իշխան, ահա մեր արքայանիստ Վաղարշապատը,

ահա և մեր արքունի պալատը, որի մէջ մեզ հետ շատ ուրախ ապրելու էք, արդեօք հաւանում ես։

Անակ

Մեծ թագաւոր, մեզ համար մեծ փառք կհամարինք՝ որ ձեր մեծութեան անունով այս հրաշալի քաղաքի յետին տանը բնակիլ, ուր ինամ՝ որ այս հրաշակերտ հոյակապ պալատումը, այն էլ ձեր մեծութեան հետ։

Օտայ

Մեծ թագաւոր, Սոփիա անունով մանկաբարձը՝ յայտնեց ինձ՝ որ աւետիս տամ Անակ իշխանին, որովհետև Ոգոհէ իշխանուհին յաջողութեամբ ծնաւ մի արու զաւակ։

Խոսրով մեծ

Անակ իշխան, սրտագին ուրախութեամբ աւետում եմ քեզ՝ որ պալատս մուտ գործելու նոյն իսկ առաջին օրերումը Ոգոհէ իշխանուհիդ ծնաւ քեզ համար մի արու զաւակ, սա բարի և խորհրդաւոր նշան է քեզ և քո Պարթևաղն տոհմին։

Անակ

Մեծ թագաւոր, կրկին ու կրկին իմ անձնանուէր երախտագիտութիւնը և սրտագին շնորհակալութիւնը ուրախ սրտով յայտնում եմ քո աշխարհահռչակ Պարթևական մեծութեանը։

Խոսրով մեծ

Մանդակունի մեծ իշխան, տաղտկացանք երկար ժամանակ հանգիստ նստելուց, պատուիրիր զօրապետներին, որ շուտով պատերազմի մեծ պատրաստութիւն տեսնեն, որովհետև մտադիր եմ Պարսկաստանը այնքան աւերել՝ մինչև որ վրէժխնդրութեամբ սպանեմ այն տիրասպան Արտաշիրին՝ կամ Պարսիկները պատերազմի յաճախ կրկնուելուց զզուին և իրանք իրանց ձեռքով նորան ձերբակալեն և ինձ յանձնեն, որով վերջ կլինի պատերազմին և բոլորին ցանկալի խաղաղութիւն։

Մանդակունի

Մեծ թագաւոր, մեր և զօրքի ուզածն էլ այդ է, պատրաստ ենք հրամանդ շուտ և ճշտութեամբ կատարել։

Անակ (Անակը իւր եղբօրը)

Հարազատ եղբայր իմ, թագաւորն այսօր հրաման արձակեց՝ Պարսկաստանի վերայ արշաւելու համար՝ պատերազմի պատրաստութիւն տեսնեն. այդ հրամանը յիշեցրեց ինձ՝ իմ տուած երդումը Արտաշիրին. նորա խոստացած մեծամեծ պարգևները՝ այլև յիշեցրեց սէրս և փափագս ապրելու այն գեղեցիկ, քաղցր և անոյշ աշխարհումը՝ որ Պահլաւն է կոչվում, որտեղ ծնուել, սնուել և մեծացել եմ, աւելորդ է մեզ այստեղ երկար

օրեր անցնել, այլ վաղն և եթէ Խոսրովին զբօսանքի պատճառով նորան մի կողմ հեռացնենք, մեր սուր սրերով սրակոտոր անենք և նժոյգներս նստելով փախչինք Պարսկաստան։

Անակի եղբայրը

Անակ եղբայր, նոյն իսկ իմ ցանկութիւնն էլ այդ է։

Անակ

Մեծ թագաւոր, եթէ կհաճիք, գնանք փոքր ինչ զբօսնելու որովհետև նստակեաց կեանքը մարդուս տաղտկութիւն է բերում։

Խոսրով մեծ

Անակ իշխան, շատ ուրախ եմ, գնանք զբօսնելու. ես էլ նստակեաց կեանքից տաղտկութիւն եմ զգում. Օտայ իշխան, շուտով զբօսնելու պատրաստութիւն տեսէք։

Օտայ

Ահա գնում եմ և շատ շուտով կտեսնեմ պատրաստութիւնը։

Խոսրով մեծ

Գնա. ամեն ինչ պատրաստիր և շուտով դարձիր։

Օտայ

Մեծ թագաւոր, պատրաստութիւններն տեսնուեցան։

Խոսրով մեծ

Հայկազունի քաջ իշխաններ, հեծէք երիվարներդ Անակ իշխանի և իւր եղբօր հետ գնանք փոքր ինչ զբօսնելու։

Անակ

Մեծ թագաւոր. այս ծաղկալի դաշտերն և այս խնկաբոյր սօսիների անտառներն՝ որքան գեղեցիկ տեսարաններ և որքան հրաշալիքներ են ներկայացնում, ինացել եմ յափշտակուած։

Խոսրով մեծ

Անակ իշխան, մեր Հայաստանը դրախտավայր աշխարհ է, և աշխարհների թագուհին, սորա բոլոր նահանգներն էլ՝ լի կախարդեցուցիչ տեսարաններով։

Անակ

Մեծ թագաւոր, այս հրաշալի տեսարաններն ինձ բոլորովին յափշտակեցին, խիստ ցանկանում եմ, որ այս անմահութիւն բուրող ծաղիկների վերայ ձիերից իջնենք և մի փոքր ինչ էլ ոտքով զբօսնունք։

Խոսրով մեծ

Անակ իշխան, լաւ ասացիր, իջնենք ձիերից և ոտքով զբօսնունք։

Անակ

Մեծ թագաւոր միտս եկաւ թագաւորութեանդ օգտին՝ մի խիստ շատ օգտաւէտ խորհուրդ, հաճեցէք փոքր ինչ մի կողմ հեռանանք, ես և իմ եղբայրը խօսինք ձեր մեծութեանը այն կարևոր խորհուրդը։

Խոսրով մեծ

Անակ իշխան. հեռանանք՝ վստահ եմ ձեր հաւատարմութեանը՝ որ յատուկ է Պարթևներին և յոյս ունեմ, որ ձեր կարևոր խորհուրդը օգտաւէտ լինի թագաւորութեանս։

Անակ (Խոսրովին սպանում եւ փախչում են)։

Մեծ թագաւոր. յայտնի բան է, որ դու կամենում ես Արտաշիրիցը Արտաւանի վրէժն առնել. այժմ տես. վրէժ առնելն ահա այսպէս կլինի. ահա առ վրէժ. զարկ դու էլ եղբայր զարկ. զարկենք և սպանենք այս ահռելի վիշապին՝ որ Պարսկաստանն արիւնաքամ է արել, հեծնենք ձիերս փախչինք Պարսկաստան և տանք աւետիս Արտաշիրին։

Մանդակունի

Նախարարներ, իշխաններ, զօրք և զօրապետներ, հասէք. շուտ հասէք, ապերախտ Պահլաւները՝ մեր մեծ թագաւորին սպանեցին և փախան, յետևներիցը վազեցէք, հասէք, բռնեցէք և արիւնը արիւնով վճարեցէք։

(Հայ քաջերը հասնում եւ զետումը խեղդում են Անակին եւ իւր եղբօրը)։

Նախարարներ

Ո՜հ, մեր սիրելի ու պաշտելի մեծ թագաւոր, ցաւ է մեզ՝ ձեր մեծութեանը այդպէս խոցոտուած վիճակի մէջ տեսնել, սակայն ապահով եղէք, որովհետև մեր քաջերը վազեցին ու հասան այն ապերախտ դաւաճաններին Արտաշատի կամրջի գլուխը՝ այնտեղ ճանապարհի մի նեղ անցքում Երասխի կատաղի ալիքների մէջ ջրասոյզ խեղդեցին. ահ, ձեր մեծութեանը վրէժը թէև առանք, սակայն ինչ օգուտ, երբոր ձեզ տեսնում ենք ցաւալի վիճակի մէջ տանջուելիս։

Խոսրով մեծ

Իշխան նախարարներ, եթէ ինձ այսպէս անողորմաբար սրախոխող օտարներն անէին՝ չէր լինէր ինձ այնքան ցաւ, որքան ցաւն ինձ աւելի խորն է խոցում, երբ տեսնում եմ՝ որ ինձ ամարդաբար այս վիճակի մէջ ձգողներն՝ իմ ազգականներն են, որ օտարի կեանքի ու փառքի համար՝ ինձ դաւաճանեցին. յաւիտենական նախատինք նորանց անուանց և նորանց պատուին.

բայց քանի որ շունչս բերանումս է՝ հրամայում եմ ձեզ՝ այսօր և եթ նորանց բոլոր ընտանիքը՝ առանց խնայելու հասակներին՝ բոլորին սրակոտոր ընաջինջ կանէք. ով մեծդ Արամազդ ահա հոգիս քեզ եմ յանձնում՝ Հային և Հայաստանիս դու եղիր օգնական։

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵԼ։

ՎՌԱՄ

Արեգակնափայլ մեծ թագաւոր, Հայաստանիցն եմ գալի և քեզ աւետաց լուր եմ բերում. Անակ իշխանը իւր եղբօր հետ սպանեցին Խոսրով մեծին և իրանք երբոր նժոյգներն հեծած փախչում էին՝ Հայոց քաջերը նորանց երկուսին էլ Երասխի կատաղի ալիքներին կուր տուին։

Արտաշիր

Նախարարներ. այսօր ահա նոր եմ դնում Պարսկական պանծալի թագը իմ գլխին, այսօր ահա նոր եմ՝ նստում թագաւորական գոհարազարդ գահը. այսօր ահա նոր հաստատուեց իմ թագաւորութիւնը. և ահա այսօր ինչպէս որ իմ սիրտը զուարճացաւ, զուարթացաւ և ուրախացաւ, կամենում եմ՝ որ այս իմ ուրախութիւնը հաղորդեմ իմ բոլոր հպատակներին, որովհետև այսօր վերջացան կասկածներն, այսօր ապահովուեցան մեր բոլորի կեանքն ու գոյքն. այս պատճառով պէտք է եօթն օր ուրախութեան մեծ տօն կատարենք, Ատրուշաններին երկրպագութիւն մատուցանենք, և այսօր Վռամը և բոլոր նախարարներդ պէտք է պարգևատրուիք։

Նախարարներ

Արևափայլ մեծ թագաւոր. այսօր արդարև մեզ համար մեծ տօն է, որովհետև այն ահարկու Խոսրով վիշապը վերացաւ մեր մէջ տեղից, և այսուհետև ոչ մահկանացուն կյանդգնի մեր առաջ դուրս գալ պատերազմի։

Արտաշիր (Ուրախութիւններից յետոյ)

Իշխան նախարարներ, բաւական է՝ որքան ուրախութեան օրեր անցրինք, այժմ էլ շտապեցէք զօրք ժողովել, ասպատակներ-հրոսակների խմբեր ցրուել Հայաստանի կողմերը, և մենք էլ նորանց յետևներից շուտ վերայ հասնելով յանկարծակի բերենք Հայերին և տիրապետենք Հայաստանին։

Նախարարներ

Արևափայլ մեծ թագաւոր, քո հրամանը զօրք ժողովելու համար՝ կատարեցինք. և ահա մենք և մեր զօրքը պատրաստ ենք։

Արտաշիր

Քաջարի զօրապետներ և քաջաբազուկ զօրքեր, ահա մըտնում ենք Հայաստան, ամենից առաջ բնաջինջ կանէք Խոսրով մեծի ամբողջ ընտանիքը և ցեղը, նորանցից՝ ոչ մէկին, ոչ մեծին և ոչ փոքրին, ոչ արուին և ոչ էգին չէք թողնել կենդանի. այդ սոսկալի վիշապի ցեղը բնաջինջ անելուց յետոյ՝ անխնայ կոտորեցէք ձեր դէմը պատահողին, մի՛ խնայէք ոչ ոքի, անգութ եղէք կոտորելու, սպանելու, ջարդելու, փշրելու, կործանելու և աւերելու մէջ. կանգուն չթողնէք ոչ մի շէնք, այլ ձեր գործը պէտք է լինի այս՝ անողորմաբար սպանել, անխնայօրէն կործանել և աւարը՝ սրբել ու մաքրել. ահա ժամն է, սկսեցէք ձեր հունձը։

Մանդակունի (երկու Հայ նախարարները)

Օտայ իշխան, այն դաւաճան Արտաշիրի զօրքն արդէն սկսել է մեր թագաւոր Խոսրով մեծի ընտանիքը և ցեղը կոտորել, այս դժբաղդութիւնը տեսնելով՝ ահա ես նորա որդի Տըրդատին փախցնում եմ Կեսարիա, և այնտեղից Հռովմ, երբոր չափահաս լինի՝ կտամ Կայսերական ծառայութեան՝ մեծ իշխան Լիկիանի մօտ։

Օտայ

Մեծ իշխան, ահա ես էլ Խոսրով մեծի դուստր Խոսրովիդուխտին առել եմ, և այս գիշերն և եթ փախցնելու եմ մեր Անի ամրոցը. այնտեղ նորան ծածուկ կպահեմ, մինչև որ մեր մեծ Անահիտը՝ քաղցր աչքով նայէ մեր որբացած Հայաստանին։

Մանդակունի

Օտայ իշխան, մեր առիւծասիրտ Խոսրով մեծ թագաւորի յիշատակները չկորցնելու համար՝ մենք մեր սեպուհ պարտաւորութիւնը արդարասիրութեամբ, տիրասիրութեամբ և հաւատարմութեամբ կատարենք. ով գիտէ՝ գուցէ մի օր Տրդատը, երբոր չափահաս լինի՝ ձեռք բերէ իւր թագաւորութիւնը, և Պարսիկներին Հայաստանից բնաջինջ անելով՝ մխիթարանք լինի որբացած Հայերին։

Օտայ

Մեծ իշխան, ուղիղ է ձեր ասածը, և ես նոյն յուսով փախցնում եմ Խոսրովիդուխտին. սրտիս խորքից ցաւելով ասում եմ, երթանք՝ ցկրկին տեսութիւն։

Մանդակունի

Փախչինք Օտայ իշխան՝ փախչինք, թող մեր Անահիտը մեզ մեր կէտ նպատակներին հասցնէ՝ մեր երկու անգնահատելի գոհարների վերաբերութեամբ, որ ժամանակին պարզ և ուրախ սրտով իրար երես տեսնենք. ցտեսութիւն։

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Գրիգոր Լուսաւորչի ամուսնութիւնը

Սոփիա

Գրիգոր որդի՛, երբոր պատանի հանակիդ միջումն էիր՝ քեզ յանձնեցի Շահէն աստուածաբան սուրբ վարդապետի մօտ աշակերտ, որ քեզ կրթէ քրիստոնէական ուսման և գիտութիւնների մէջ, փառք Աստուծոյ՝ որ դու թէ քո եռանդուն աշխատութեամբը և թէ քո բնական ձիրքովը՝ քո ընկերներից գերազանցեցիր և թէ նորանցից շուտ և յաջող աւարտեցիր ուսումդ. ուրիշներին էլ ուսուցանելով ուսումդ աւելի բեղմնաւորեցրիր, որովհետև, ով ուսուցանում է, նա աւելի քաջ ուսանում է, որդիս, այժմ մտադիր եմ քեզ ամուսնացնել, ինչ ես ասում, յօժար ես։

Գրիգոր

Մայրիկ ջան, ես քո կամքին հակառակ չեմ, բայց կարող եմ այսքանը ասել, որ դեռ ժամանակս չէ։

Սոփիա

Գրիգոր որդի՛, եթէ շուտ պսակուիս՝ շուտ էլ քեզ օգնական առողջ ու կայտառ զաւակներ կունենաս, բացի սորանից, դու ապրում ես մի այնպիսի մեծ քաղաքի մէջ, որի բոլոր կողմերը, որ կողմը և դառնաս՝ դայթագղեցուցիչ երևոյթներ և մարդու ախորժակը գրգռող տեսարաններ են աչքիդ առաջ պատկերանալու, ուստի քո մաքուր սիրտը՝ ոչ մի օտար սիրային արատ չպղտորեցնելու համար, կամենում եմ քո այդ կուսական վիճակի մէջ քեզ ամուսնացնել։

Գրիգոր

Մայրիկ ջան, հնազանդ եմ քեզ, միայն աղաչում եմ՝ որ ուզած աղջիկդ լինի հնազանդ, հաւատարիմ, գործունեայ և բարեպաշտ ծնողաց զաւակ։

Սոփիա

Գրիգոր որդի՛, որ աղջկայ ձեռքը՝ որ ես ուզում, ի հարկէ լաւը կլինի. միթէ չես գիտում, որ մայրը որդու համար լաւը և համեստը կընտրէ։

Գրիգոր

Ներողութիւն, մայրիկ ջան, ներողութիւն, որ աղջկայ ձեռքը կամենաս՝ ինձ հաճելի է։

Սոփիա

Գրիգոր որդի, երբոր այս առարկայի վերայ սկսեցի խոսիլ՝ ուրմն յայտնեմ քեզ իմ միտքը, ես ի վաղուց ընտրել էի Դաւիթ Արշակունու Մարիամ աղջիկը, որ ոչ միայն ունի երեսի գեղեցկութիւն, այլեւ սուրբ Գրքի ուսումն, քաղաքավարութիւն և ամենաքաղցր բնաւորութիւն։

Գրիգոր

Մայրիկ Ջան, ուղիղ է ասած «աչքի չտեսածը՝ ականջի չը լսածը՝ անձի կուսութիւն է» այժմ այս առարկայի վերայ խօսալուց՝ կարծես թէ մի կայծ ընկաւ սրտիս մէջ, ուստի խնդրում եմ գնալ և քո ընտրածի ձեռքն ուղել ինձ համար։

Սոփիա

Գրիգոր որդի, ես օր առաջ խօսացել եմ թէ Դաւիթ Արշակունու՝ և թէ նորա դուստր Մարիամի հետ։

Գրիգոր

Մայրիկ Ջան, Դաւիթ Արշակունին կամք տուաւ և կամ օրիորդը յօժարեց։

Սոփիա

Գրիգոր որդի, արդէն երկուսի կամքն էլ առել եմ, և մինչեւ անգամ նշանակել ենք ձեր պսակը առաջիկայ հինգշաբթի օրը. այլեւ ծերունի Դեւոնդ քահանային էլ յայտնել եմ, որ գայ մեր տուն՝ ձեզ պսակելու։

Գրիգոր

Շնորհակալ եմ մայրիկ Ջան, որ իմ վերայ այդքան աշխարհ հոգացողութիւն ես արել, և շարունակում ես։

Սոփիա (Հինգշաբթի հարսանեաց օրը)

Գրիգոր որդի, ահա այսօր հինգշաբթի է, պսակուելուդ օրն է, մտիր սենեակդ և քո փեսայութեան համար պատրաստած շորերդ հագիր ու զարդարուիր։

Գրիգոր

Մայրիկ Ջան, ահա հագնուեցայ և բոլորովին պատրաստ եմ։

Սոփիա

Գրիգոր որդի, հետս արի մտնենք դահլիճը, այնտեղ է հարսը և մեր խնամիքը, քեզ բոլորի հետ ծանօթացնեմ։

Գրիգոր

Մայրիկ Ջան, ներս գնանք։

Սոփիա

Գրիգոր որդի. ահա սա քո աներն է՝ համբուրիր ձեռը. սա քո զոքանչն է՝ համբուրիր ձեռը. իսկ սա քո հարսնացուն է՝ նստիր մօտը՝ մինչեւ որ քահանան գայ. և սորանք էլ մեր բարեկամները և մեր խնամիներն են։

Պատանիներ

Քահանան եկաւ, քահանան եկաւ։

Քահանայ

Ողջո՜յն ձեզ։

Հարսնածուք

Օրհնիր մեզ, տէր հա՛յր։

Քահանայ

Տէր Յիսուսի օրհնութիւնը՝ թող լինի այս տանը և բոլորիդ վերայ։

Սոփիա

Տէր հայր, ահա սա փեսայացուն է և սա էլ հարսնացուն, սորանց պէտք է ձեր սուրբ օրհնութեամբ պսակէք, որդուս անունը Գրիգոր է, հարսինս՝ Մարիամ։

Պսակ

Քահանայ

(Կարճ կտրելու դէպքումը՝ կարող է Գ. մասիցն սկսել)

(Ա. մասն)

Զաւակներս, ինչ որ խօսելու եմ՝ ուշադրութեամբ լսեցէք. դուք ամեն բանից առաջ՝ պէտք է սիրէք ձեր Տէր Աստուածը և մաքուր սրտով պաշտէք մեր Տէր Յիսուսի արիւնովը գնած սուրբ եկեղեցին, երբէք չը մոռանաք ձեր սուրբ եկեղեցին՝ որ Աստուածն էլ ձեզ չը մոռանայ, դուք կամենում էք իրար հետ պսակուիլ և ես ձեզ պէտք է պսակեմ, բայց գիտէ՞ք պսակն ի՞նչ է. պսակը մարդուս ամենամեծ բաղդաւորութիւնն է, որովհետև պսակուողներն գլուխներին պսակ ընդունելով՝ կոչվում են թագաւոր և թագուհի՝ այն էլ իրանցից յառաջ եկող ժողովրդի վերայ. ուստի իրանց թագաւորութիւնը պէտք է սկսեն սիրով, բայց անկեղծ սիրով և հաւատարմութեամբ նախ պէտք է սիրեն իրար՝ ինչպէս իրանց անձը. այնպէս՝ ինչպէս մի հոգի՝ թէև երկու մարմին, բայց ի միութիւն կազմած՝ մի մարմնի մէջ. որովհետև փեսան ու հարսը պսակի օրհնութեամբ լինում են մի մարմին, մի սիրտ, մի հոգի, մի կամք և մի գլուխ. և այս խորհրդով Աստուած կնոջ գլուխը զարդարել է մազերով՝ իսկ օրէնքը ծածկոցներով. սորանով ցոյց է տալի՝ որ կինը չունի առանձին կամք, առանձին հրաման, առանձին գլուխ, այլ իւր կամքը. հրամանը և գլուխը պատկանում է իւր մարդուն, եթէ մի տան մէջ երկու գլուխ և երկու հրամայող լինի՝ այն տունը շուտով կը կործանի. այլ տունը հաստատուն մնալու համար՝ պէտք է լինի մի գլուխ, մի կամք և մի հրամայող։

Սոփիա

Գրիգոր որդի, երբոր այս առարկայի վերայ սկսեցի խոսիլ՝ ուրմն յայտնեմ քեզ իմ միտքը, ես ի վաղուց ընտրել էի Դաւիթ Արշակունու Մարիամ աղջիկը, որ ոչ միայն ունի երեսի գեղեցկութիւն, այլեւ սուրբ Գրքի ուսումն, քաղաքավարութիւն և ամենաքաղցր բնաւորութիւն։

Գրիգոր

Մայրիկ ջան, ուղիղ է ասած «աչքի չտեսածը՝ ականջի չը լսածը՝ անձի կուսութիւն է» այժմ այս առարկայի վերայ խօսալուց՝ կարծես թէ մի կայծ ընկաւ սրտիս մէջ, ուստի խնդրում եմ գնալ և քո ընտրածի ձեռքն ուղել ինձ համար։

Սոփիա

Գրիգոր որդի, ես օր առաջ խօսացել եմ թէ Դաւիթ Արշակունու՝ և թէ նորա դուստր Մարիամի հետ։

Գրիգոր

Մայրիկ ջան, Դաւիթ Արշակունին կամք տուաւ և կամ օրհորդը յօժարեց։

Սոփիա

Գրիգոր որդի, արդէն երկուսի կամքն էլ առել եմ, և մինչեւ անդամ նշանակել ենք ձեր պսակը առաջիկայ հինգշաբթի օրը. այլեւ ծերունի Ղեւոնդ քահանային էլ յայտնել եմ, որ գայ մեր տուն՝ ձեզ պսակելու։

Գրիգոր

Շնորհակալ եմ մայրիկ ջան, որ իմ վերայ այդքան աչալուրջ հոգացողութիւն ես արել, և շարունակում ես։

Սոփիա (Հինգշաբթի հարսանեաց օրը)

Գրիգոր որդի, ահա այսօր հինգշաբթի է, պսակուելուդ օրն է, մտիր սենեակդ և քո փեսայութեան համար պատրաստած շորերդ հագիր ու զարդարուիր։

Գրիգոր

Մայրիկ ջան, ահա հագնուեցայ և բոլորովին պատրաստ եմ։

Սոփիա

Գրիգոր որդի, հետս արի մտնենք դահլիճը, այնտեղ է հարսը և մեր խնամիքը, քեզ բոլորի հետ ծանօթացնեմ։

Գրիգոր

Մայրիկ ջան, ներս գնանք։

Սոփիա

Գրիգոր որդի. ահա սա քո աներն է՝ համբուրիր ձեռը. սա քո զոքանչն է՝ համբուրիր ձեռը. իսկ սա քո հարսնացուն է՝ նստիր մօտը՝ մինչեւ որ քահանան գայ. և սորանք էլ մեր բարեկամները և մեր խնամիներն են։

Պատանիներ

Քահանան եկաւ, քահանան եկաւ։

Քահանայ

Ողջո՞ յն ձեզ։

Հարսնածուք

Օրհնիր մեզ, տէր հայր։

Քահանայ

Տէր Յիսուսի օրհնութիւնը՝ թող լինի այս տանը և բոլորիդ վերայ։

Սոփիա

Տէր հայր, ահա սա փեսայացուն է և սա էլ հարսնացուն, սորանց պէտք է ձեր սուրբ օրհնութեամբ պսակէք, որդուս անունը Գրիգոր է, հարսինս՝ Մարիամ։

Պսակ

Քահանայ

(Կարճ կտրելու դէպքումը՝ կարող է Գ. մասիցն սկսել)

(Ա. մասն)

Զաւակներս, ինչ որ խօսելու եմ՝ ուշադրութեամբ լսեցէք. դուք ամեն բանից առաջ՝ պէտք է սիրէք ձեր Տէր Աստուածը և մաքուր սրտով պաշտէք մեր Տէր Յիսուսի արիւնովը գնած սուրբ եկեղեցին, երբէք չը մոռանաք ձեր սուրբ եկեղեցին՝ որ Աստուածն էլ ձեզ չը մոռանայ, դուք կամենում էք իրար հետ պսակուիլ և ես ձեզ պէտք է պսակեմ, բայց գիտէք պսակն ինչ է. պսակը մարդուս ամենամեծ բաղդաւորութիւնն է, որովհետև պսակուողներն գլուխներին պսակ ընդունելով՝ կոչվում են թագաւոր և թագուհի՝ այն էլ իրանցից յառաջ եկող ժողովրդի վերայ. ուստի իրանց թագաւորութիւնը պէտք է սկսեն սիրով, բայց անկեղծ սիրով և հաւատարմութեամբ նախ պէտք է սիրեն իրար՝ ինչպէս իրանց անձը. այնպէս՝ ինչպէս մի հոգի՝ թէև ջոկ ջոկ, բայց ի միութիւն կազմած՝ մի մարմնի մէջ. որովհետև փեսան ու հարսը պսակի օրհնութեամբ լինում են մի մարմին, մի սիրտ, մի հոգի, մի կամք և մի գլուխ. և այս խորհրդով Աստուած կնոջ գլուխը զարդարել է մազերով՝ իսկ օրէնքը ծածկոցներով. սորանով ցոյց է տալի՝ որ կինը չունի առանձին կամք, առանձին հրաման, առանձին գլուխ, այլ իւր կամքը. հրամանը և գլուխը պատկանում է իւր մարդուն, եթէ մի տան մէջ երկու գլուխ և երկու հրամայող լինի՝ այն տունը շուտով կը կործանի. այլ տունը հաստատուն մնալու համար՝ պէտք է լինի մի գլուխ, մի կամք և մի հրամայող։

Հարսնացու, ահա քո վերայի զարդերն էլ հաստատում են ասածներս. մատներիդ մատանիներն և բազուկներիդ ապարանջանները՝ չէ՞ թէ գերութեան շղթաներ են, այլ ձեզ անբաժան սիրով իրար հետ մի միութիւն կազմող ամրապինդ կապեր են. ականջներիդ օղերը (գինաները) չէ՞ թէ ստրկութեան նշաններ են՝ այլ մաքուր սիրով քո հնազանդութեան՝ և քո համակամութեան զարդերն են, այդ կուրծքիդ կրած թանկագին գոհարը՝ չէ՞ թէ օտարների աչքերը շլացնող նշան է՝ այլ քո ամուսնու կենդանի աստղն է՝ որ ուրախացուցիչ ցոլերով շողշողում է կուրծքիդ վերայ, որով ցոյց է տալի՝ որ քո անձն արդէն ունի իւր գլուխը։

Զաւակներս, ահա խմացաք՝ որ պսակի օրհնութեամբ երկուքդ լինում էք մի մարդ, մի սիրտ, մի կամք և մի հոգի. կը մնայ ձեզ իմանալ ձեր առանձին առանձին պարտաւորութիւններն՝ որ ժամանակին առանց զանցառութեան կատարէք։

Պատուական փեսայ, քո պարտաւորութիւններն ահա սորանք են. երբոր դու, այս համեստ հարսի մաքուր և անփոխարինելի կուսութեան ծանրութիւնը քո վերայ ես յանձնառնում, ուրեմն պարտաւորվում ես Աստուծոյ առաջ ծանրագոյն պատասխանատուութեան. ուստի այսուհետև պէտք է հանգստութիւն չը սիրես, պէտք է միշտ արդար աշխատանքի մէջ լինիս. քո աշխատանքը տուն բերես՝ քո կնոջը և քո ընտանիքիդ հետ վայելես. օտարների հետ և անվայել տեղերում ուտող խմողը՝ սև երես կլինի թէ Աստուծոյ և թէ մարդկանց առաջ։ Զաւակս, միշտ պէտք է մտածես այս՝ որ քո կնոջ կեանքը ապահովուած պահես, կնոջդ՝ պէտք է սիրես կեանքդ յետ դրածի պէս, որովհետև Աստուած աշխարհիս բոլոր աղջիկների միջից՝ սորան ընտրեց քեզ ամուսին՝ մտածիր զաւակս՝ քեզ ով է այս ամենածանրագին պարգև տուողը՝ ամենամեծն Աստուած, ուրեմն դու էլ պարտական ես Աստուծոյ մեծութեանը հաւասար սիրել նորա շնորհած պարգևը, մի՛ սիրիր արբեցողութիւն՝ որ մայր է ամեն կերպ չարիքների և մեծամեծ դժբաղդութիւնների. հեռու փախիր ո՛չ այնքան գիշատող գազաններից՝ որքան մարդու աչքերը պղծող գեղեցկուհի մարմնավաճառներից. աշխարհիս մէջ այնպէս համարիր՝ որպէս թէ՝ քո կնոջից գեղեցիկը, լաւը, համեստը և ազնուագոյնը չկայ. որովհետև միայն նա է քո կէսը. մարդ ու կին՝ կոյս են համարվում՝ երբոր իրար հետ կոյս կըպակուին և հաւատարմութեամբ կոյս կմնան իրանց ամուսնական անկողնին. զաւակս, կնոջդ վերայ ամեն մի դատարկ սխալմունքի համար՝ չը պէտք է բարկանաս, այլ քաղցրութեամբ նորա

սխալը ուղղես. լաւ համարիր սիրով ու քաղցրութեամբ կնոջդ ուսեցնես հետդ գարէհաց՝ քան կռուով ու դառնութեամբ մեղր ու գաթայ. հոգա կնոջդ վերան ու գլուխը՝ բայց ոչ քո կարողութիւնից բարձր՝ և ոչ ցածր, որ չը լինիս ծիծաղալի, այլ քո ուժի և կարողութեանը հաւասար. կնոջդ մատի ցաւն անգամ լսելուդ պէս՝ պէտք է թողնես քո բան ու գործն և հասնիս նորա ցաւի առաջն առնել. և այսպէս պարզերես կը լինիս թէ Աստուծոյ և թէ մարդկանց առաջ։

Համեստափայլ հարս, ահա սորանք էլ քո պարտաւորութիւններն են. դու էլ պարտաւոր ես անկեղծ սիրով և հաւատարմութեամբ սիրել քո մարդուն և հնազանդ լինել նորան. Աստուած աշխարհիս մէջ բոլոր մարդկանց միջից սորան ընտրեց քեզ համար թագ ու պսակ՝ դու էլ պարտաւոր ես քո սրտի մաքուր սէրը միմիայն սորա վերայ ունենալ, պէտք է ուժեղ հաստատամտութեամբ քաջութիւն ունենաս՝ որ քո մարդու մաքուր սիրոյ հետ օտարի սէրը չը խառնես. օտարի սէրը սուտ է, օտարի սէրը պիղծ է, օտարի սէրը ժամանակաւոր է, օտարի սիրոյ տակին ծածկուած են մեծամեծ անբաղդութիւններ, սո՛ւր, յուսահատութի՛ւն և խայտառակ մահ։ Քանի, քանի՛ հարսներ իրանց անունը կոտրեցին, իրանց տունը քանդեցին. իրանց քաղցր օճաղի մուխը հանգցրին և իրանց անբաղդացրին՝ միմիայն օտարի սիրոյն հաւատալով. զաւակս՝ օտարի սէրից հեռու փախիր՝ ինչպէս թունաւոր սև օձից. զաւակս, պէտք է աշխատիս մարդուդ աշխատանքի բեռին կէսը՝ քեզ վերայ վերցնել՝ տան գործքերը կատարելով։ Զաւակս, սրտով պէտք է ատես նորաձևութեան խենեշութիւնները և չը պէտք է թոյլ տաս քեզ մեծամեծ ծախքերի դռներ բանալ՝ որ չը լինիս մարդուդ անզգալի կերպով կործանուելու պատճառ. կինը՝ հագուստների մէջ պէտք է ունենայ չափաւորութիւն. իսկ ծախքերի մէջ խնայողութիւն։ Կնոջ ճակատի լուսափայլ աստղը՝ քաղցր ու համեստ բնաւորութիւնն է, զաւակս այսօրուանից երկու խնամիների սիրոյ կապը քո ձեռին է, պէտք է աշխատիս այդ կապը՝ քո քաղցր բնաւորութեամբ անխզելի պահել, որ ասեն՝ մեր տունը հարս բերինք՝ չէ՞ թէ հարս՝ այլ հրեշտակ՝ և մեր տունը դրախտ դարձրինք. եղել են վատ և անտանելի բնաւորութեան տէր հարսեր՝ որոնց համար հարկադրուած ասել են. հարս տուն բերինք, չէ՞ թէ հարս՝ այլ սատանայ և մեր տունը դժոխք դարձրինք, չէ՞ զաւակս՝ չէ՞, պէտք է աշխատիս քեզ հրեշտակ ասել տաս՝ որով թէ Աստուծոյ և թէ մարդկանց առաջ պարզերես լինիս։

Բ. մասն

Զաւակներս, դուք իրար հետ պսակուելով՝ այսօրուանից կսկսէք ձեր դրախտական կեանքը, կունենաք զաւակներ, նորանց սիրով պահելու և մեծացնելու հոգսը՝ բնական է. անասուններն էլ այդ հոգսն ունին իրանցից ծնուածների վերայ. ձեր հոգսը բարձր է լինելու. դուք՝ պէտք է հոգաք ձեր զաւակներին տալ ուսման և քաղաքակրթութեան. ձեր որդուցը պէտք է սորվեցնէք, որ ամեն բանից գերազանց առաւելութեամբ սիրեն ու պաշտեն իրանց և մեր բոլորի ստեղծող Աստուածին. սուրբ եկեղեցին և եկեղեցական սրբութիւնները, ազգը, հայրենիքը և տիրապետող իշխանութիւնը. այնուհետև ձեր զաւակները կունենան աշխարհիս մէջ բաղդաւոր կեանք. և նորանց ոտքերն երբէք չեն դիպչի անբաղդութեան քարի։

Գ. մասն

Զաւակներս, ահա ես ձեզ պսակում եմ, դուք պէտք է փոփոխակի ծառայութեամբ ձեր պարտաւորութիւնները կատարէք. անկեղծ և անեղծ սիրով և հաւատարմութեամբ մինչև ձեր մահը պէտք է իրար սիրէք, իրար ծառայէք, իրար օգնէք, իրար սիրտ տաք, իրար մխիթարէք, իրար վերայ գլուխներդ յետ դնէք։

Փեսայ որդեակ, բոլոր ասածներս լսելուց յետոյ, խոստացիր Աստուծոյ և այս բոլորի առաջ. եթէ այս հարսին՝ Աստուած չանէ՝ մի դժբաղդութիւն պատահի, որ այլևս չը կարողանայ քեզ կնութիւն անել, մինչև մահդ սորան տէր ես, (Այո, տէր եմ)։

Եւ դու աղջիկս, այս փեսան՝ քո հաւանածն և քո կամքովն է, (Այո), Աստուած չանէ, եթէ սորան պատահի դժբաղդութիւն՝ որ չը կարողանայ այլևս աշխատիլ և քեզ ապրուստ բերել՝ մինչև մահդ սորան սիրով և հաւատարմութեամբ հնազանդ ես (Այո, հնազանդ եմ)։

Տեսէք որդիակներս, ձեր խոստմանը՝ Աստուածն աներևոյթապէս վկայ է, այլև վկայ են այս սուրբ Խաչը և սուրբ Աւետարանը և այստեղ գտնուող հարսնևորները, սորանք բոլորը ձեր խոստմանցը վկայ լինին (Այո, թող վկայ լինին)։ Իսրայէլի Աստուածը ձեր մէջը լինի, և ձեր ոտքերը փորձանքների քարի չըդիպչին և չը ցնաստին։

«Առեալ զՀեռն Եւայի և տուեալ 'ի յաջն Ադամայ, և ասէ Ադամ. Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց և մարմին 'ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին՝ զի յառնէ իւրմէ առաւ, վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ

իւրոյ, և եղիցին երկուքն ի մարմին մի. արդ՝ զոր Աստուած զուգեաց մարդ մի մեկնեսցէ»։

Զաւակներս, այս վերջի խօսքը լսեցիք, Աստուածն՝ ձեզ երկուսիդ իրար հետ միացրեց կապեց. մարդիկ իրաւունք չունին Աստուծոյ հակառակ՝ նորա կապածը արձակել, յանցանքը միայն կարող է այս կապը արձակել, իսկ յանցաւորը չարաչար կպատժուի Աստուածանից։

Որդիքս, ահա Աստուծոյ այս խօսքերովը ձեզ պսակեցի, շնորհաւոր լինի ձեր պսակը, երջանիկ և ուրախ ապրիք, բաղդաւոր ծնողներ լինիք. Աստուծոյ ամենօրհնեալ ձեռքը ձեզ վերայ միշտ օգնական և պաշտպան լինի. Աչքերը լոյս ձեր ծնողաց և բոլորի, մնացէք բարեաւ։

Սոփիա (Նոր պատկեր)

Գրիգոր որդի, արդէն հասել ես երիտասարդական հասակդ, այժմ յարմար եմ դատում պատմել քեզ՝ քո հարազատ ծնողների և քո ծննդեան մասին այն սոսկալի անցքերը՝ որոնք եկան ու անցան։

Գրիգոր

Մայրիկ ջան, մինթէ ես բացի ձեզանից՝ ունեցել եմ ուրիշ հարազատ ծնողներ, աղաչում եմ քեզ մայրիկ ջան, պատմիր ինձ՝ իմ հարազատ ծնողներն որտեղ են ապրում, ես ինչպէս եմ ձեր ձեռքն ընկել, և ինչ աղետալի անցքեր են՝ որ կատարեցել են իմ և ծնողներիս վերայով, արդեօք չունիս տեղեկութիւն ծնողներիս կենդանութեան մասին՝ պատմիր ինձ մայրիկ ջան, պատմիր, աղաչում եմ։

Սոփիա

Լսիր Գրիգոր որդի, այս իմ ամուսին Բուրդարը՝ որ այժմ քո հայրն է կոչվում, սա քրիստոնէութիւն ընդունած պարսիկ է. քո հարազատ հայրն՝ Արշակունեաց Սուրէնեան Պարթևաղն Պահլաւների նահապետ մեծ իշխան Անակն է, մայրդ՝ Ոգոհէ իշխանուհին. հայրդ մեծ ընտանիքով Պարսկաստանից եկաւ Հայաստան. Հայոց Խոսրով մեծ թագաւորը նորան պատուով ընդունեց իւր պալատում, մայրդ այնտեղ թագաւորական պալատումը ծնաւ քեզ և ինձ ընդունեց քեզ համար ծծմայր. երբոր հայրդ և հօրեղբայրդ Պարսից Արտաշիր թագաւորից թեւլաղրուած Խոսրով մեծին ոգնեցին և փախան՝ Հայոց քաջերը նորանց երկուսին էլ Երասխի մէջ խեղդեցին, իսկ Խոսրով մեծը՝ երբոր շունչը բերանումն էր՝ հրամայեց ջնջել քո հօր ընտանիքը և ցեղը. երբոր կոտորածն սկսեցին՝ Սուրէն անունով եղբօրդ ծծմայրը նորան ծածուկ Պարսկաստան փախցրեց, ես ու ամուսինս էլ քեզ փախցրինք այստեղ կեսարիա։

Քեզ փախցնելու օրերն դարնանային էին, ճանապարհին մի օր, մենք փոքր ինչ հանգիստ առնելու համար նստեցինք մի մեծ ծառի տակին, քեզ այն ծառի տերևախիտ մի ճիւղքի ստուերի տակին քուն դրի, երբոր մենք նստած այն անցքերի վերաբերութեամբ զրոյց էինք անում, տեսանք՝ որ մի սիրուն աղաւնի իջաւ ու նստեց գլխիդ վերի ճիւղքի վերայ և սկսաւ դէպի քեզ քացը ձայնով անդադար կրկնել Գրիգոր, Գրիգոր, Գրիգոր. և մենք այդ հրաշալի դէպքիցն հրապուրուած՝ քեզ մկրտելու ժամանակ՝ անունդ դրինք «Գրիգոր» ահա այսքանն է քո ծնողների և քո ծննդեան մասին անսխալ տեղեկութիւնը՝ որ քանի չեմ մեռել՝ կամեցայ պատմել, որ դու ունենաս ճիշտ տեղեկութիւն։

Գրիգոր

Մայրիկ ջան, աղաչում եմ քեզ պատմիր ինձ, Արտաշիրը երբոր լսեց ծնողներիս դժբաղդութիւնը՝ Խոսրով մեծի տանիցը վրէժխնդրութիւն չարաւ։

Սոփիա

Ի՞նչպէս չէ, արաւ վրէժխնդրութիւն, Արտաշիրը մեծ զօրքով եկաւ Հայաստան՝ և չարաչար կոտորածներ և աւերմունքներ արաւ, Խոսրով մեծի ընտանիքը և ամբողջ ցեղը սրակոտոր ջնջեց. բայց այսու ամենայնիւ մեծ նախարար Արտաւազդ Մանդակունին Խոսրով մեծի որդի Տրդատին փախցրեց այստեղ Կեսարիա և այստեղից տարաւ Հռովմ. որ այժմ մտած է Կայսերական ծառայութեան մէջ՝ մեծ իշխան Լիկինանի մօտ։

Գրիգոր

Մայրիկ ջան, լսելով պատմածներդ, մի կողմից մխիթարվում եմ, որ ես Արշակունեաց Պարթևական պանծալի ցեղի զաւակ եմ, իսկ միւս կողմից՝ տեսնում եմ, որ հօրս գործած ոճիրը ծանրագոյն յանցանք է, որովհետև հայրս է սպանել Խոսրով մեծ թագաւորին և եղել է պատճառ Հայաստանի այն լուսապայծառ ջահը հանգցնելու, իրան խեղդամահ լինելու, մօրս անմեղ տեղը սպանուելու, մեր ցեղը ջնջուելու և մեզ երկու եղբայրներիս իրարից անծանօթ ապրելու, չէ, մայրիկ չէ, հօրս յանցանքը շատ ծանր և ծանրագոյն է, այլևս չեմ կարող հանգիստ ապրիլ, պէտք է գնամ և մեծ Խոսրովի Տրդատ որդու մօտ ծառայելով հօրս մեղքը քաւեմ։

Սոփիա

Ձէ՞ որդի չէ, մի՞ գնար, չեմ թողնիլ, խղճա՛ երկու արու զաւակներիդ, դիջիր ամուսնուդ մանկամարդ հասակին, ինչպէս կարելի է սորանց անտէր թողնել ու հեռանալ, այս արարմունքդ կլինի աւելի ծանր յանցանք՝ քան հօրդ մեղքը այսպիսի միջոցով քաւելը։

Գրիգոր

Մայրիկ ջան, այս աշխարհն անցաւոր է, կեանքի բոլոր հաճոյքները՝ բօղէական և վաղանցուկ են, մենք եկել ենք աշխարհ՝ մեր յետև բարեգործական մի լուսաւոր գիծ թողնել ու պարզերես գնալ յաւիտենականութիւն. հայրս՝ իւր յետևը թողել է սև գիծ՝ ես այդ սև գիծը ձրի ծառայութեամբս փոխարինելու եմ լուսաւոր գծի։ Գալով ընտանեացս պահպանութեանը՝ ճնճղուկներին կերակուր հոգացող Աստուածը՝ չի մոռանայ հոգալու և ընտանեացս ապրուստը, այս կողմից անհոգ եղիր։

Սոփիա

Գրիգոր որդի, եթէ այդպէս հաստատամտութեամբ վճռել ես գնալ, շատ լաւ՝ բայց հարցրու Մարիամ ամուսնուդ էլ. տես նա ինչ է ասում, կտայ համաձայնութիւն։

Գրիգոր

Մայրիկ ջան, ամուսնուս էլ կհարցնեմ, ես առանց քո և ամուսնուս հակառակ մինչև օրս ոչ մի բան չեմ արել, այժմ էլ կամենում եմ այս սուրբ պարտականութիւնս կատարելու մասին էլ, ձեր համաձայնութիւնը խնդրել։

Գրիգոր

Մարիամ, իմ պարկեշտ ամուսին, ահա ականջովդ լսեցիր մայրիկիս պատմածները. մենք երեք տարի է՝ ինչ որ պսակուել ենք, մեր պսակիցը ունինք երկու արու զաւակներ, և որովհետև հօրս գործած յանցանքի ծանրութեանը համար ես անհանգիստ եմ, ուստի սրտովս ցանկանում եմ գնալ Հռովմ և Խոսրով մեծի որդու Տրդատի մօտ՝ նորան ձրի ծառայելով հօրս մեղքը քաւել, այժմ եթէ կընամաձայնիս՝ որ Արիստակէս փոքր որդուովդ մանել կանանց վանքը կեանքդ սրբութեամբ անցնել, իսկ Վրթանէսին կամուսնացնես, որ պարկեշտութեամբ ընտանիքի հայր լինի, եթէ այս առաջարկութիւնս սիրով կընդունես և համաձայն կլինիս, այն ժամանակ ես խաղաղ սրտով կերթամ և իմ որդիական սուրբ պարտականութիւնը համբերողութեամբ կը կատարեմ, իսկ եթէ համաձայն չես լինի, այն ժամանակ ես կլինիմ աշխարհին անպէտքական և օրերս այնուհետև կանցնեմ մտատանջութեամբ, ցաւով և հեծութեամբ։

Մարիամ

Գրիգոր, իմ սրբակրօն ամուսին, համաձայն եմ քո առաջարկութեանը, դու հանգիստ եղիր և մեր կողմից բոլորովին

ապահով. ազատ գնա և ծառայիր. Տէրը քեզ հետ՝ քեզ օգնական լինի։

Գրիգոր

Սրբասուն Մարիամ, ուրեմն այս ժամիցն սկսած՝ դու իմ քոյրն եղար, մնաս բարեաւ իմ սրբասուն քոյր, ամենաբարձրեալ Աստուածը քեզ և քո զաւակներին իւր ձեռքի տակին սրբութեամբ պահէ ու պահպանէ։

Մարիամ

Սրբակրօն Գրիգոր եղբայր, գնաս բարեաւ, թող ամենաբարձրեալ Աստուածը մեզ արժանացնէ պարզերես իրար տեսնելու իւր յաւիտենական թագաւորութեան մէջ։

Գրիգոր

Մնաս բարեաւ մայրիկ ջան, կաթդ ինձ հալալ արա, բեր ձեռդ համբուրեմ, օրհնիր մայրիկ ջան, օրհնիր ճանապարհս, ես քո մայրական սէրը և երախտիքը երբէք չեմ մոռանայ։

Սոփիա

Գրիգոր ջան, որդի ջան, բեր քո ճակատը համբուրեմ, որդի ջան. քեզ մեր Տէր Աստուածն օրհնել է, ես էլ քեզ միշտ օրհնել եմ և այժմս էլ օրհնում եմ, գնաս բարեաւ. մեծ մարդ դառնաս, մեծ անուն ունենաս, Տէրը միշտ քեզ հետ՝ քեզ օգնական և պահապան լինի, Գրիգոր ջան, ես պառաւել եմ, մենք իրար յաւիտենականութեան մէջ կտեսնենք, գնա որդի ջան, գնա Գրիգոր ջան, գնա Տէրը քեզ հետ։

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Հռովմէացւոց Դիոկղետիանոս կայսրը կազմում է նախարարական ժողով.

Կայսր

Մեծ իշխան նախարարներ, ձեզ հրաւիրել եմ այստեղ ժողովի, որ Գոթացւոց Հոչէ թագաւորի առաջարկութիւնը յայտնեմ ձեզ. Հոչէ թագաւորը մեր դէմ պատերազմի է դուրս եկել, և միևնոյն ժամանակ պատգամաւորի բերանով մի այսպիսի տարօրինակ առաջարկութիւն է անում, ասելով «Ի՞նչ է հարկաւոր մեզ, ահագին կոտորածներով ջնջել մեր զօրքը և աշխարհին ինաս հասցնել, ահա ես մեր զօրքի կողմից դուրս կգամ քո դէմ, և դու քո զօրքի կողմից իմ դէմ, մենք երկուքովս մենամարտինք, եթէ ես յաղթեմ քեզ՝ դուք ինձ հնազանդուեցէք և ծառայեցէք, իսկ եթէ դու ինձ յաղթես՝ մենք քեզ հնազանդինք և ծառայենք. և այսպէս առանց արիւնի և կոտորածի երկու կողմերիս էլ կլինի բարի և նպաստաւոր»։

Այս պատգամն ինձ բաւականի շփոթեցրել է, որովհետև ես հաստատ գիտեմ, որ Հոչէի հետ չեմ կարող մենամարտել, այս պատճառով հրաւիրեցի ձեզ, որ այս առաջարկութեան վերաբերութեամբ լաւ մտածէք, թէ ինչ անենք և ինչ պատասխան տանք նորա պատգամաւորին։

Անտոնինոս

Մեծ կայսր, ես բաւական եմ համարում Հոչէի առաջարկութեանը՝ մեր քաջ զօրքերի արիւնածարաւ սրերովը պատասխանել։

Կայսր

Իշխան Անտոնինոս,, այդ միջոցը պատիւ չի բերել մեր կայսերական հզօր թագաւորութեանը։

Ղուկիոս

Մեծ Կայսր, Հոչէի առաջարկութիւնը իմ համոզմամբ՝ թէև երկու կողմի համար էլ նպաստաւոր է, սակայն չը պէտք է թագաւորներն կոչուին մենամարտութեան, այլ երկու կողմի թագաւորութիւններից ընտրուած քաջամարտիկ ըմբիշներ, ուստի պէտք է որոնել մի խիստ քաջ ըմբիշ։

Կայսր

Մեծ իշխան Ղուկիոս, քո առաջարկութիւնը շատ լաւ է, բայց այս ժամին որտեղ գտնենք քաջ և ուժեղ ըմբիշ՝ որի քաջութեանը վստահանանք տանել մենամարտութեան յաղթանակը։

Լիկիանէ

Մեծ Կայսր, այդ մասին հոգս մի՛ աներ, այդ գործը հեշտ կերպով կվերջանայ, որովհետև այստեղ կայ Տրդատ անունով մի մարդ՝ Հայոց աշխարհի թագաւորների ցեղից. նա կարող է մեծ Ինքնակալիդ կողմից մենամարտել Հոչէի հետ և նորան յաղթել. քո մեծութեանը հաստատ հաւատացնելու համար պատմեմ նորա արած մի քանի քաջութիւնները։

Ա. Մի անգամ մեծահանդէս ձիարշաւում երբոր քառաձի կառքը նստած սրարշաւ քշում էին, Տրդատի հետ նստողը այդ արուեստին հմուտ լինելով նորան կառքի յետևի կողմից վայր ձգեց և սկսաւ կատաղի ձիերին վազեցնել առաջ, իսկ Տրդատը կայծակի պէս ոտքի կանգնելով բռնեց քառաձի արշաւող կառքը և յետ կանգնեցրեց, տեսնողները մնացին զարմացած։

Բ. Մի ուրիշ անգամ, ճակատամարտի դուրս եկաւ երկու վայրենի ցուլերի դէմ, երբոր երկու ցուլերը կատաղաբար յարձակուեցան նորա վերայ, Տրդատը նորանց եղջիւրներից բռնեց և այնպէս ջախջախեց երկուսի էլ պարանոցները։

Գ. Մի անգամ, սովի պատճառով՝ երբոր Պրոբոս Կայսեր զօրքերը ապստամբուեցան թագաւորին և իշխաններին սպանեցին. և երբոր դիմեցին ինձ վերայ, Տրդատը միայնակ իմ կողմը պաշտպանելով բոլորին ցիր ու ցան արաւ և փախցրեց։

Դ. Մի ուրիշ անգամ, երբոր Կարիանոսը դուրս եկաւ պատերազմի Արտաշիրի դէմ՝ նորանից յաղթուելով սպանուեցաւ. նորա զօրքը փախչելու ժամանակ Տրդատի ձին վիրաւորուեցաւ. իսկ նա՝ ձին թամբովը և իւր զէնքերը շալակն առնելով՝ այնքան ծանրութեամբ իրան ձգեց Եփրատ գետը և լողալով անցաւ և եկաւ մեր բանակը։

Ե. Եւ այժմ երբոր զօրքերովս եկայ և գիշերով հասայ քաղաքին, ես իմ զօրքովը բանակեցանք պարսպի դուրսը, մեր ձիերի դարմանը պակասեցաւ մնացած էինք շուարած, Տրդատը տեսնելով պարսպի այն կողմը խոտի մեծ դէզ՝ մագլցելով բարձրացաւ պարսպի վերայ՝ և այնտեղից սկսաւ խոտի մեծամեծ խուրձեր և խոտի վերայ քնած պահապաններին և շներին խոտի հետ թեթև կերպով վայր թափել։

Տրդատի այս քաջագործութիւնների վերայ վստահանալով կարող էք նորան հագցնել ձեր կայսերական զգեստները և այնպէս նա կարող է մենամարտիլ նորա հետ և յաղթել նորան։

Կայսր

Մեծ իշխաններ, դուք ինչպէս էք դատում, արդեօք հաւանականն էք գտնում մեծ իշխան Լիկիանէի առաջարկութիւնը։

Իշխաններ

Մեծ Կայսր, իշխան Լիկիանէի առաջարկածը՝ ամենայուսալի միջոցն է, և շատ պատուաբեր, բոլորս էլ համաձայն ենք։

Կայսր

Եթէ համաձայն էք, ուրեմն պատգամաւորի միջոցով յայտնեցէք Հոչէ թագաւորին և ասացէք, Կայսրը ուրախութեամբ ընդունեց քո առաջարկութիւնը, վաղը փողերը հնչելուն պէս՝ պատրաստ է քեզ հետ մենամարտիլ։ (Դառնալով Լիկիանէին)

Մեծ իշխան Լիկիանէ, վաղը Տրդատին բերէք այստեղ պալատը, և նորան Կայսերական զգեստներով, ծիրանիով, և թագաւորական պատուանշաններով զարդարեցէք, որ փողերը հնչեցնելուն պէս՝ պատրաստ գտնուի գնալու նշանակուած տեղը։

(Լիկիանէն գնում եւ շուտով գալիս է)։

Լիկիանէ

Մեծ Կայսր, Տրդատին ձեր մեծութեան հրամանի համաձայն զարդարեցի, եթէ կհաճիք՝ թող գայ այստեղ և տեսէք։

Կայսր

Կայսերակերպին ներս հրաւիրեր։

Տրդատ

Ողջոյն քեզ մեծ Կայսր

Կայսր

Ողջ եկիր կայսերակերպդ Տրդատ, ճիշտ որ կայսր ես և իրաւի թագաւորական ցեղից. արդէն տեսքդ այնպէս է վկայում, և ես յոյս ունիմ, այսօր ևեթ քեզ պակեմ թագաւորական թագով ու պատուով. կարող ես Հոչէի հետ մենամարտիլ։

Տրդատ

Մեծ կայսր, այդ կողմից բոլորովին ապահով եղէք։

Կայսր

Հապա ծն առաջ՝ իմ դիւցազն Տրդատ, արդէն ժամանակն է։

(Տրդատը պալատից դուրս է գալի եւ ուղղվում է նշանակուած տեղը, փողերը երկու կողմից էլ հնչեցնում են)։

Ժողովուրդ

Ահա՛ Կայսրը դուրս եկաւ պալատից կեցցէ՛ մեր մեծ կայսրը, կեցցէ, ահա՛ իրար վերայ յարձակուեցան, մեր Կայսրը Հոչէին յաղթեց, յաղթութիւն, յաղթութիւն. կեցցէ մեր մեծ կայսրը, Հռովմի փառքը և Հռովմէական մեծ ազգի պարծանքը, կեցցէ, կեցցէ։

Լիկիանէ

Մեծ Կայսր, ահա Տրդատը Հոչէին ձեռների մէջ կաշկանդելով՝ նորան բռնած բերում է։

Տրդատ

Մեծ Կայսր, ահա՛ Հոչէն, ահա՛ սորա պարտութեամբ՝ թող վերջ լինի արիւնահեղ պատերազմի սկսելուն։

Կայսր

Իմ քաջն Տրդատ, թող այնպէս լինի՝ ինչպէս որ ասացիր (դառնալով նախարարներին). իսկ դուք՝ մեծ իշխան նախարարներ, դուք արդէն տեսաք ձեր աչքովը սորա քաջագործութիւնը՝ որ մեր փառապանծ կայսերութեանը պատիւ բերեց. և տեղեկանալով՝ որ այս Տրդատը Հայոց Խոսրով մեծ թագաւորի դահաժառանգն է, ուստի ես իմ ձեռքովը այս թագաւորական թագը դնում եմ սորա գլուխը. տալիս եմ սորան այս մեծամեծ և ծանրագին պարգևները և Հռովմէական զօրք, որ գնայ Հայաստան և թագաւորէ իւր ազգի վերայ, ուրեմն կեցցէ կեցցէ Հայոց նորապսակ թագաւոր Տրդատը։

Նախարարներ

Մեծ Կայսր, Տրդատը տրդարև Արշակունեաց Պարթևական

թագաւորների ցեղից Խոսրով մեծ թագաւորի որդին է, դա արժանի է՝ որին արիր այդ մեծ պատիւը. կեցցէ մեր մեծ ինքնակալ կայսրը՝ կեցցէ և Հայոց թագաւոր Տրդատը։

Տրդատ

Ողորմած մեծ ինքնակալ Կայսր, ես իմ պարտականութեանը համաձայն՝ հաւատարմութեամբ մի փոքր ծառայութիւն արի, իսկ դու ո մեծ զիւցազն Կայսր՝ քո մեծութեանը համապատասխան յաւիտենական յիշելու մեծ և ամենամեծ պատիւն արիք ինձ, վերականգնեցնելով իմ հայրենի թագաւորութիւնը, որի համար յայտնում եմ իմ խորին, անկեղծ, և անմոռանալի երախտագիտական շնորհակալութիւնը. կեցցէ, մեծ ինքնակալ Կայսր Դիոկղետիանոսը՝ կեցցէ Հռովմի պարծանքը, Հռովմի փառքը, կեցցէ, կեցցէ միշտ կեցցէ։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Պատգամաւոր

Սուրբ Քրմապետ, Խոսրով մեծի որդի Տրդատը՝ Հռովմէացւոց Դիոկղետիանոս Կայսերից ընդունեց թագաւորական թագ, մեծամեծ պարգևներ և զօրք, նա այսպէս մեծ շքով եկաւ Կեսարիայի կողմերը, այնտեղից ինձ պատգամաւոր ուղարկեց Հայոց նախարարների մօտ, նորանց յայտնեցի Տրդատի թագաւորելը. նախարարներն և Մամիկոնեանց Մամգուն նահապետը մեծ ուրախութեամբ ընդունեցին և խնդոյն գնացին Կեսարիա՝ այնտեղ նորան կրկին թագաւորեցրին. թագադիրը եղաւ Սմբատ Ասպետ Բագրատունին՝ որ Բիւրատեան մեծ Սմբատի ցեղից է, Տրդատը թագաւորական մեծ շքախմբովը գնաց Անի ամրոցը, այնտեղ գտաւ Օտայ նախարարին, որ շատ մեծ հաւատարմութեամբ պահել էր ամրոցը, գանձը, նոյնպէս իւր Խոսրովիդուխտ քրոջը. Օտային տուաւ Հայոց աշխարհի հազարապետութեան պատիւը, իսկ իւր փրկութեան պատճառ եղող Արտաւազդ Մանդակունուն տուաւ Հայոց զօրքի սպարապետութեան պատիւը, և Տաճատին՝ Աշոցաց գաւառի վերայ իշխան կարգեց՝ Արտաւազդի քրոջը Արտաշիրի ձեռքից ազատելու համար, և յետոյ այնտեղից նախարարներից մի քանիսին ցրուեց իրանց զօրքովը գնալ Արարատեան աշխարհը և զգուշանալ երկրի պահպանութեանը, Տրդատն Անիցն էլ գալու է այստեղ. և ինձ ուղարկեց քո սրբութեան մօտ պատգամաւոր՝ ինձ ասաց, «Կերթաս Եկեղեաց գաւառի Երզնկայ աւանը՝ այնտեղ Սուրբ Քրմապետին կասես, որ ահա Տրդատը՝ իւր հօր թագաւորութիւնն առած գալիս է չքնաղազեղ Անահիտ Աստուածուհուն և բոլոր

կուռքերին իւր երախտագիտական շնորհակալութիւնը յայտնելու և այնտեղից պէտք է գնայ Դայլ գետի ափին նստի հացկերոյթի։

Քրմապետ

Պատգամաւոր, ո՜հ այս ի՜նչ մեծ ուրախութիւն է, որ մեզ աւետեցիր. Աստուածներն օրհնեն քեզ, պատրաստութիւնը շուտով կը տեսնենք. ապահով եղէք։

(Քրմապետը քուրմերին եւ քրմուհիներին)

Քուրմեր և քրմուհիներ. խառն երկու հաւասար մասերի բաժանուեցէք, մի մասը այստեղ ընդունելութեան պատրաստութիւնը կտեսնէ, միւս մասը՝ կգնայ և Դայլ գետի ափին կտեսնէ հացկերոյթի պատրաստութիւն։

Քրմեր ու քրմուհիներ

Սուրբ Քրմապետ, պատրաստ ենք և ահա կըսկսենք քո սրբութեան հրամանը աւելի ընդարձակ և փառաւոր կերպով կատարել։

Պատգամաւոր

Շտապեցէք, շո՛ւտ, շո՛ւտ, թագաւորը մօտեցել է ահա քառորդ ժամից յետոյ այստեղ կլինի։

Քրմապետ

Քուրմեր ու քրմուհիներ, մեհեանի դռան առաջ՝ ձեռներիդ ծաղիկների փնջեր բռնած երկու շարքի կանգնեցէք և անահտական աղօթքը ծանր, քաղցր և ներդաշնակ կերգէք։

Քուրմեր և քրմուհիներ

Սուրբ քրմապետ. ահա մենք քո հրամանի համաձայն պատրաստ ենք։

Քրմապետ

Թագաւորն եկաւ, երգեցէք։

Քուրմեր և քրմուհիներ

Հայոց պաշտպան մեծ զիւցուհի,
Վեհ Անահիտ գեղեցկուհի,
Մեր Տրդատին պերճ թագ տուիր,
Հայաստանին լոյս ծագեցիր։
Գեղեցկութեան մեր թագուհի,
Քաղցր սիրոյ աստուածուհի,
Գեղով պճնիր մեր աշխարհը,
Սիրով ձուլիր Հայ որեարը։

Տրդատ

Ողջո՛յն քեզ սուրբ քրմապետ, օրհնիր ինձ և զօրքիս։

Քրմապետ

Հայերիս պարծանք բերող թագաւոր Տրդա՛տ, մեր չքնաղ-

զազեղ Անահիտ մեծ աստուածուհին, որ անքուն աչքով պահապան է Հայ ազգին և մեր հայրենիքին, օր առաջ ինձ յայտնեց ասելով. ես պահել եմ Խոսրով մեծ թագաւորի որդին. նա Հռոմում Կայսեր ձեռքով գլխին թագաւորական թագ կընդունէ, կգայ Հայաստան և հրապաշտ պարսիկներին կվանէ Հայաստանից և իւր մեծամեծ քաջագործութիւններովը հօրը նման մեծ է կոչուելու. և ահա այսօրուանից ես ինքս քո մեծութեանը կնքում եմ «մեծ» կոչուելու պատուանունը, ուրեմն թող մեր մեծ Անահիտը և մեր բոլոր կուռքերը քեզ մեծամեծ քաջագործութիւններով միշտ մեծ պահեն և քո զօրքին և ընդհանուր Հայ որեարին՝ սէր, հաւատարմութիւն և ոյժ առատաբաշխեն Հայաստանի փառքի ու պատուի համար։

Տրդատ (Մեհենումը)

Ո՞վ Անահիտ՝ մեծ աստուածուհի, Հայերիս և մեր սիրելի Հայաստանին պաշտպան. հաւատում եմ, որ քո շնորհքն էր՝ որ ինձ օգնեց և գլխիս թագ դրեց, իմ հայրենի թագաւորութիւնը վերականգնեցնելու և հօրս վրէժը հրապաշտ պարսիկներից առնելու համար, ահա քո այս մեծամեծ շնորհքներիդ համար՝ եկել եմ և լիաձեռն ընծաներով և զոհերով իմ երախտագիտութիւնը յայտնելու քեզ՝ ով իմ պաշտպան չքնաղագեղ աստուածուհի Անահիտ, դու եղիր ինձ և իմ զօրքին ընդ միշտ օգնական, Հայաստանին և Հայ ազգին միշտ պաշտպան։

Քրմապետ

Մեծ թագաւոր, ճաշը Դայլ գետի ափին արդէն պատրաստ է։

Թագաւոր

Սուրբ քրմապետ, այսօր ես ինձ շատ բաղդաւոր և ուրախ եմ զգում, որ եկայ և երախտագիտութիւնս յայտնեցի մեր պաշտպան չքնաղագեղ Անահիտին, ստացայ քո սրբութեան օրհնութիւնը, ուրեմն գնանք և հանգիստ սրտով նստենք հացկերոյթի։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

(Նստած են հացկերոյթի)

Քրմապետ

Այս բաժակը խմում եմ Հայոց մեծաց նորապսակ մեծ թագաւորիդ կենացը և յիշեցնում եմ, որ Պարսկաստանը սարսափեցնող մեր Խոսրով մեծ թագաւոր հօրդ՝ դաւաճանութեամբ մահիցը յետոյ՝ մինչև օրս Հայաստանը որբ էր մնացել, և ահա այսօր քո պանծալի թագովը պատուվում է ազի սև քողը և Հայաստանը կրկին պճնվում է իւր վաղեմի փառքերովը, ուստի մեր չքնաղագեղ Անահիտը և մեր մեհեանի բոլոր կուռքերը թող օրհնեն քեզ, օգնեն քեզ և միշտ պաշտպան լինին քեզ, քո նախարարներին և քո զօրքին, որով կարողանաք Հայաստանը իւր առաջին փառքիցն աւելի բարձր դիրքի վերայ կանգնեցնէք, կեցցէ մեր մեծ թագաւոր Տրդատը։

Թագաւոր

Սուրբ քրմապետ, շնորհակալութիւնս յայտնելով քո սրբութեանը՝ այս բաժակը խմում եմ Հայաստանի և Հայերի պաշտպան մեր Անահիտ չքնաղագեղ աստուածուհու փառքին։

Նախարարներ

Մեծ թագաւոր, երբոր դու ամենից առաջ պատվում ես մեր աստուածուհուն. չես մոռանում նորա երախտիքը և պաշտպանութիւնը, ուստի մենք մեր սրտագին զգացմունքով խմում ենք քո կենացը. կեցցէ մեր թագաւորը, կեցցէ մեր մեծ Տրդատը։

Թագաւոր

Գրիգոր, դու՝ որ երկար ժամանակ և մինչև օրս ինձ հաւատարմութեամբ և ձրի ծառայում ես, ես չեմ մոռացել քո ծառայութիւնը, այսուամենայնիւ այսօր էլ նոյն ծառայութիւնդ կատարիր. սա պսակ՝ ծառերի խիտ ոստերից և ծաղկի փնջեր տար մեհեանը և իմ կողմից կրկին երախտագիտութիւնս յայտնելու համար՝ նուիրիր մեր պաշտպան չքնաղագեղ Անահիտ աստուածուհուն։

Գրիգոր

Տէր թագաւոր, ես պաշտում եմ ճշմարիտ Աստուծուն. ես չեմ յանձն առնել պատիւ և երկրպագութիւն մատուցանել կուռքերին։

Թագաւոր

Դու, մի օտարական և անաշխարհիկ մարդ, եկար և մեզ ապաւինեցար, ինչպէս ես համարձակվում պաշտել այն Աստուածը՝ որին ես չեմ պաշտում, այնքան տարիներ են, որ ես տեսայ քեզ՝ որ դու քո բոլոր ուժովը և միամտութեամբ ինձ ծառայեցիր. և ես գոհ էի քո աշխատանքներից. և մտքումս ունէի քեզ ապրեցնել. այժմ դու ինչու իմ կամքը չես կատարում, լաւ իմացիր՝ որ ոչնչացրիր քո ծառայութիւնը՝ որ ինձ ծառայեցիր, որին ես ինքս եմ վկայ, արդ՝ փոխանակ կեանքի՝ կաւելացնեմ քեզ նեղութիւններ, փոխանակ պատուի՝ անարգանքներ, փոխանակ բարձրացնելու՝ և առաջ տանելու՝ բանտ, կապանք և մահ։

Գրիգոր

Տէր թագաւոր, Աստուածից հրամայուած է, որ ծառանեը՝ մարմնաւոր տէրերին հնազանդ լինին, ինչպէս որ վկայեցիր՝

որ ես իմ բոլոր սրտովը հաւատարմութեամբ ծառայել եմ քեզ։

Իսկ Աստուծոյ պատիւը և պաշտօնը՝ չէ կարելի որև է մէկին տալ. մեր տէր Աստուածն ստեղծել է երկինքը, երկիրը և նորանց միջի բոլոր արարածները. նորանց բոլորին էլ զարմանալի կարգաւորութեամբ՝ իւրեանց էութեանցը համաձայն դրել է բարեկարգ վիճակի մէջ, տես արևը, լուսինը և բոլոր աստղերը՝ ինչպէսի զարմանալի կարգաւորութեամբ իրանց շրջաններումն՝ իրանց ընթացքը՝ առանց մի մազաչափ սխալուելու կատարում են, այն էլ իրանց ստեղծման օրից մինչև օրս. տես երկիրը և իւր միջի բոլոր արարածները. տես. նորանց ամեն մէկին՝ ինչպէս զարմանալի կերպով որոշ որոշ կարգի մէջ է դրել, որոշ որոշ կերպաւորումն տուել, կերպ կերպ ուժերով և բնաւորութեամբ զարդարել. իւրաքանչիւրին ծնունդ, աճելութիւն և բեղմնաւորումն ընձիւղել, ժամ ու ժամանակ որոշել, ուրեմն ինչպէս կարելի է՝ անսահման իմաստութեամբ ստեղծագործող Աստուծոյ փառքն ու պատիւը տալ մարդկանց ձեռքով կոկուած ու շինուած ոսկեղէն, արծաթեղէն, խեցեղէն և փայտեղէններին, որ աչք ունին՝ բայց չեն տեսնում. ձեռք ունին՝ բայց չեն գործում. ոտք ունին՝ բայց չեն շրջում. իրանք իրանց տեղերից չեն կարող մի մազաչափ՝ ոչ առաջ և ոչ յետ շարժիլ. ուրեմն ինչպէս կարող են մարդկանց օգնել և կամ պատժել։

Իսկ՝ որ ասում ես. փոխանակ կեանքի՝ կաւելացնեմ քեզ նեղութիւններ. այդպէսով դու ինձ այս անցաւոր կեանքիցը հանելով կմացնես իմ Փրկիչ Յիսուսի Քրիստոսի երկնային անմահ թագաւորութիւնը։ Փոխանակ պատուի՝ կտամ անարգանքներ, այդպէսով չէ՞ թէ կտաս ինձ անարգանքներ՝ այլ կտաս ինձ այն պատիւը՝ որ հրեշտակներն զմայլելի ուրախութիւններով փառաւորելու են տիեզերքի Արարչին։

Փոխանակ բարձրացնելու և առաջ տանելու՝ բանտ. կապանք և մահ. ուր էր, երանի կլինէր ինձ, և սորանից էլ աւելի ինչ բարձրութիւն կարող է հաւասարուել, եթէ Փրկչիս Յիսուսի Քրիստոսի անունով արժանի լինէի բանտի, կապանքների և մահի, որոնք դուն են երկնքի արքայութեանը և որոնցով ուրախ կմանէի Փրկչիս ցանկալի թագաւորութիւնը. և նորա երկրորդ գալստեանը՝ պարզերես կը կանգնէի նորա առաջ։ Իսկ՝ որ ասում ես «մահով յոյսդ կը կտրեմ. մահով ինձ անմահութիւն կը պարգևես, անմահների դասը կդասաւորես, և իմ Աստուծոյ անճառելի սիրահամբոյր տեսութեանը կարժանացնես այն էլ յաւիտեանս յաւիտենից։

Տրդատ

Գրիգորիէ, ասա ինձ, ո՞վ է այն Աստուածն՝ որ դու պաշտում ես. ո՞վ է այն Յիսուս Քրիստոսը՝ որ դու յիշեցիր. և ո՞վ է նա՝ որ քո աշխատանքը վարձատրելու է. ի՞նչ է գալուստը. ի՞նչ են հրեշտակներն. ի՞նչ է ձեր յոյսը և ի՞նչ է մեր յուսահատութիւնը։

(Կարճ կտրելու համար՝ կարելի է երկրորդ մասիցն սկսել)։

Առաջին մասն

Գրիգոր

Ես պաշտում եմ այն Աստուածն՝ որ անստեղծ է, անծին է և անսկիզբն. ծնում է Որդուն և բղխում սուրբ Հոգուն։ Պաշտում եմ Յիսուս Քրիստոսին, որ անստեղծ է, յաւիտեաններից առաջ ծնվում և սկսվում է Հայր աստուածից, և որքան որ Հայրն՝ Հայր Աստուած է. և որդին՝ Որդի Աստուած է։

Պաշտում եմ սուրբ Հոգի Աստուծոյն, որ անստեղծ և անժամանակ է, չէ ծնվում, այլ Հօրիցը բղխում է, Հօրն՝ էակից է և Որդուն՝ փառակից։

Այս երեք անձինքը՝ չէ՞ թէ երեք Աստուած են, այլ մի Աստուած. մի ընութիւն, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն՝ որ ստեղծել է երկնի և երկրի երևելի և անտեսանելի արարածները։ Որդի Աստուածը՝ ժամանակի մէջ իջաւ Մարիամ սուրբ կուսի արգանդը, առաւ նորա արիւնից միաւորեց իւր աստուածութեան հետ, ինն ամսից յետոյ ծնաւ սուրբ Կուսիցը, կատարեալ Աստուածն եղաւ հոգւով, մտքով և մարմնով կատարեալ մարդ. մի անձն, մի դէմ. և միաւորուած մի ընութիւն, Աստուածը մարդացաւ՝ առանց փոփոխման և առանց այլայլութեան. յղութիւնը՝ անսերմ. ծնունդն՝ անապական. ինչպէս որ նորա աստուածութեանը չկայ սկիզբն՝ այնպէս էլ նորա մարդկութեանը չկայ վերջ, Յիսուս Քրիստոսը ինչպէս որ է երեկ և այսօր՝ նոյնպէս է յաւիտեան։

Յիսուս Քրիստոսը երկրի վերայ շրջեց, երեսուն տարուց յետոյ մկրտուեց, Հայր Աստուածն երկնքից վկայեց. թէ՝ դա իմ սիրելի Որդին է, և Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ նորա վերայ. սատանայիցը փորձուեցաւ, նորան յաղթեց. մարդիկներին փրկութիւն քարոզեց, իւր կամքովը եկաւ չարչարանքների. խաչուեցաւ, թաղուեցաւ, թէև մարմնովն մեռաւ՝ բայց միաւորեալ և անբաժանելի աստուածութեամբն կենդանի էր, գերեզմանի մէջ դրուեցաւ, հոգւովն իջաւ դժոխքը, հոգիներին քարոզեց, դժոխքն աւերեց, հոգիներին ազատեց, մեռածների միջից յարութիւն առաւ, աշակերտներին երևեցաւ, երկինքը

համբարձաւ, Հայր Աստուծոյ աջ կողմը նստեց, գալու է՝ նոյն մարմնովը, Հօր փառքովը և Իրան փառաբանող հրեշտակներովը՝ դատելու կենդանիներին և մեռածներին, որ և յարութիւն է լինելու բոլոր մարդկանց և հատուցանելու է արդարներին վարձ՝ յաւիտենական երջանիկ կեանք, և մեղաւորներին պատիժ՝ յաւիտենական դառն տանջանք։

Երկրորդ մասն

Ես պաշտում եմ այն Աստուածն՝ որ փառքովը երկնքումն է, իսկ իւր զօրութեամբն ամեն տեղ և ամէնի մէջ, ինչպէս Արևը երկնքումն է, բայց իւր լուսովը և ներգործութեամբն ամեն տեղ։ Նա է ստեղծել բոլոր արարածներին թէ երկնային և թէ երկրային և բոլորին էլ կարգի դրել, պահում ու պահպանում է։ Յիսուս Քրիստոսն՝ իմ աշխատանքը վարձատրողն է։ Նա է՝ որ կրկին գալու է արդարներին վարձատրելու, մեղաւորներին պատժելու։ Հրեշտակներն՝ ոգեղէն արարածներ են, սպասաւորներ և օգնականողներ Արարչին։

Մեր յոյսը՝ յաւիտենականութեան մէջ մեր բարի գործքերի վարձատրութիւնն է. իսկ ձեր յուսահատութիւնն այն է՝ որ դուք չէք ճանաչում Աստուծոյն և չէք էլ կամենում ճանաչողութիւն ունենալ Աստուծոյ վերայ. ստութիւնը՝ որքան էլ այլանդակ լինի՝ կհաւատաք, իսկ ճշմարտութիւնը՝ որքան էլ պարզ ու պայծառ լինի՝ չէք հաւատալ, չէք էլ ուզենալ հետաքրքրուիլ, որովհետև ձեր գործքերին ձեռք չի տալ։

Տրդատ

Գրիգորիէ, տեսնում եմ, որ դու առասպելներով քո միտքը շփոթեցրել ես, և քիչ է մնում՝ որ իմ միտքն էլ շփոթեցնես, բայց ինչպէս կարելի է, մինթէ մեր Անահիտիցն ու մեր Արամազդիցն էլ ուրիշ Աստուած կայ՝ այդ անհնարին է, բայց որովհետև դու քո այդ բոլոր առասպելներովը անպատուեցիր մեր աստուածներին՝ մանաւանդ Հայերիս պաշտպան մեծ չքնաղագեղ Անահիտին, ուստի ես քեզ կտամ սոսկալի չարչարանքներ. թող քո Փրկիչ Յիսուս Քրիստոսը գայ և քեզ փրկէ։

Տրդատ (Օտային)

Օտայ իշխան, այստեղ կանչիր իմ ատենադպիր Ագաթանգեղոսին և դահճապետին։

Օտայ

Տէր թագաւոր, ահա նորանք։

Տրդատ

Ագաթանգեղոս, Գրիգորի մասին՝ պատժի հրաման եմ արձակելու, և դու ներկայ կլինիս՝ որ իմ հրամայած չարչարանքները, Գրիգորի ինչ կերպ կրել և խօսիլը բոլորը մանրամասնաբար արձանագրես և յետոյ բերես ինձ մօտ։ (Դահճապետին)։ Իսկ դու դահճապետ, քեզ հրամայում եմ, որ դու քո դահիճներովն ամենայն խստութեամբ կատարէք Գրիգորի վերայ այս իմ արձակած խստագոյն հրամանը։

Ա. Գրիգորի ձեռքերը կը կապէք յետևը, երկաթի սանձ կդնէք քերանը, թիկունքի վերայ կդնէք մի մեծ աղաքար, կրծքի վերայ կը կապէք մի անտաշ պինդ փայտ և պարաններով կամրացնէք. մեքենաներով կբարձրացնէք և պալատի պատիցը կը կախէք, և այնպէս կմնայ մինչև եօթն օր։

Բ. Եթէ կենդանի մնայ, այն ժամանակ նորա մի ոտքիցը գլխիվայր կը կախէք, և որքան որ գլխիվայր կախուած լինի՝ նորա տակը աղբ կը ծխէք, և տասը մարդ դալար ճիպոտներով չարաչար կը ծեծեն և եօթն օր այնպէս կը թողնէք։

Գ. Եթէ կենդանի մնայ, նորա սրունքները կդնէք ծոցաւոր փայտի կոճեղներ և չուաններով այնպէս կպնդացնէք, որ նորա ոտքերի մատներից արիւն հոսի։

Դ. Եթէ կենդանի մնայ, նորա ոտների տակը ամբողջապէս երկաթի մեխեր կը խրէք. և ձեռքերիցը կը բռնէք՝ այս կողմը և այն կողմը կը պտացնէք։

Ե. Եթէ կենդանի մնայ, չարաչար և խիստ շատ ուժով անդադար բռունցքներ կը տաք աչքերին և գլխին։

Զ. Եթէ կենդանի մնայ, նորան թիկունքի վերայ կը պառկեցնէք, ձեռքերն ու ոտքերը չորս ցցերից պինդ կը կապէք, գլուխը կը դնէք մամուլի մէջ և եղէգի փող կը դնէք քիթը, և յետոյ աղ, թունդ քացախ և բորակ կը լցնէք քիթը։

Է. Եթէ կենդանի մնայ, ոչխարի մեծ պարկի մէջ կը լցնէք փուի մոխիր, և կանցնէք գլուխը, բայց շնչառութեան համար քիչ թոյլ կանէք, պարկի բերանը կը կապէք վզովը, և այնպէս կը թողնէք մինչև վեց օր։

Ը. Եթէ կենդանի մնայ, նորան գլխիվայր կը կախէք ոտներիցը, նստոյ տեղը ձագար կը դնէք և եռացրած ջուրը կը լցնէք փորը։

Թ. Եթէ կենդանի մնայ, նորան կը կապէք երկու ձեռքերիցը և երկու ոտքերիցը և երկաթի քերիչներով կը քերէք նորա կողերը, որ արիւնը ջրի պէս հոսի։

Ժ. Եթէ կենդանի մնայ, կը քերէք կողովով լիքը երկաթի փշեր, գետնի վերայ իրար մօտիկ կը ցցէք, յետոյ Գրիգորին կը մերկացնէք և այն փշերի վերայ կը պառկեցնէք ու այս կողմը և այն կողմը շուռ ու մուռ կը տաք, որ բոլոր մարմինը ծակոտուի և ինքը արիւնաքամ լինի։

ԺԱ. ԵԹԷ կենդանի մնայ, նորա ծնկները երկաթի կապիճներ կըդնէք, և հաստ սեպերով կըպնդացնէք և այնպէս կախաղան կբարձրացնէք մինչև երեք օր։

ԺԲ. ԵԹԷ կենդանի մնայ, երկաթի պուտուկներով կըհալէք արձիճ, երբոր հալի և ջրիպէս դառնայ՝ այն ժամանակ լցրէք Գրիգորի ամբողջ մարմնի վերայ՝ որ բոլոր մարմինը խանձոտուի։

ԵԹԷ կենդանի մնայ, այն ժամանակ նորան կրբերէք իմ առաջ, որ տեսնեմ թէ իրաւի դեռ կենդանի է, և թէ դարձեալ հաստատ է իւր մոլար հաւատքի վերայ և կրկամենայ մեր ճշմարիտ հաւատքին դալ. ուրեմն գնացէք և այսօրուանից սկըսեցէք չարչարանքները։

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵԼ

Դահճապետ

Մեծ թագաւոր, արդէն լրացաւ ամիսը՝ ինչ որ Գրիգորին սկսեցինք տալ այն բոլոր չարչարանքները՝ որ դու հրամայեցիր մեզ, և այսու ամենայնիւ նա դեռ կենդանի է։

Տրդատ

Ագաթանգեղոսը միշտ ներկայ էր լինում։

Դահճապետ

Այո, ներկայ էր լինում։

Տրդատ

Ագաթանգեղոսին ասացէք արձանագրութիւնը բերէ։

Ագաթանգեղոս

Ահա արձանագրութիւնը։

Տրդատ (փոքր ինչ կարդալուց յետոյ)

Ի՞նչ էք ասում, մի՞թէ նա դեռ կենդանի է. մնում եմ ապշած. որքան մտածում եմ՝ այնքան ինձ աւելի ու աւելի զարմանք է պաշարում. ի՞նչպէս կարելի է, որ մի հողեղէն մարդ՝ այդպիսի անտանելի չարչարանքները կրէ և կենդանի մնայ. Գրիգորին ներս բերէք աչքովս տեսնեմ։

Գրիգոր (Ներս են բերում)

Ողջոյն քեզ, թագաւոր։

Տրդատ

Գրիգորիէ՛, զարմանում եմ, դեռ դու կենդանի՞ ես։

Գրիգոր

Տէր թագաւոր, ես դեռ կենդանի եմ, սորանով իմացիր իմ Աստուծոյ մեծութիւնը, որ Իրա հաւատացող ծառաներին ոյժ և զօրութիւն է տալի համբերելու սոսկալի չարչարանքներին.

ինչպէս տեսնում էք ինձ վերայ՝ որ ամաչէք այն բանի համար, որ փոխանակ երկրպագելու ճշմարիտ Աստուծոյն՝ երկրպագում էք կուռքերին և հաւատում էք նորանց։

Աշոցաց տէր՝ Տաճատ (յայտնութիւն)

Մանդակունի մեծ իշխան, ես Գրիգորին տեսել եմ կեսարիայումը, և գիտեմ նորա ազգատոհմը, նա Անակ Պահլաւունու որդին է։

Մանդակունի

Տաճատ իշխան, Գրիգորին ուղիղ ճանաչում ես, և եթէ ուղիղ է քո պատմածը՝ ուրեմն յայտնեմ թագաւորին։

Տաճատ

Մեծ իշխան, կարող էք թագաւորին յայտնել, իմ գիտեցածը՝ անսխալ ճշմարտութիւն է։

Մանդակունի

Մեծ թագաւոր, այդ Գրիգորն՝ Անակ Պահլաւունու որդին է, որ սպանեց քո հօրը Խոսրով մեծին, որով հանգցրեց Հայերիս լուսավառ ջահը և մեր աշխարհը կորստի մատնեց։

Տրդատ

ԺԳ. ԵԹԷ այդպէս է, հրամայում եմ քեզ դահճապետ, որ Գրիգորին կապած ոտքերով, կապած ձեռքերով, և կապած պարանոցով կը տանէք Արտաշատ. և այն անհնարին Խոր-Վիրապի մէջ կիջեցնէք, որ այնտեղ և եթ մեռնի։

Դահճապետ

Մեծ թագաւոր, պատրաստ եմ այսօր և եթ տանել նորան Արտաշատ։ (տանում է Արտաշատ)

Արտաշատցիք

Տղերք դուրս եկէք, տեսէք ահա ոտքերով, ձեռքերով և պարանոցով մի կապած են բերում Խոր-վիրապը ձգելու։

Ծերունիներ

Խեղճ մարդ, տեսնես ինչ ծանր յանցանք է գործել, կամ գուցէ անմեղ տեղն է փորձանքի մէջ ընկել, թող մեր չքնաղագեղ Անահիտը օգնէ դորան, բայց ինչպէս կարելի է օգնել, երբ այլևս չկայ ոչ մի հնարաւորութիւն։

(Դահիճները Գրիգորին իջեցնում են Խոր-Վիրապը)։

Դահիճներ

ԺԴ. Գրիգորիէ՛, ահա քեզ իջեցրինք քո սիրած արքայութիւնը, այդտեղ կաց յաւիտեան. թող քո գիտեցած հրեշտակները քեզ ողջ պահեն։

Վ ե ր ջ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հռիփսիմեանց նահատակութիւնը, Տրդատի խոզի կերպարանքի փոխուիլը, Լուսաւորչի ելն ի Վիրապէն, Լուսաւորչի տեսիլը, Տրդատի և նախարարների բժշկուիլը, Լուսաւորչի Կեսարիա գնալը և եպիսկոպոս ձեռնադրուիլը. ժողովրդներին մկրտելը, Տրդատի հետ մեծ շքախմբով Հռոմ գնալը և վերադառնալը. Հովիւները, Գառնիկ ճգնաւորը, Լուսաւորչի նշխարաց Գիւտը և Գիւտ եպիսկոպոսի ներբողը։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Դիոկղետիանոս

Ղուկիոս իշխան, գնա և մեր պատկերահաններից՝ իրանց արհեստին աւելի հմտագոյները բեր և ներկայացրու ինձ։

Ղուկիոս (գնում եւ բերում է)

Մեծ Կայսր, ահա սորանք են այն քաջահմուտ պատկերահանները, որ հրամայեցիր ինձ ներկայացնել ձեր մեծութեանը։

Կայսր

Նկարիչ վարպետներ, ես կամենում եմ կին առնել, բայց իմ առնելու կինը՝ պէտք է լինի այնպիսի գեղեցկուհի՝ որի համահաւասարը չըգտնուի ամբողջ աշխարհիս մէջ, այս պատճառով ես կտամ ձեզ հրովարտակներ, որոնցով իրաւունք կունենաք անարգել մտնել տէրութեանս միջի բոլոր բնակարանները և ինչ օրիորդի՝ որ հաւանիք և ուզածիս համահաւասարը գտնէք՝ նորա պատկերը՝ իսկոյն տախտակի վերայ ճշտութեամբ հասակաչափ և նմանատիպ կնկարէք և շուտով կբերէք։

Պատկերահաններ

Մեծ Կայսր, ապահով եղիր, մենք էլ ունինք սուր ճաշակ, քո հրամանը կարող ենք ամենայն ճշտութեամբ քո կամեցածի համապատասխանը կատարել։

Կայսր

Ղուկիոս իշխան, ատենադպրին պատուիրիր, որ սորանց յանձնէ իմ հրամայած հրովարտակները, այլև գանձարանիցը ծախքերի համար՝ սորանց առատ դրամ բաշխիր։

Ղուկիոս (հրամանը կատարում է)

Մեծ Կայսր, պատկերահաններին յանձնեցի թէ հրովարտակները և թէ բաշխեցի առատօրէն դրամ, և այնպէս ոգևորուած ճանապարհ դրի։

Կայսր

Շատ լաւ արիր, տեսնենք արդեօք արդիւնքը՝ կունենայ իւր արժէքը։

Ղուկիոս

Մեծ Կայսր, վստահ եմ, և մեծ յոյս ունիմ, որ պատկերահանները տալու են արժէքաւոր արդիւնք։

Կայսր

Ղուկիոս իշխան, այժմ կարող էք գնալ և սպասել տեղեկութեան։

Ղուկիոս

Մեծ Կայսր, ահա ես կը գնամ, և այսու ամենայնիւ յոյս ունիմ՝ որ ուրախ վերադառնամ։

Կայսը

Ղուկիոս իշխան, չըկայ մի գործ՝ որ քո ձեռին յաջողութիւն չը գտնէ. գնա բարեաւ. յոյսս մեծ է քո վերայ։

(Ղուկիոսը գնում է եւ շուտով վերադառնում։)

Սպասաւոր

Մեծ Կայսր, Ղուկիոս իշխանը վերադարձաւ։

Կայսը

Միթէ այսպէս շուտ։

Ղուկիոս

Ողջոյն քեզ մեծ Կայսր։

Կայսը

Ողջ եկիր իշխան Ղուկիոս։

Ղուկիոս

Մեծ Կայսր, շտապում եմ աւետել քեզ, պատկերահաններն դարձել և բերել են քո ցանկացած գեղեցկուհու պատկերը։

Կայսը

Ո՞ւր են, ներս հրաւիրիր։

Պատկերահաններ

Ողջոյն քեզ մեծ Կայսր։

Կայսը

Ողջ եկիք յարգելի պատկերահաններ, պատմեցէք՝ ինչ արդիւնք ունեցաւ ձեր գործունէութիւնը և ինչու այսպէս շուտ դարձաք։

Պատկերահաններ

Մեծ Կայսր, աստուածները մեզ տուին մեծ յաջողութիւն, որովհետև երբոր քո մօտիցը դուրս գնացինք, անմիջապէս դիմեցինք մեր Հռովմի կուսանաց վանքը, այնտեղ գտանք շատ մեծ կոյսեր. նորանց գլխաւորի անունը Գայիանէ է նորա սանի անունը Հռիփսիմէ՝ որ թագաւորական ցեղից է, տեսնելով նորա հրաշալի և աննման գեղեցկութիւնը՝ ապշեցանք, հիացանք և մնացինք զարմացած, նորա պատկերը իսկոյն նկարելով շտապեցինք հասցնել քեզ ահա այն չնաշխարհիկ գեղեցկուհու պատկերը։

Կայսր

Ո՜, այս ինչ հրաշալի գեղեցկութիւն է. միթէ հողեղէնն էլ կարող է այս աստիճանի գեղեցկութիւն ունենալ, ես յափշտակուեցայ, մնացել եմ հիացած, չեմ կարողանում աչքս այս անմման գեղեցկուհու պատկերից հեռացնել։

(Դառնալով Ղուկիոսին)

Այս պատկերահանները՝ տար. լի և առատ վարձատրիր և շուտով դարձիր։

ՂՈՒԿԻՈՍ

Մեծ Կայսր, պատկերահանները՝ արժանաւոր կերպով վարձատրեցի և գոհ սրտով ճանապարհ դրի։

ԿԱՅՍՐ

Ղուկիոս իշխան, ուրեմն պատուիրիր տեսնել հարսանիքի շքեղ պատրաստութիւն. բայց շուտով՝ որովհետև համբերութիւն չունիմ, կարծում եմ թէ, այն հրաշալի գեղեցկուհուն՝ ձեռքիցս կըխլեն, թէև ով կարող է յանդգնիլ մաքոցն անգամ անցնել այդպիսի մի լրբութիւն. սակայն ես անհանգիստ եմ. այս պատճառով կուզեմ մի ժամ առաջ տեսնել նորա արեգակնափայլ գեղեցկութիւնը։

ՂՈՒԿԻՈՍ

Մեծ Կայսր. փոքր ինչ համբերութիւն և ահա կլինին տեսնուած բոլոր պատրաստութիւններն իւրեանց շքեղութեամբ հանդերձ։

ԿԱՅՍՐ

Ղուկիոս իշխան, Հռովմը չը տեսած՝ շքեղ պատրաստութիւն տեսնելուց յետոյ՝ շտապիր գեղեցկուհու վիճակիցն էլ բերել որ և է մի տեղեկութիւն։

(Ղուկիոսը գնում է և շուտով վերադառնում)

ՂՈՒԿԻՈՍ

Մեծ Կայսր. ցաւօք սրտի վստահանում եմ ասել քո մեծութեանը՝ որ հարսանիքի համար մեր տեսած պատրաստութիւնները զուր անցան, որովհետև այն կոյսերը գիշերս բոլորն էլ փախել և անյայտացել են, բոլոր կողմերն որոնող մարդիկ ուղարկեցինք, ոչ մի տեղից չկարողացանք մի որև է տեղեկութիւն առնել։

ԿԱՅՍՐ

Ի՞նչ էք ասում, կատա՞կ էք անում, գնացէք և որոնեցէք. եթէ այն հրաշագեղին չը գտնէք՝ ամբողջ Հռովմը՝ քեզ էլ հետը կրակի բոցերի մէջ կտապակեմ, Հռովմը աւերակների կոյտ կը դարձնեմ, բոլոր շէնքերում խուզարկութիւն կատարեցէք, տէրութեանս բոլոր կողմերը, գիւղերը, աւանները, քաղաքները, մեհեանները, վանքերը, խուզարկուներ ցրուեցէք, ժամանակ մի կորցնէք, շուտ գնացէք և հրամանս կէտ առ կէտ կատարեցէք՝ բայց խիստ ճշտութեամբ։ (Կայսրը առանձին)

Սիրտս արդէն վկայում էր, որ այդ գեղեցկուհին ձեռքիցս գնալու է՝ ահ, գեղեցկուհի՝ որքան քո սոսկ ձեռանկար պատկերիդ տեսքովը ինձ մոլորեցրիր, այժմ բիւրապատիկ քո կոչստովը ինձ բոլորովին յիմարեցրիր, բայց չէ, ես երբէք չեմ հանգստանալ՝ մինչև որ քեզ չը գտնեմ։

ՂՈՒԿԻՈՍ

Մեծ Կայսր, ահա ամիսը լրացաւ և մտնում ենք երկրորդ ամիսը՝ ինչ որ ամենայն խստագոյն միջոցներով որոնում ենք այն հրաշագեղին, սակայն ոչ մի տեղից չը կարողացանք մի տեղեկութիւն ստանալ, միայն այսօր Հայաստանից Քաջբերունի մի Հայ է եկել և այն կոյսերի մասին ունի ստոյգ տեղեկութիւն։

ԿԱՅՍՐ

Դարձիր, և այն Հային շուտ բեր այստեղ։

ՂՈՒԿԻՈՍ

Մեծ Կայսր, ահա այն Հայը։

ԿԱՅՍՐ

Քաջբերունի, լսեցի որ դու Հայ ես և Հայաստանից նոր ես եկել, այլ և տեղեկութիւն ունիս այստեղից փախչող կոյսերի վերաբերութեամբ, ուստի նորանց մասին գիտեցածդ պատմիր։

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

Մեծ Կայսր, ես Վան քաղաքիցն եմ, գործով գտնվում էի մի քանի օրով Վարագում՝ որ մեզ շատ մօտիկ է, այնտեղ եմ կան երեսուն և եօթն կոյսեր, նորանք ասում էին՝ թէ մենք գնալու ենք Վաղարշապատ Հայոց մեծաց արքայանիստ քաղաքը. և այնտեղ՝ այն կռապաշտ Հայերի մէջ բնակելու։

ԿԱՅՍՐ

Քաջբերունի, դու մօտիկ օրերումս Վաղարշապատում եղել ես։

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

Մեծ Կայսր, մի ամիս առաջ ես Վաղարշապատումն էի, որովհետև թագաւորական պալատումը գործ ունէի, և այս պատճառով այնտեղ բաւական ժամանակ մնացի, մինչև գործս վերջացրի։

ԿԱՅՍՐ

Տրդատ թագաւորի վերայ ինչ տեղեկութիւն ունիս, ինչպէս է թագաւորում, ժողովուրդը նորանից գոհ է։

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

Մեծ Կայսր, Տրդատն իւր թագաւորութեան բոլոր ժամանակումը՝ քանդում է Պարսից երկիրը, աւերում է Ասորեստանի նահանգը՝ քանդում է Պարսից երկիրը, աւերում է Ասորեստանի աշխարհը. չարաչար ջարդում և տակն ու վերայ է անում թշնամիների բանակը, այս պատճառով առակ արած ասում են. «Տրդատը սիգալով աւերեց գետերի թումբերը. և իւր սիգալու ժամանակներումը՝ ցամաքացրեց ծովերի յորձանքը»։

Յիրաւի Տրդատը սէգ է՝ զգեստներով, սէգ է՝ ուժով և ոսկոռների ուժեղ ու պինդ հաստատութեամբ. յաղթ մարմնով, քաջ և անհնարին պատերազմող. բարձր և լայն հասակով, միշտ պատերազմող. քաջութիւնների համար՝ պարծանքի մեծամեծ անուն է ժառանգում. յաղթութեան հոյակապ շքեղութիւնը՝ բոլոր աշխարհ ոտքի է կանգեցնում, թշնամիներին մեծ կոտորածներով ջարդ ու կոտոր է անում, հայրենեացը փառքի ու պատուի համար՝ անվեհեր ոգւով վրէժխնդիր է լինում։

Ասորիներից առնում է մեծամեծ աւար. Պարսից զօրքը բնաջինջ անելով մթերում է անհաշիւ կողոպուտ. զօրքի և ժողովրդի տները լցրել է հարուստ աւարներով։

Հայոց բոլոր նախարարները, զօրքը և բոլոր Հայերը՝ ոչ միայն գոհ են Տրդատից՝ այլ նորան պաշտում են և նորա անունովն երդվում։

Կայսր

Ղուկիոս իշխան, պատուիրիր Ատենադպրին, որ Տրդատ թագաւորի վերայ մի հրովարտակ պատրաստէ, որի մէջ մանրամասն յիշէ քրիստոնեաների մոլար աղանդի և կուսանաց փախուստի մասին։

Ղուկիոս (հրովարտակը պատրաստում ու ընթերում է)

Մեծ Կայսր, Հրովարտակն արդէն պատրաստ է։

Կայսր

Բեր տեսնեմ (կայսրը առնում եւ տեսնում է) շատ լաւ է գրուած, շուտով սուրհանդակի ձեռքով հասցրու Հայոց թագաւոր Տրդատին։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Օտայ

Մեծ թագաւոր, Դիոկղետիանոս Կայսերից՝ ձեր մեծութեան անունով հրովարտակ է եկել։

Տրդատ

Օտայ իշխան, հրովարտակը բեր և տուր ատենադպրին՝ որ կարդայ։

Հրովարտակ (Ատենադպիրը կարդում է)

«Ինքնակալ Կայսր Դիոկղետիանոս՝ մեր սիրելի աթոռակից «եղբայր Տրդատին ողջոյն։

«Թող գիտենայ՝ մեր նիզակակից քո եղբայրութիւնը՝ այն «չարիքների մասին, որ միշտ մեր մէջ պատահում են քրիստո«նեաների մոլար աղանդիցը, որ մեր տէրութիւնը՝ բոլորովին «անպատուած է լինում նորանց ուխտից և մեր թագաւորութիւ«նը արհամարհուած նորանցից, և ոչ մի համեստութիւն չկայ «նորանց մէջ, որովհետև նորանք մի խաչուած մեռածի են պաշ«տում, և փայտի են երկրպագում, սպանուածների ոսկոռները «պատվում են, այն մահը՝ որ իւրեանց Աստուծոյ համար է ի«րանց փառք ու պատիւ են համարում։ Եւ մեր արդար օրէնք«ներից դատապարտուած են լինում, որովհետև մեր նախնի՝ մեր «առաջին հայրեր թագաւորներին դառնացնելով ձանձրացրին. «որ ահա մեր սրերը բթեցան՝ իսկ նորանք մեռնելուց չըզար«հուրեցան։ Որովհետև նորանք մի խաչուած Հրէայի հետ մո«լորուել են, թագաւորներին անպատուել են սովրեցնում, և «մինչև անգամ մեր աստուածների պատկերները անարգել են «ուսուցանում։

«Այլև լուսաւորների, արեգակի, լուսնի և աստղերի զո«ռութիւնը՝ ոչինչ են համարում, մանաւանդ ասում են այն Խա«չուածի՝ ստեղծուածներ. աստուածների պատկերները՝ անբողջովին անարգել են ուսուցանում, և բոլոր աշխարհն աստուածների պաշտամունքից փոխեցին, մինչև անգամ կնիկներին՝ «մարդիկներից և մարդկանցը՝ կնիկներից կենդանի իրարից հե«ռացրին, թէև կերպ կերպ պատիժներով տանջեցինք. բայց նո«րանց աղանդը աւելի բորբոքուած տարածուեցաւ, թէև բիւ«րանց աղանդը աւելի բորբոքուած տարածուեցաւ, թէև բիւ«րապատիկ խիստ սարսափներ թափեցինք նորանց վերայ, սա«կայն նորանց արիւնի սաստիկ հեղումը՝ աւելի բղխեց և բազ«մապատկեց նորանց ուսումը։

«Արդ՝ այնպէս պատահեց, որ ես տեսայ նորանց աղան«դիցը մի օրիորդ՝ կոյս և գեղեցիկ, կամեցայ նորան ինձ կին «առնել, բայց նորան էլ համարձակեցան հեռացնել ինձանից և «մինչև անգամ նա ցանկութեամբ չը փափագեց ինձ՝ ինչպէս «թագաւորի, մինչև անգամ նորանք իմ խիստ սպառնալիքնե«րիցն էլ չը վախեցան, այլ աւելի իւրեանց աղանդի համար՝ «ինձ աղտեղի պիղծ և դարշ համարեցան. և նորան իւր սնու«ցիչ դայեակովը ձեր տէրութեան կողմերը փախցրին։

«Արդ՝ եղբայր մեր, թող քեզ նեղութիւն և ջանք լինի, որ «ձեր կողմերումը՝ ուր որ լինի, նորանց հետքը աշխատիք գտնել, «այլև նորանց՝ որոնք նորա հետ են դայեակովը իմիասին, մա«հուան վրէժի արժանի կանես. իսկ այն չքնաղագեղ գեղեցկու«հուն՝ ինձ կուղարկես. և եթէ նորա գեղեցկութեան տեսքը քեզ «հաճելի կլինի՝ այդտեղ քեզ մօտ կպահես, որովհետև Ցունաց «աշխարհիս մէջ նորա նմանը չըգտնուեցաւ երբէք»։

Ողջ եղիր աստուածների պաշտամունքների բոլոր պատուով։

Տրդատ

Օտայ իշխան, հրամայում եմ քեզ, որ այս հրովարտակի մէջ յիշուած հրաշագեղ Հռիփսիմէին և իւր ընկերներին գտնե-

լու համար՝ խստագոյն պատուէրներով խուզարկուներ կուղարկես տէրութեանս բոլոր կողմերը՝ որ նորան որոնեն, գտնեն և բերեն։

(Տրդատն առանձին)

Մի օրիորդ՝ որ լինի այնքան հրաշագեղ, որի նմանը չը գտնուի Յունաց մէջ, և այդպիսի մի թանկագին որս ընկնի իմ ձեռը և ես ձեռիցս բաց թողնեմ, դա անկարելի է։

(Շարական—երգել.)

Լուսն թագաւորք և լցան խնդութեամբ, որսալ յանձն առին զգաղտնի մեծութեան, պարգևել իրերաց խոստանային բանիւք և ծածուկ հնարիւք գողանալ ի միմեանց։

Օտայ

(Օտան գնում է եւ շուտով վերադառնում)

Ողջոյն ձեզ, մեծ թագաւոր։

Տրդատ

Ողջ եկիր Օտայ իշխան՝ պատմիր՝ արդեօք ի՞նչ տեղեկութիւն ունիս։

Օտայ

Մեծ թագաւոր, ձեր մեծութեան հրամանի համաձայն, թէև բոլոր կողմերը խուզարկուներ արձակեցի, ճանապարհները փակել տուի, սակայն զարմանալին այն է, որ մեր որոնածները՝ արդէն մեր քաղաքի և մեր աչքի առաջն են ընակութիւն հաստատել՝ այստեղ այգիների մի հնձանի մէջ։

Տրդատ

Օտայ իշխան, նորանց մասին՝ ուրիշ ի՞նչ տեղեկութիւն ունիս, և կամ ի՞նչ կարգադրութիւն արել ես, պատմիր մանրամասնութեամբ։

Օտայ

Նորանցից մէկը գիտէ ուլունքներ շինել, նորա վաճառքովը ձեռք են բերում իրանց օրական ապրուստը, պատահմամբ մի մարդ տեսնում է այդ կոյսերին և նորանց մէջ Հռիփսիմէին. նորա գեղեցկութեան վերայ զարմանալով՝ սկսում է քաղաքի մէջ պատմել, այս լուրը տարածուելով հասնում է նախարարներին և մեծամեծներին, որոնք խուռն ժողովրդի մեծ բազմութեամբ գնում են հնձանը տեսնելու այն հրաշագեղ գեղեցկուհուն. երբոր այս լուրն ինձ հասաւ՝ իսկոյն մի գունդ զօրքով շրջապատել տուի այն հնձանը՝ որ չը լինի թէ մեր մօտիցն էլ փախչին ուրիշ կողմեր։

Տրդատ

Դու ինքդ էլ՝ աչքովդ տեսար այն հրաշագեղին։

Օտայ

Մեծ թագաւոր, տեսայ՝ բայց չեմ կարող տեսածիս գեղեցկութիւնը բերանով նկարագրել, ամբողջը այսքանով կարելի է գաղափար կազմել. այն օրիորդն իւր անզուգատիպ գեղեցկութեամբը. պէտք է հաւատալ՝ որ նա մարմնացած աստուածուհի է։

Տրդատ

Եթէ իրաւի այդպէս է, ուրեմն այն հրաշագեղ կեղեցկուհուն՝ իրան արժանի պատուով կբերէք պալատս, ուստի նորա համար տարէք ոսկեպատ գահաւորակ, սպասաւորներ, այլև ազնիւ. գեղեցիկ և փափուկ հանդերձներ, որ նորանցով զարդարուի և պատուով մտնի քաղաք։

(Դառնալով Մանդակունուն)

Իշխան Մանդակունի, այն հրաշագեղ գեղեցկուհուն պատուով ընդունելու համար՝ պատուիրիր տեսնել չը տեսնուած շքեղագոյն պատրաստութիւն։

Մանդակունի (վերադառնալով յայտնում է)

Մեծ թագաւոր, պատուիրեցի՝ և ըստ այնմ տեսնուեցան խիստ շքեղագոյն պատրաստութիւն։

Օտայ (վերադառնում է)

Ողջոյն ձեզ մեծ թագաւոր։

Տրդատ

Օտայ իշխան, ի՞նչ է, ինչո՞ւ միայնակ դարձել ես, չը լինի թէ նորանք մեր ձեռքիցն էլ փախել են։

Օտայ

Ո՛չ, մեծ թագաւոր, չեն փախել։

Տրդատ

Ապա ուր է նա, ինչո՞ւ չես բերել, մի դուցէ, որ և է մի ձախորդ դէպք է պատահել. պատմիր։

Օտայ

Մեծ թագաւոր, մենք այստեղից ուրախ սրտով գնացինք, որ այն գեղեցկուհուն պատուով բերենք, բայց նա չը կամեցաւ գալ. թէև շատ համոզեցինք և շատ ստիպեցինք՝ սակայն երբէք հնար չեղաւ արդ՝ ձեր մեծութեանը՝ աւելի ստոյգ և մանրամասն տեղեկութիւն տալու համար՝ նորանց մօտ պատահածը և նորանց խօսեցածը անդամ նշանագրողները նշանագրեցին, որոնց հետ նշանագրեց և ձեր մեծութեան ատենադպիր Ագաթանգեղոսը, և նորանք ահա այստեղ են։

Տրդատ

Նշանագրողներին ներս կանչիր։

Օտայ

Ահա սորանք են նշանագրողներն։

Տրդատ

Բոլորի նշանագրածները համեմատել էք, իրար համապատասխան են։

Օտայ

Ագաթանգեղոսն համեմատել է և գտել է խիստ համապատասխան։

Տրդատ

Ուրեմն դու՝ Ագաթանգեղոս, կարդա՛ քո նշանագրածը։

Ագաթանգեղոս (*կարդում է արձանագրութիւնը*)

Գայիանէն երբոր տեսաւ այն շքեղ պատրաստութիւնը՝ սկսաւ իւր սանի Հռիփսիմէի հետ այսպէս խօսիլ. «Ցիշիր իմ որդի, որ դու թողիր քո հայրենի թագաւորութեան ծիրանին և ոսկէկուռ շքեղ աթոռը՝ ցանկացար Քրիստոսի անանցանելի ճառագայթարձակ լուսոյ թագաւորութեան։ Դու որդեակ, քո անցաւոր ընութեան ծիրանիները անարգեցիր, այժմ քո սուրբ համեստութիւնը կտաս այս բարբարոս աշխարհի շներին կերակուր։ Քաւ լիցի քեզ որդեակ, որ այդպէս լինիս, այլ մեզ՝ քեզ հետ ի միասին ընդունելու է Նա՝ որ մեզ մանկութիւնից առաջնորդեց մինչև այսօր և այս ժամը՝ որ արդէն հասել է»։

Հռիփսիմէն երբոր տեսաւ այն մեծ ամբոխը և երբոր լսեց իւր սուրբ դայեակի խօսքերը՝ վառուեցաւ իւր բուռն ոգևորութեամբ, ձեռքերը խաչաձև տարածեց և սկսաւ բարձրաձայն աղօթելով ասել «Ամենակալ Աստուած, դու՝ որ Նոյին ապրեցրիր հեղեղի ջրերից. դու՝ որ Աբրահամին պահեցիր ամբարիշտ Քանանացիներից, դու՝ որ Սառային և Ռեբեկային պահեցիր նախատելի պղծութիւններից. արդ՝ մեզ էլ ապրեցրու այս մեծ չարիքից. զրաց՛ր մեզ՝ որ այս պատերազմի մէջ յաղթող դուրս գանք»։

Եւ նոյն ժամուն բոլոր կոյսերը սկսեցին լալով բարձրաձայն ասել. «Ո՛վ մեր Տէր Աստուած, անհնարին է՝ որ մեծութիւնները մեզ յաղթեն. փափկութիւնները՝ մեզ խախտեն. թագաւորութիւնները՝ մեզ գրաւեն, հալածանքները՝ մեզ նեղեն. տանջանքները մեզ ջնջեն. թէև բիւր կերպ կերպ տանջանքներով մեզ չարչարեն և զարհուրելի մահով մեզ մեռցնեն, մենք չենք թողնել մեր Փրկիչ Յիսուսը։

Անհնարին կլինի մեզ, որ այս անցաւոր կեանքը՝ փոխենք յաւիտենական կեանքի հետ, որի թագաւորը՝ հաստատ և անփոփոխ է և բարիքը անանցանելի, և այսպէս ո՛չ խորութիւնները, ոչ բարձրութիւնները, ոչ վիշտերը, ոչ չարչարանքները, ոչ կապանքները, ոչ տանջանքները, ոչ հուրը, ոչ ջուրը, ոչ

սուրը, ոչ զբօսանքները, ոչ ստութիւնները, ոչ մեծութիւնները, ոչ աղքատութիւնները, ոչ այն աշխարհը, ոչ այս աշխարհը, ոչ կեանքը, ոչ մահը և ոչ մէկը կարող է մեզ հեռացնել Յիսուսի սիրուցը, որովհետև նորան նուիրեցինք մեր կուսութիւնը, նորան աւանդեցինք մեր սրբութիւնը, նորան ենք ճնում և նորա սիրոյն՝ փափակելով սպասում ենք, մինչև որ նորա փառքի առաջ կանգնինք առանց ամօթի և պատկառանքի»։

Այս ժամուն երկնքիցը խիստ ահաւոր որոտումն եղաւ և ձայն լսուեցաւ, որ նորանց զօրացնում էր և այս ահաւոր որոտումնքիցը՝ ժողովուրդը վախիցը իրար վերայ յորձանք տուին, շատերին՝ ոտնատակ արին և շատերն իրար զարկուելով սպանուեցան։ Ահա՛ այս են այն անցքերն՝ որ մենք մեր աչքերովը տեսանք և մեր ականջներովը լսեցինք և ստուգութեամբ նշանագրեցինք։

Տրդատ

Շատ լաւ նշանագրել էք, գո՛հ եմ ձեզանից՝ գնացէ՛ք։

(*Դառնալով Օտային*)

Օտայ իշխան, այն գեղեցկուհին՝ որովհետև չը կամեցաւ շքեղ պատուով գալ, ուստի գնացէք և բռնութեամբ բերէք պալատս՝ և մտցրէք արքունի սենեակը։

Օտայ (*Դառնալով հնձանից պատմում է թագաւորին*)

Մեծ թագաւոր, գնացի հնձանը՝ այն գեղեցկուհուն կրկին յիշեցի՝ որ յանձն առնէ պատուով գալ պալատը. երբոր չը կամեցաւ և հնարաւորութիւն չեղաւ այլևս նորան համոզելու, ուստի պատուիրեցի սպասաւորներին՝ որ նորան բռնի քաշ տալով բերեն։

Տրդատ

Ապա ո՞ւր են նորանք։

Օտայ

Սպասաւորներն ահա՛ նորան քաշ տալով բերում են։

Տրդատ

Օտայ իշխան, նորան տար և մտցրու արքունի սենեակը։

(*Օտան տանում է եւ Տրդատը ներս է մտնում սենեակը*)

Տրդատ

Հռիփսիմէ, եկ և սիրով հնազանդիր ինձ, դու այստեղ չունիս ո՛չ մի հնարաւորութիւն՝ ձեռքիցս ազատուելու, հակառակ դէպքումը՝ քեզ ուժովս կը հնազանդեցնեմ ինձ։

Հռիփսիմէ

Թագաւոր, եթէ գիտենայիր՝ նոյն իսկ այստեղ. թէ ո՞վ է իմ տէրը և իմ օգնականը, չէիր վատահանայ ուժովդ պարծենալ։

Տրդատ

Ի՞նչպէս թէ չեմ վստահանայ պարծենալ իմ ուժովը, ո՞վ է քո այն օգնականը՝ թող առաջ դայ և համարձակի քեզ իմ ձեռքիցն ազատել։

(Տրդատը ձեռքը մեկնում է Հռիփսիմէին եւ սկսում է հետը մենամարտել։)

Տրդատ

Ահա տես, թէ քեզ ի՞նչպէս եմ խոնարհեցնում։

Հռիփսիմէ

Եթէ կարող ես խոնարհեցրու և յետոյ պարծեցիր, ո՞վ տէր Յիսուս՝ օգնիր ինձ։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Մանդակունի *(Մանդակունին եւ օտան)*

Օտայ իշխան, ի՞նչ եղաւ, գեղեցկուհին խոնարհուեցա՞ւ մեր մեծ թագաւորին։

Օտայ

Ո՛չ, մեծ իշխան, երբէք չը խոնարուեցաւ, ահա նա արքունի սենեակումը մենամարտում է թագաւորի հետ, սկսած ժամը երեքից (եւրոպ. 9 ժ.) մինչև 10 ժամը (Նորոպական 4 ժամը զկնի ճաշու) որ ահա լրանում է։

Մանդակունի

Բանն այն է, որ ժողովուրդն էլ այնպէս է իմանում, որպէս թէ գեղեցկուհին հնազանդուել է, այս պատճառով մարդկանց շատը պալատից դուրս, շատը փողոցում, շատի կէսը բերդամիջին և կէսը քաղաքամիջին երգելով և պարելով ուրախանում են, այնպէս են համարում ինչպէս հարսանիքի ուրախութիւն։

Օտայ

Մեծ իշխան, այն Տրդատը՝ որ իւր անօրինակ քաջութեամբ Յունաստանը, Հայաստանը, Պարսկաստանը և Ասորեստանը զարմացրել է, բոլոր ոռք կոխած տեղերը և բոլոր մարդկանց սարսափեցրել է, այժմ նա մի մանուկ աղջկանից յաղթվում և ամօթահար է լինում։

Տրդատ

Օտայ իշխան։

Օտայ

Ահաւասիկ եմ, հրամայիր տէր թագաւոր։

Տրդատ

Շուտ կգնաս և Գայիանէի վիզը շղթայ դնել կըտաս և կըբերես այս սենեակի դռան առաջ կըկանգնեցնես, որ այնտեղից

Հռիփսիմէին ստիպէ և ասէ «թագաւորի կամքը կատարիր, որ դու էլ և մենք էլ ապրինք»։

Օտայ

Ահա իսկոյն կգնամ և կբերեմ Գայիանէին։

Տրդատ

Շտապիր, շուտ գնայ և նորան շուտով բե՛ր։

Օտայ

Գայիանէ, վիզդ շղթայ դրած՝ քեզ տանելու եմ պալատը, դու այնտեղ արքունի սենեակի դռան առաջ կը կանգնիս, և այնտեղից քո սանին կը խրատես և կասես «թագաւորի կամքը կատարիր, որ դու էլ և մենք էլ ապրինք» ուրեմն ելէ և գնանք։

(Հանում են պալատը)

Գայիանէ, ահա հասանք պալատը, դու այստեղ կանգնիր և քո սանին խրատիր, իսկ դուք զինուորներ, հսկեցէք մինչև վերադարձս։

Գայիանէ

Հռիփսիմէ որդեակ, Քրիստոսը քեզ պահէ այդ պղծութիւնից. քեզ օգնական լինի։ Քա՛ւ լիցի քեզ որդեակ, որ դու դուրս գաս Աստուծոյ կեանքի ժառանգութիւնից և ժառանգես անցաւորը՝ որ բոլորովին ոչինչ է՝ այսօր է և վաղը կը կորչի։ Քաջացիր և պինդ կաց, այժմ կտեսնես Քրիստոսին՝ որին ցանկանում էիր։ Յիշիր որդի, այն հոգեխառն կերակուրը՝ որով քեզ կերակրեցի։ Յիշիր այն աստուածային խրատը՝ որով քեզ պարարեցի։ Յիշիր իմ և քո հալածանքները՝ որ իմիասին կրեցինք։ Յիշիր, մահուան բաժակը՝ որ իմիասին ենք խմելու։ Յիշիր բոլոր տիեզերքի յարութիւնը։ Յիշիր մեծատան նախատինքը, յիշիր դեհենի յաւիտենական տանջանքը։ Յիշիր արդարների անապական պարգևները՝ որ մեզ համար պատրաստուած է։ Յիշիր աստուածեղէն երկնաւոր բարբառը՝ որ դու լսեցիր քո ականջովը։ Քաջացիր և զօրացիր՝ որ լուսեղէն պսակն ընդունես, թէ դու և թէ մենք։

Օտայ *(Օտան զալիս է եւ հարցնում)*

Զինուորնե՛ր, ո՞ւր է Գայիանէն։

Զինուորներ

Մեծ իշխան, երբոր թագաւորը մարտնչում էր Հռիփսիմէի հետ, Գայիանէն դռան առաջից սկսաւ իւր սանին խրատել՝ որ թագաւորի կամքը չը կատարէ, չը խոնարհուի նորա առաջ. մեզանից մէկը գիտէր այդ լեզուն՝ Գայիանէի խօսեցածը մեզ պատմեց. երբոր նորա խօսքերը լսեցինք, նորան արքունի դռան առաջիցը հեռացրինք, քարով նորա երեսը ծեծեցինք. ատամները թափեցինք, բերանի ընտերքը ջարդեցինք, դարձեալ

Նա իւր խօսքերը չը փոխեց. և այս ժամանակ դեռ Թագաւորը մարտնչում էր այն գեղեցկուհու հետ։ Իսկ մենք Գայիանէին տարանք և ստորին սենեակումը բանտարկեցինք։

Օտայ

Շատ լաւ էք արել, այսու ամենայնիւ Նորան պահեցէք մինչև վաղը։

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

(Մանդակունին և Օտայ)

Մանդակունի (*Առաւօտուն*).

Օտայ իշխան, պատմիր ինձ երեկուայ և գիշերուանս անցքերը։

Օտայ

Մեծ իշխան, զարմանալի և հրաշալի են այն անցքերն՝ որոնք երեկուայ օրը և գիշերս անցան, այն հրաշագեղ Հռիփսիմէն առաւօտեան երեք (3) ժամից սկսած մինչև ժամը 10ը. և ցերեկուայ ժամի 10-ից սկսած մինչև գիշերուայ մի պահը մարտնչեց և Թագաւորին յաղթեց. շորերից զրկեց, պատմուճանը պատառեց, Թագաւորական նշանը ցրուած ամօթահար արաւ. թէև իւր զգեստներն էլ Նորանից պատառոտուել էին, սակայն ինքը իւր անձը սրբութեամբ պահելով՝ դուրս եկաւ սենեակից յաղթողների քաջութեամբ. և ճղելով մարդկանց ամբոխը՝ գնաց քաղաքամիջովը դէպի արևելեան կողմի Արեգ դուռը և հասաւ հնձանը և իւր ընկերներին աւետիս տալով անցաւ քաղաքի արևելեան հիւսիսի կողմը մի բարձրավանդակ աւազուտ տեղում, որ մօտ է Արտաշատ գնալու ճանապարհին, այնտեղ ծունր դրեց. սկսաւ աղօթել. և երբոր դեռ աղօթում էր՝ գիշերը Թագաւորի իշխանները և դահճապետը դահիճներով և Նորանց առաջից վառած ջահերով մօտեցան և շուտով Հռիփսիմէի ձեռները կապեցին. լեզուն ուզեցին կտրել՝ և նա իւր կամքով բերանը բացեց և լեզուն դուրս հանեց և Նորանք խլոյն և եթ կտրեցին. Նորա պատառոտած շորերը քաշքշելով պատառեցին. յետոյ չորս ցից գետնին ամրացրին, Նորա ձեռները և ոտները ցցերից պինդ կապեցին, վառած կանթեղներ բերին և այրելով խորովեցին Նորա մարմինը. և քարեր ձգելով Նորա գոգը՝ Նորա աղիքները դուրս թափեցին. և երբոր դեռ կենդանի էր՝ Նոր աչքերը փորեցին և մասն մասն կտրեցին ասելով «Թագաւորի հրամանն անարգողներն՝ այսպիսի կերպով կը կորչին»։ Յետոյ սկսեցին կոտորել Հռիփսիմէի ընկերներից երեսուն և երեք (33) կոյսի. Նորանցից մէկը հիւանդ հնձանումն

էր Նորան էլ այնտեղ և եթ սպանեցին և բոլորի մարմինները քարշ տալով ձգեցին դուրսը՝ որ ուտեն քաղաքի շները, երկրի գազանները և երկնքի թռչունները։

(Երգել)

Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց. և տկար կանայք վառեցան զինու, Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք, ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր։

Հռիփսիմէ մեծ խորհուրդ և անուն ցանկալի. ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ հրեշտակս. եղեր օրինակ սրբութեան կուսանաց վարդապետութիւն արանց արդարոց։

Զեզ նմանիլ կարօտին ամենայն հոգիք, միացեալքը սրբութեամբ և սիրոյն Քրիստոսի. զի մահուամբ ձերով մեզ ճանապարհորդեցիք, ելանել ամենայն մարդոյ առ Աստուած։

Տրդատ (*Տրդատը կանչում է Օտային*)

Օտայ իշխան։

Օտայ

Ահաւասիկ եմ, հրամայիր մեծ Թագաւոր։

Տրդատ

Տեսա՞ր քրիստոնեաների այս կախարդական աղանդի ոյժը՝ որ մարդկանց զարմանալի կերպով կորցնում են կեանքի երկրաւոր վայելքից. ահա ինչպէս կորցրին սքանչելի Հռիփսիմէին, որ երկրիս վերայ՝ կնիկների ծնածների մէջ չկայ Նորա համեմատը, քանի որ ես Տրդատ Թագաւորս կենդանի եմ, չեմ կարող Նորան մտքիցս հանել։ Ես Յունաց աշխարհը գիտեմ, Հոռոմոցն էլ քաջ գիտեմ, մեր Պարթևների կողմերը, այլև Ասորեստանը, Տաճկաստանը և Ատրպատականը՝ այս բոլորն էլ տեսել եմ, ինչ մէկ մէկ թուեմ, շատ տեղեր խաղաղութեամբ գնացել և շատ տեղեր պատերազմով ասպատակել, ոչ մի տեղ չեմ տեսել Նորա գեղեցկութեան նմանը, որին այսպէս կորցրին կախարդ քրիստոնեաները և ինձ այսօրինակ յաղթեցին։

Դահճապետ (*դահճապետը գալիս է*)

Մեծ Թագաւոր, հրաման տուր ինձ՝ որ Գայիանէին և իւր երկու ընկերներին էլ սպանեմ։

Տրդատ

Մի՞թէ նա դեռ կենդանի է, մեծամեծ պարգևներ կտամ, եթէ Նորա միտքը հաւանեցնէք՝ որ գայ ինձ մօտ։

Դահճապետ

Մեծ Թագաւոր, թող այնպէս կորչին Թագաւորի բոլոր թշնամիները՝ որոնք անարգում են աստուածներին. անարգում են նոյնպէս Թագաւորներին, այլ այն կախարդն է իւր երկու ընկերներովը կենդանի՝ որ կորցրեց հրաշագեղ Հռիփսիմէին։

Տրդատ

Դահճապետ, ես այնպէս իմացայ՝ որպէս թէ Հռիփսիմէն է կենդանի. ոհ. նորան կորցնելու զգացած տխրութիւնս՝ սրտիս խորքերը ծակոտում են, այս պատճառով քեզ հրամայում եմ՝ որ դու քո դահիճներովը կը գնաք այն կախարդ Գայիանէի լեզուն ծոծրակովը դուրս կը հանէք, չորս ցցերից պինդ կըկապէք, նորա շորերը պատառոտելով՝ վերայիցը դուրս կըհանէք, նորա պճեղների մորթը կը ծակէք, մէջը ղամիշ (եղէգն) կը դնէք՝ և կը փչէք՝ որ ուռի, քարեր վերան կլցնէք, աղիքները դուրս կը թափէք, և յետոյ գլուխը կը կտրէք, որ համարձակուեցաւ իւր ճնասակար խրատովը՝ աստուածների գեղեցկութիւն ունեցող դիցուհուն կորցնել, և նորա երկու ընկերներին էլ այսօրինակ կը մեռցնէք։

Դահճապետ

Մեծ թագաւոր, պատրաստ եմ գնալ և ձեր մեծութեան հրամանը՝ վրէժխնդրութեամբ կատարել։

Տրդատ

Օտայ իշխան, հրաշագեղ Հռիփսիմէի և իւր ընկերների սպանուելու անցքը ամսի քանիսին եղան և սպանուողները բոլորը քանի հոգի էին։

Օտայ

Այն տխուր անցքը պատահեցաւ Հոռի ամսի 26-ին և 27-ին (Հոկտեմբերի 5 և 6-ին) Հռիփսիմէն սպանուեցաւ 33 ընկերներով, իսկ Գայիանէն՝ իւր երկու ընկերներով, բոլորը իմիասին 37 հոգի էին։

Տրդատ

Օտայ իշխան, պատուիրիր՝ ձգել նորանց դիակները քաղաքից դուրս՝ որ շները, թռչունները և գազաններն ուտեն։

Օտայ

Մեծ թագաւոր, նորանց մարմինները արդէն ձեր հրամանի համեմատ քաղաքիցը դուրս են ձգուած։

Տրդատ

Օտայ իշխան, ահա վեց օր է անցել՝ ինչ որ այն գեղեցկուհուն կորցրի, այժմ ոչ ցերեկը և ոչ գիշերը՝ չունիմ երբէք հանգստութիւն, նորա գեղեցկութեան հրաշատեսիլ պատկերը մտքիցս և երևակայութիւնիցս չի հեռանում, և այսպէս անհանգիստ տանջվում եմ, այս պատճառով կամենում եմ Փառական դաշտը որսի գնալ, ուստի պատուիրիր զօրքին՝ պատրաստուին որսի գնալու։

Օտայ

Մեծ թագաւոր, զօրքին պատուիրեցի՝ նորանք ահա եկել և ձեզ են սպասում։

Տրդատ

Ահա և ես պատրաստ եմ, ուրեմն գնանք։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵԼ

(Տրդատը կառքիցն ընկնում և խոզի կերպարանք է ստանում. Օտան շտապով վերադառնալով պալատ՝ Տրդատի քրոջը անցքը պատմում է)

Օտայ

Խոսրովիդուխտ օրիորդ, քո եղբայր, մեր մեծ թագաւոր Տրդատը՝ այս վեց օր է՝ ինչ որ Հռիփսիմէին կորցրեց և մինչև օրս նորա գեղեցկութեան սիրովը տանջվում էր, այս պատճառով հրաման արձակեց զօրքերին Փառական դաշտը որսի գնալու, երբոր կամենում էր կառք նստել՝ իսկոյն երկնաւոր Տիրոջից պատիժ եկաւ թագաւորին, կառքիցն ընկաւ, սկսաւ կատաղել և ինքն իրա մարմինը ուտել, դուրս եկաւ մարդկային բնութիւնից՝ եղաւ վայրենի խոզի նմանութեամբ, ինչպէս նորանցից մէկը՝ գնաց և նորանց մէջ բնակուեց, եղէգն է ուտում և անհնարին անզգայութեամբ դաշտի մէջը մերկ թափառում. թէև կամեցանք արգելել քաղաքի միջում, բայց չը կարողացանք. մէկ՝ իւր բնական ոյժի, և մէկ էլ՝ դիւական ոյժի պատճառով։ Նոյնպէս քաղաքի բոլոր մարդիկ նոյն օրինակ դիւահարութեամբ տանջվում են. այլև՝ ինչպէս տեսնում էք թագաւորի բոլոր ընտանիքը և սպասաւորներն առ հասարակ տանջվում են և այսպէս ամբողջ քաղաքը սուգ է պատել։

Խոսրովիդուխտ

Օտայ իշխան, մի կողմից՝ պատմածիցդ սարսափահար եմ լինում, միւս կողմից՝ սիրտս ճմլում է թագաւոր եղբօրս զարհուրելի վիճակը, չը գիտեմ, ինչ անենք։

Օտայ

Վաղարշապատն ամբողջովին և նոյնպէս մենք բոլորս սարսափի մէջ ենք, սև սուգ է պատել ամբողջ քաղաքը։

Խոսրովիդուխտ (տեսիլը պատմում է)

Օտայ իշխան և պատուաւոր քաղաքացիք, այս գիշեր տեսիլ երևեցաւ ինձ. մի լուսատեսիլ մարդ եկաւ և ինձ ասաց. «Թէ պատժուածներին չըկայ մի ուրիշ ճար՝ բացի այն, որ մարդ ուղարկէք Արտաշատ քաղաքը՝ այնտեղից բերէ Գրիգորին, նա կըգայ և կըսովրեցնէ ձեզ՝ ձեր ցաւերին բժշկութիւն։

Քաղաքացիք

Չենք կարողանում զսպել մեզ՝ ծիծաղելուց. թագաւորդն օրիորդ, ուրեմն դու էլ զիւահարեցար. ինչպէս կարելի է այդ բանն լինել, որովհետև այս տասնեհինգ տարի է՝ ինչ որ նորան ձգեցին այն անհնարին Խոր-Վիրապի մէջ. դու ասում ես թէ, կենդանի է, ինչ կենդանի, նորա ոսկորներն անգամ չեն գըտնուիլ. և նոյն օրը երբ նորան իջեցրին այնտեղ, նոյն իսկ օձերի տեսքիցն՝ նոյն ժամուն և եթ մեռած կըլինի։

Խոսրովիդուխտ

Իշխան նախարարներ, ահա այս հինգերորդ անգամն է՝ որ այն լուսատեսիլ մարդը սպառնալիքով ինձ ասում է «Որ այս տեսիլը եթէ շուտ շուտ չը պատմես՝ մեծամեծ տանջանքներ և պատիժներ կընդունես, և բացի սորանից՝ մարդկանց և թագաւորի պատիժը՝ աւելի կը սաստկանայ։

Նախարարներ

Թագաւորդն օրիորդ, աւելի լաւ է կասկածաւոր բանը ստուգել և ապահով լինել, քան չստուգել՝ միշտ կասկածի մէջ մնալ և անհանգիստ լինել. ուստի կը խնդրենք Օտայ իշխանին, որ գնայ Արտաշատ, եթէ Գրիգորը կենդանի է՝ նորան Վիրապիցը դուրս հանէ և բերէ։

Խոսրովիդուխտ

Իշխան նախարարներ, ընդունում եմ ձեր այս արդարացի առաջարկութիւնը, ուստի Օտայ իշխան պարտաւորեցնում եմ քեզ, որ այսօր և եթ ուղևորիս Արտաշատ և Գրիգորին Վիրապիցը դուրս հանես և մեծ պատուով բերես։

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Արտաշատցիք

Քաղաքացի իշխաններ, Օտայ նախարարը ահա գալիս է՝ շտապեցէք՝ նորան դիմաւորենք։

Օտայ

Ողջոյն ձեզ մեծ իշխաններ և արդոյ քաղաքացիք։

Արտաշատցիք

Ո՞ղջ եկիր մեծ իշխան, բարի լինի ձեր գալուստը, ինչ կայ, և արդեօք ինչ գործով էք շնորհք բերել։

Օտայ

Ես եկել եմ Գրիգորին Վիրապիցն հանել և տանել։

Արտաշատցիք

Ո՞ր Գրիգորին։

Օտայ

Այն Գրիգորին, որ 15 տարի առաջ շղթաներով կապած բերին և այստեղի Վիրապն իջեցրին

Արտաշատցիք

Ի՞նչ էք ասում, մի՞թէ կարելի է, որ նա մինչև օրս կենդանի լինի։

Օտայ

Թագաւորի քրոջը տեսիլք է երևացել, որ ասել է, թէ «Գրիգորը կենդանի է և պէտք է նորան Վիրապիցը հանէք»։

Արտաշատցիք

Շատ բարի, ուրեմն ինչ է հարկաւոր, հրամայիր՝ որ կատարենք։

Օտայ

Հարկաւոր են երկար և հաստ պարաններ։

Արտաշատցիք (իսկոյն գնում եւ բերում են)

Ահա քո ուզած պարանները։

Օտայ

Ուրեմն շտապենք և գնանք Վիրապը։

Արտաշատցիք

Մեծ իշխան, հասանք, ահա սա է Վիրապը։

Օտայ

Բացէք Վիրապի բերանը և պարանները իջեցրէք։

Արտաշատցիք

Պարանները շարունակ իջնում են, տեսէք է՝ ո՞րքան խորն է։

Օտայ (Օտան ձայն է արձակում)։

Գրիգորի՜ է, եթէ կենդանի ես, գուրս արի, Այն Աստուածը՝ որին դու պաշտում ես, Նա հրամայեց, որ քեզ այստեղից դուրս հանենք։

Գրիգոր

Այո՛ կենդանի եմ, իմ Տէր Աստուածն այս դժոխքումն էլ ինձ կենդանի պահեց, որ դուք էլ հոգւով և հաւատով կենդանանաք։

Օտայ

Արտաշատցի եղբայրներ, հիմայ կը տեսնէք ձեր աչքովը՝ որ նա կենդանի է, ուրեմն վեր քաշեցէք։

Արտաշատցիք

Օրհնեալ լինի սորա Աստուածը՝ որ 15 տարի այս օձերով լի վիրապի մէջ սորան կենդանի է պահել. քաշենք եղբայրներ, դուրս քաշենք և մեր աչքովը տեսնենք սորա երեսը։

Գրիգոր (վիրապիցը դուրս)

Ողջո՛յն ձեզ օրհնեալ ժողովուրդ, ողջոյն և օրհնութիւն բոլորիդ։

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Օտայ (Վաղարշապատի մօտ)

Գրիգորիէ, այն Տրդատը՝ որ Հայերիս փառքն ու պարծանքն էր, այժմ խողի անարգ կերպարանքով, մերկ մարմնով խայտառակ կերպով, մոլեգին տանջանքով, ահա առաջ է գալի, նոյնպէս մեր նախարարներն, իշխաններն և գրեթէ բոլոր ժողովուրդը խելագարուած գալիս են և իրանց միան ուտելով դիւահարում և փրփրում են, ահա տես դորանց քո աչքովը՝ և բժշկութեան մի ճար արա։

Գրիգոր

Թող նորանք առաջ գան, նորանք իրանց մեղքերից խայթուած առաջ են գալի, որ ճանաչեն ճշմարիտ Աստուծոյն և միայն նորանից կը գտնեն բժշկութիւն։

(Թագաւորն եւ ժողովուրդը Գրիգորի ոտքն են ընկնում եւ Թողութիւն խնդրում)։

Թագաւոր և ժողովուրդ

Ո՛վ Գրիգորիէ, թող մեզ մեր յանցանքը՝ ինչ որ քեզ արինք։

(Գրիգորը նորանց կանգնեցնում է)

Գրիգոր

Ո՛վ թագաւոր և ժողովուրդ, վեր կացէք և կանգնեցէք, ես էլ ձեզպէս մարդ եմ, ձեզպէս մարմին ունիմ, բայց դուք ճանաչեցէք ձեր Արարչին, որ ստեղծել է երկինքը, երկիրը, արևը, լուսինը, աստղերը, ծովը և ցամաքը, ես ջերմ սրտով կաղօթեմ ձեզ համար այն ամենակարող Աստուծոյն, որ դիւահարութիւնից ազատուիք և զգաստանաք, իսկ դու, ով թագաւոր, կունենան կարողութիւն լաւ լսելու, մտածելու և համարձակ խօսալու, այսքանը առ այժմ միայն։

Գրիգոր

Օտայ իշխան, ծածկեցէք շորերով թագաւորի և բոլորի մերկութիւնը և ամօթը։

Օտայ

Գրիգորիէ, ահա ծածկեցինք բոլորի մերկութիւնը և ամօթը, ուրիշ ինչ կը հրամայէք։

Գրիգոր

Օտայ իշխան, որտեղ են դրել Աստուծոյ վկաների մարմինը։

Օտայ

Ո՞ր վկաներին ես ասում

Գրիգոր

Այն վկաների, որ Աստուծոյ սիրոյ համար ձեր ձեռքով մեռան։

Օտայ

Մի փոքր առաջ գնանք, ահա այն վկաների մարմինները։

Գրիգոր

Դուք հեռու կանգնեցէք, մինչև որ ես այս բոլոր վկաների մարմինները ժողովեմ այս հնձանում։

Թագաւոր և նախարարներ

Գրիգորիէ, ահա այդ վկաների համար մաքուր պատանացուներ։

Գրիգոր

Ո՛չ, դեռ դուք չէք սրբուած, ձեր պատանացուները առ այժմ չեն հարկաւոր, ես սորանց ամեն մէկին իւր պատառոտած շորերովը կը պատեմ։

(Դառնալով թագաւորին եւ նախարարներին)

Ո՛վ թագաւոր և նախարարներ, վկաների մարմինները արդէն ժողովեցի, ուրեմն ժամանակ է հանգստանալու, գնացէք և հանգստացէք, իսկ ինձ հանգստանալու համար՝ բաւական է այս հնձանը։

Թագաւոր և նախարար

Մենք ինչպէս կարող ենք գնալ, երբոր քո մօտիցը մի փոքր հեռանում ենք՝ իսկոյն դիւահարվում և տանջվում ենք, ձեզ մօտ միայն կարող ենք քնել։

Գրիգոր (Առաւօտուն)

Դու, ով թագաւոր, և դուք Վաղարշապատի մեծամեծներ և ժողովուրդ, ահա դուք ինքներդ ձեր աչքովը տեսաք Աստուծոյ հրաշքները՝ այս սուրբ վկաների վերայ, որ ահա 9 օր և 9 գիշեր է՝ ինչ որ դուրսն են ձգուած, բայց ոչ միայն չեն հոտել, այլ և ոչ շուն, ոչ գազան, ոչ հաւ և ոչ թռչուն անգամ չեն մօտեցել։

Թագաւոր, դու ինքդ գիտես քո ոսկոռների պնդութիւնը և քո ուժի քաջութեան չափը, սակայն ինչպէս յաղթուեցար մի դեռահաս աղջկանից, դա անկարելի է, եթէ չէր տրուել յաղթելու իրաւունք։

Թագաւոր, ինձ համար՝ դու և բոլորդ էլ շատ լաւ գիտէք, ինչպէս կարող էր մի մարդ տանել այնքան դառն չարչարանքները՝ որ ես տարայ և կրեցի. և կամ ինչպէս կարող էր մի մարդ լոկ մի ժամ կենդանի մնալ այն սոսկալի օձերից մէկի առաջ՝ որ ահա 15 տարի է՝ որ ես այն սոսկալի օձերի բազ-

մութեան մէջ մնացի. նորանից չը վախեցայ, որովհետև Աստուծոյ ձեռքը ինձ պահում էր, ես այն Խոր-վիրապի մէջ ամէն օր բաց աչքով տեսնում էի Աստուծոյ հրեշտակը՝ ինչպէս որ այժմ նորան տեսնում եմ, որ ասում է քաջացիր և պինդ կաց, որովհետև Տէր Աստուածը քեզ պահեց և արժանի համարեց Իրան ծառայելու։

Տեսիլը

Պատմեմ ձեզ տեսիլս, որ տեսայ այս գիշեր։

«Այս գիշեր երբոր դուք դադրած քնել էիք, ես զարթուն «էի, յանկարծ սաստիկ և ահաւոր որոտմունքի Ձայն լսելի «եղաւ, երկինքը բացուեցաւ, մի լուսատեսիլ մարդ իջաւ և ինձ «ասաց. Գրիգորիոս վեր նայիր և տես այն հրաշալիքը՝ որ քեզ «ցոյց եմ տալու, ես աչքս վեր բարձրացրի և տեսայ երկինքը «բացուած՝ մարդու կերպարանքով և երկու թեւեր ունեցող հրեշ- «տակների անթիւ բազմութիւն, տեսայ մարդու կերպարանքով «մի բարձր և ահաւոր տեսիլ՝ ձեռին ունէր մի մեծ ոսկի ուռն «—չաքուչ, և արծուիպէս սաստկութեամբ եկաւ և իջաւ քա- «ղաքի մէջ գետնի վերայ և սաստկութեամբ զարկեց գետնին՝ «անդունդների սանդարամետումը մեծ և սոսկալի դղրդմունքի «ձայներ հնչեցին և գետինը դաշտիպէս հարթուեցաւ։

«Տեսայ քաղաքումը արքունի պալատի մօտին լուսաճա- «ճանչ աստուածակերտ զարմանալի շինուած զմբէթաձև խո- «րան՝ հրեղէն սիւն և Խաչը վերան։

«Տեսայ երեք վկայարանների լուսեղէն Խաչեր։

«Տեսայ յորդահոս աղբիւր՝ որ բղխեց և տարածուեց ամ- «բողջ դաշտը։ Տեսայ անթիւ սև այծերի հօտեր, որոնք ջուրն «անցնելուց յետոյ՝ սպիտակուեցան՝ որոնցից լոյսի ճառագայթ- «ներ էին արձակվում, հօտերը յանկարծ ծնան և շատացան, «ծնած գառները՝ լուսավառ էին։

«Եւ յանկարծ ուրիշ ծնուածներ եղան և շատացան. նո- «րանց կէսը ջրի այն կողմն էին ընկել. և գառները՝ սև գայլեր «դարձան և յարձակուեցան հօտերի մէջը և սկսեցին նորանց «կոտորել և արիւնի լճեր գոյացնել։

«Եւ երբոր նայում էի տեսայ՝ որ հօտերին թեւեր բուսան, «եղան թեւաւոր և գնացին ու խառնուեցան լուսեղէնների «զօրքի մէջ։

«Եւ վեր կացաւ հրեղէն հեղեղ և գայլերին առաւ իւր մէջը «ու տարաւ։

«Այն իմ առաջի տեսած լուսատեսիլ մարդը՝ տեսիլս մեկ- «նեց այսպէս։

«Դու տեսար՝ որ երկինքը բացուեցաւ. այն է՝ Աստուծոյ «գթութեան և ողորմութեան դռները բացուեցաւ այս աշխար- «հի վերայ, երկինքը վերանալու արգելքը վերացաւ, վկաները «ձեզ ճանապարհ բացին, իրանք վերացան երկինք և ուրիշնե- «րին էլ օրինակ եղան։

«Այն ահաւոր մարդը՝ որ ոսկի ուռն ձեռին ունէր և զար- «կեց սանդարամետին. Աստուծոյ տեսողութիւնն է և ահը՝ որ «կործանեց և հարթեց երկիրը անդունդի մոլորութիւններից։

«Հնչմունքի ձայնը՝ Աստուծոյ ծառայելու հնազանդութիւնն է։

«Հրեղէն սիւնը՝ Մայր Տաճարն է։

«Նորա վերայի խաչը՝ մեծ Քահանայապետութիւնն է։

«Երեք խաչերը՝ երեք վկայարաններն են, որոնց տեղերի «վերայ շինուելու են տաճարները։

«Յորդահոս աղբիւրը՝ Հոգւոյն սրբոյ շնորհքը և մկրտու- «թեան աղբիւրն է. որ ամեն տեղ տարածուելու է և լուանալու «հոգւոց մեղքի աղտերը։

«Սև այծերի հօտերի անթիւ բազմութիւնը՝ որ ջուրն անց- «նելուց յետոյ սպիտակեցան, հաւատացեալներն են, որոնք «մկրտութեան ջրովն անցնելով՝ մաքրվում և լուսաւորվում են «և արքայութեանն արժանի լինում։

«Ծնուածներն՝ որ շատացան՝ հաւատացեալների՝ բազմա- «նալն է։ Ջրի այն կողմին ընկնող հօտերը՝ յետին ժամանա- «կում ճշմարտութիւնը և քահանայական սուրբ ուխտը թողնե- «լու են, գառները՝ լինելու են գայլեր և կոտորելու են սուրբ «գառներին։ Իսկ ժողովուրդներից և քահանաներից հաւատքին «հաստատ մնացող գառները՝ թեւեր կառնեն և կը վերանան «երկնքի արքայութիւնը։

«Եւ նորանք՝ որոնք հաւատները թողին և գայլերի յափշ- «տակողութիւն ունեցան, նորանք կըմատնուեն անհանգչելի «կրակին։

«Իսկ դու, զգոյշ կաց այն աւանդումին՝ որ տէր Յիսուսը «քեզ հաւատաց, կշինես Աստուծոյ անուան Տաճարը՝ այն տե- «ղումը՝ որտեղ ցոյց տրուեցաւ հրեղէն սիւնը, որ ունէր ոսկի «խարիսխը, այլև կշինես սրբերի վկայարանները՝ որտեղ իրանք «նահատակուեցան՝ որ պատժուածները բժշկուին։»

Էջմիածին ի Հօրէ՝ և լոյս փառաց ընդ նմա,
Ձայնք հնչեցին՝ սանդարամետք անդնդոց։
Տեսեալ զլոյս մեծ՝ հայրապետին Գրիգորի,
պատմէր ցնծութեամբ՝ հաւատացեալ արքայի։
Եկայք շինեսցուք՝ սուրբ զխորանն լուսոյ

քանզի 'ի սմա ծագեաց մեզ լոյս՝ ի Հայաստան աշխարհի։

Պատժուածներ

Գրիգորիէ, ինչ որ հարկաւոր է վկայարանները շինելու համար՝ հրամայիր՝ որ անենք և շուտով բժշկուենք։

Գրիգոր

Շինութիւնների համար հարկաւոր են նիւթեր, ուստի շտապեցէք բերել, որ շինութիւնն սկսենք։

Տրդատ

Գրիգորիէ, ես՝ մեղքիս համար՝ բացի խոսալուցս, դեռ գտնվում եմ կատարեալ խոզի կերպարանքի մէջ, ձեռներիս և ոտներիս կճղակները՝ խոզի են, երեսիս դէմքը՝ կնճթացած, մեծագոյն ժանիքներս՝ վարազի նման, մարմինս՝ խոզի խիտ մազերով կոշտացած, աղաչում եմ քեզ Գրիգորիէ գոնէ ձեռներս և ոտներս բժշկուին, որ ես էլ արժանի լինիմ շինութիւններին մասնակցիլ։

Գրիգոր

Ո՜վ ամենողորմ Տէր Աստուած, աղաչում եմ քեզ, գթայ Թագաւորիս վերայ և բժշկիր սորա ձեռներն ու ոտները։

Պատժուածներ

Փառք քեզ՝ ճշմարիտ Աստուած, որ Գրիգորի աղօթքը լսեցիր, Թագաւորի ձեռքերի և ոտքերի կճղակները դեռին թափեցիր. և մեր աչքերի առաջ բժշկեցիր, այլևս ինչպէս չը հաւատանք քո ճշմարտութեանը՝ ով Գրիգորի ճշմարիտ Աստուած մեզ էլ ողորմի, մեր ցաւերն էլ բժշկիր։

Տրդատ

Գրիգորիէ, աղաչում եմ քեզ, հրամայիր Աշխէն Թագուհուն և հարազատ քրոջս՝ Խոսրովիդուխտին, որ նորանք էլ դան և մասնակցին շինութեանը։

Գրիգոր

Աշխէն Թագուհի և Խոսրովիդուխտ, դուք էլ կարող էք մասնակցիլ այս շինութեանը սուրբ գործքին, դուք էլ կստանաք ձեր վարձը։

Պատժուածներ

Եղբայրնե՛ր, բարեկամնե՛ր, տեսէք Թագաւորին՝ որ ինչպէս մի մշակ՝ բահ ու փայտատ ձեռն առած՝ անդադար փորում է վկաների հանգստեան տեղերը, իսկ Թագուհին ու Խոսրովիդուխտը փորուած հողերը ժողովելով իրանց Թանկագին շորերի մէջ՝ տանում և դուրս են Թափում, մեզ ամօթ է՝ եթէ նորանցից աւելի եռանդով չաշխատինք՝ մանաւանդ որ՝ դեռ պատժի մէջ ենք։

Տրդատ

Գրիգորիէ՝ ինձ հրաման տուր, որ գնամ և Մասիսի գագաթը մեծամեծ և կոյս քարեր բերեմ։

Գրիգոր

Կարող էք գնալ։

Աշխէն (Տրդատը գնում է եւ բերում քարերը)

Խոսրովիդուխտ, տես Տրդատ եղբօրդ, որ իւր մեջքի վերայ ահա բարձած բերում է ուրեմն այնպիսի մեծամեծ քարեր՝ որոնցից մէկը մարդկանց բազմութիւնը չի կարող տեղից շարժել։

Գրիգոր

Թագաւոր, քո մեղքերն էլ այդ քարերի նման մեծամեծ էին, բայց այժմ այդ անհնարին ծանրագին քարերը բերելով՝ արդէն բոլորը քաւեցիր։

Օտայ

Գրիգորիէ, ահա երեք վկայարանները շինեցիր, իսկ այն տեղը՝ որտեղ հրեղէն սիւնը և ոսկի խարիսխը երևեցաւ՝ Խաչի նշանը կանգնեցրիր. շուրջը պատեր բարձրացրիր, դռնով և դռնափակով ամրացրիր, այժմ մնում է բժշկել Թագաւորին և բոլոր պատժուածներին, որոնց համար աղաչում եմ բժշկել և շուտով բժշկել։

Գրիգոր

Օտայ իշխան, ուղիղ էք ասում, արդէն ժամանակն է. որովհետև բոլորիդ հաւատքն էլ հաստատ է, ուրեմն ով Թագաւոր և ժողովուրդ, դուք բոլորդ էլ ինձ հետ աղօթեցէք։

Պատժուածներ

Ո՜վ, Գրիգորի ճշմարիտ Աստուած, գթայ մեզ վերայ, թող մեր անմտութեամբ գործած մեղքերը և բժշկիր մեզ։

Գրիգոր

Ո՜վ, ամենաբարձրեալ Աստուած, ընդունիր իմ արտասուաքառն աղաչանքը՝ թող ժողովրդիս բոլորի յանցանքը և բժշկիր Թագաւորիս խոզակերպ կերպարանքիցը։

Տրդատ Թագաւոր

Սուրբ Հայր Գրիգորիոս, խոնարհվում եմ քո առաջ և սրտիս խորին զգացմունքով փառք եմ մատուցանում այն ճշմարիտ Աստուծոյն՝ որին դու ես պաշտում, այլև յայտնում եմ իմ սրտագին շնորհակալութիւնը քո սրբութեանը, որ ինձ այս բօպէիս այսպիսի հրաշքով բժշկեցիր, որովհետև դու երբոր աղօթում էիր, վերաս յանկարծ դողդողալ եկաւ և խոզի խորխը, ժանտատեսիլ ժանիքներովս, կճնթաղէմ երեսովս, խոզացած, խորխացած մազոտ կաշիովս՝ մարմնիս վերայիցը հեռուն վայր

ընկաւ. երեսիս դէմքը դարձաւ իմ առաջի կերպարանքը, մարմինս փոքր երեխայի մարմնի նման փափկացաւ. և ես այժմ զգում եմ՝ որ կատարելապէս բժշկուած՝ դարձել եմ առաջի քաջ առողջ Տրդատը. ուստի քո սրբութիւնը՝ այս իսկ ժամից սկսած՝ իմ և բոլոր Հայերի հոգևոր Հայրն ես. և այսօրուանից պատրաստութիւն եմ տեսնելու, որ քեզ Հայաստանի վերայ քահանայապետ ձեռնադրելու համար ուղարկեմ Կեսարիա։

ԵԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Տրդատ Թագաւոր

Օտայ իշխան, կամենում եմ կազմել մի մեծ ժողով, ուստի հրաւիրիր Թագաւորութեանս բոլոր մեծամեծներին, կուսակալներին, նախարարներին, իշխաններին, զօրավարներին, դատաւորներին և ազատներին, որ ժողովին և ընդհանուր խորհրդակցութեամբ՝ Գրիգորին ընտրենք քահանայապետ Հայաստանի։

Օտայ

Մեծ Թագաւոր, գեղեցիկ է ձեր ծրագրածը. պատիւ ունիմ ձեր մեծութեան հրամանը՝ շատ շուտով կատարել։

Տրդատ Թագաւոր

Հայր Գրիգորիոս, ժողովի համար հրաման արձակելու օրից սկսած մինչև օրս՝ քո կամքին համաձայն բաւականի մեհեաններ կործանեցինք, սկսած Տիւր դից մեհեանից՝ Արտաշատ քաղաքի մեհեանները, Դարանաղեաց, Եկեղեաց, Դերջան գաւառի մեհեանները, Բագայարիճ կոչուած գիւղի Արամազդի որդի Մրհական մեհեանը։ Ժողովը վերջանալուց յետոյ էլ ամեն կերպ կօգնեմ քեզ, որ Հայաստանի բոլոր մեհեանները կործանենք և նորանց տեղերը Տաճարներ կառուցանենք և սուրբ Խաչը կանգնեցնենք։

Հայր Գրիգորիոս

Տէր Թագաւոր, օրհնեալ լինի ամենամեծ Աստուծոյ կամքը և շնորհէ լիառատ յաջողութիւն քո բարի նպատակներին։

Օտայ

Մեծ Թագաւոր, Թագաւորութեանդ բոլոր մեծամեծներն ժողովուել են արքունի մեծ դահլիճումը և սպասում են ձեր մեծութեանը։

Տրդատ Թագաւոր

Հայր Գրիգորիոս, Աշխէն Թագուհի և Խոսրովիդուխտ, եկէք մտնենք ժողովի դահլիճը և ժողովը բանանք։

Տրդատ Թագաւոր (մտնում է դահլիճ)

Ողջոյն ձեզ Հայաստանի պարծանք կազմող և իմ թև ու թիկունք մեծ իշխաններ։

Ժողովականք

Ո՛ղջ եկիք Հայաստանի փառք ու պսակ մեծ Թագաւոր Տրդատ։

Տրդատ Թագաւոր

Մեծ իշխաններ, ես Հայոց մեծաց Տրդատ Թագաւորս, Աշխէն Թագուհու և իմ քոյր Խոսրովիդխտի հաւանութեամբ ձեզ այստեղ ժողովի հրաւիրեցի, որ յայտնեմ ձեզ իմ նպատակը։ Դուք արդէն ձեր աչքովը տեսաք այնքան հրաշքները՝ որոնք կատարուեցան այս մեր սուրբ Հայր Գրիգորի ձեռքովը և ձեր ականջներովը լսեցիք սորա 66 օրուայ հրաշալի քարոզները և զարմալի տեսիլը։

Սա որմնապատեց լուսակերտ Մայր Տաճարի տեղը՝ և Խաչ կանգնեցրեց։ Սա շինեց Սրբուհիների երեք վկայարանները։ Սա շրջեց Հայաստանը և կործանեց շատ մեհեաններ. ամեն տեղ քարոզեց սուրբ Աւետարանը և կանգնեցրեց սուրբ Խաչեր. այժմ մեզ հարկաւոր է ունենալ մի հովիւ, որ ձեռնադրէ քահանաներ, վարդապետներ և եպիսկոպոսներ. ուստի ես, իմ Աշխէն Թագուհին և իմ քոյր Խոսովիդուխտը կամենում ենք այս մեր սուրբ հայր Գրիգորին մեծ պատուով և իմ հրովարտակով ուղարկել Կեսարիա, որ Ղեոնդիոս եպիսկոպոսապետը ձեռնադրէ սորան եպիսկոպոս և քահանայապետ Հայաստանի. արդ՝ այս հոգացողութեան մասին կամենում եմ իմանալ և ձեր հաւանութիւնը։

Ժողովականներ

Մեծ Թագաւոր, բոլոր ժողովական իշխաններս և մեծամեծներս հաւանում ենք ձեր հանճարաւոր հոգացողութեանը և իմաստուն ընտրութեանը. կեցցէ մեր մեծ Թագաւորը և մեր Թագաւորութիւնը։

Սուրբ հայր Գրիգոր

Տէր Թագաւոր, ես չեմ կարող յանձն առնել քահանայապետութեան մեծագոյն պատիւը, ծանր է ինձ և դժուարին՝ լինել միջնորդ Աստուծոյ և մարդկանց մէջ։

Տրդատ Թագաւոր

Ես, ահա իմ աչքովը տեսնում եմ Աստուծոյ հրեշտակին՝ որ ինձ ասում է, Գրիգորին առանց ուշացնելու ուղարկիր ձեռնադրուելու եպիսկոպոսապետ, որ գայ և մկրտութեամբ ձեզ լուսաւորէ։

Սուրբ հայր Գրիգոր

Տէր թագաւոր, նոյն հրեշտակն և ինձ ստիպում է, որ չը համարձակուիմ հակառակիլ. ասում է. այդ պատիւը Քրիստոսիցն է հրամայուած, ուստի յանձն եմ առնում քահանայապետութեան ծանրագոյն լուծը։

Տրդատ թագաւոր

Իշխան նախարարներ, Սուրբ հայր Գրիգորին կնստեցնէք ոսկիապատ կառքում. նորա հետ կգնան Ա. Անգեղ տան իշխանը։ Բ. Մեծ բդեշխ Աղձնեաց տան իշխանը։ Գ. Մարզպետութեան իշխանութեան իշխանը։ Դ. Ասպետութեան թագակալ իշխանութեանն իշխանը։ Ե. Հայոց աշխարհի զօրավար սպարապետութեան իշխանը։ Զ. Կորդուաց աշխարհի իշխանը։ Է. Ծոփաց աշխարհի իշխանը։ Ը. Գարգարացւոց աշխարհի բդեաշխ իշխանը։ Թ. Ռուշտունեաց աշխարհի իշխանը։ Ժ. Մոկաց աշխարհի իշխանը։ ԺԱ. Սիւնեաց աշխարհի իշխանը։ ԺԲ. Ծաւղէից աշխարհի իշխանը։ ԺԳ. Ուտիացւոց աշխարհի իշխանը։ ԺԴ. Զարեհանդ և Հեր գաւառի Շահապն իշխանը։ ԺԵ. Մաղխազութեան տան իշխանը։ ԺԶ. Արծրունեաց իշխանը։ Եւ իրանց հետ կտանին հրովարտակը և կուղևորին Կեսարիա. այնտեղ սուրբ հայր Գրիգորին ձեռնադրել կտան քահանայապետ և պատուով կվերադարձնեն այստեղ Վաղարշապատ. այլև հետները կտանին առատ ընծաներ ոսկի, արծաթ, ձի, ջորի, շորեր և կերպ կերպ զարդեր սուրբ տեղերին և Աստուծոյ տաճարներին նուէր տալու համար։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Տրդատ թագաւոր

Օտայ իշխան, բաւականի օրեր անցել են, բայց դեռ սուրբ հայր Գրիգորից և ոչ նախարարներից՝ ոչ մի տեղեկութիւն չունինք։

Օտայ

Մեծ թագաւոր, հէնց այս ժամուն մի սուրհանդակ եկաւ։

Տրդատ թագաւոր

Ներս կանչիր.

Թագաւոր

Սուրհանդակ, մեր սուրբ հայր Գրիգորիցն ինչ լուր ես բերել։

Սուրհանդակ

Մեծ թագաւոր, սուրբ Ղեւոնդիոսը՝ սուրբ Գրիգորիոսին և մեր բոլոր իշխաններին շատ մեծ պատուով ընդունեց. իրանց

բոլոր եպիսկոպոսներին հրաւիրեց և նորանց մասնակցութեամբ սուրբ Գրիգորին ձեռնադրեց եպիսկոպոս և քահանայապետ Հայաստանի, յետոյ սուրբ Ղեւոնդիոսը մեր սուրբ Գրիգորին ընծայեց սուրբ Յովհաննէս Մկրտչի և սուրբ Աթանագինեայ նշխարների մասերը. այլև հետը դրեց Անտոն և Կրոնիդէսին և շատ սուրբ քահանաներ՝ որ Հայաստանի մէջ սուրբ Աւետարանի լոյսը տարածեն, մեր սուրբ Հայր Գրիգորիոսն այսպիսի մեծ պատիւներով վերադարձաւ. իսկ դարձի ժամանակում երբոր մտաւ Հայաստան և մօտեցաւ Եփրատ գետին՝ կառքի սպիտակ ջորիները կանգնեցին և հրեշտակի յայտնութեամբ այնտեղ հանդստացրեց Յունաստանից բերած սուրբ Յովհաննէս Մկրտչի նշխարների մեծ մասը. և առաջի անգամ այնտեղ հիմքը դրեց եկեղեցւոյ շինութեանը և տօն նշանակեց, այնտեղ 20 օրուայ ընթացքում մկրտեց մինչև 100,000 մարդիկ, և Վահէ-վահեանի Ոսկիհատ Ոսկիմօր և Աստղիկ կուռքերի մեծահռչակ մեհեանները կործանեց, և այնտեղից քարոզելով գալիս է։

Տրդատ թագաւոր,

Աշխէն թագուհի և իմ քոյր Խոսրովիդուխտ պատրաստուեցէք մեր զօրքով գնանք մինչև Բագուան՝ որ պարթեւական լեզուով ասվում է «Դիցաւան», և այնտեղ սպասենք. երբոր սուրբ հայր Գրիգոր քահանայապետը մօտենայ՝ մենք դիմաւորենք նորան և այնպէս շքեղ պատուով բերենք Վաղարշապատ։

Աշխէն թագուհի

Մենք ուրախ ենք և պատրաստ։

Թագաւոր

Զօրքն էլ պատրաստ է. ուրեմն կառք նստենք և ուղևորենք։

Սուրհանդակ

Գրիգոր սուրբ քահանայապետն՝ արդէն հասել է Նպատ լերան ստորոդը։

Թագաւոր

Ուրեմն շտապենք նորան այնտեղ դիմաւորելու։

Սուրհանդակ (վերադառնում է Ալբիանոսի մօտ)

Հայր Ալբիանոս, Հայոց մեծաց Տրդատ թագաւորը. Աշխէն թագուհին և թագաւորի քոյր Խոսրովիդուխտը զօրքով գալիս են դիմաւորելու մեր ս. Քահանայապետին. և ահա մօտեցելն։

Ալբիանոս

Սուրբ Քահանայապետ, սուրհանդակը լուր է բերել և ասում է. թէ թագաւորը, թագուհին և Խոսրովիդուխտը զօրքով

եկել են ձեր սրբութեանը դիմաւորելու եւ շքով ուղղեկցելու Վաղարշապատ։

Ս. Գրիգորիոս

Ալբիանոս. ուրեմն շտապիր, եւ իմացրու մեր քահանաներին՝ որ գնանք Եփրատ գետի ափին եւ այնտեղ արքայական շքեղագոյն պատուով ընդունենք մեր բարեպաշտ Թագաւորին՝ հանդերձ Թագաւորական ընտանիքովը եւ զօրքովը։

Ալբիանոս

Մեր քահանայական դասը՝ արդէն պատրաստ է։

Գրիգոր Ս. Քահանայապետը

Ուրեմն ուղեւորուենք։

Ալբիանոս

Ս. Հայր. Թագաւորն երեւեցաւ և ահա իւր շքախմբովն գալիս է։

Տրդատ Թագաւոր

Ողջոյն քեզ, սուրբ Քահանայապետ հայր, օրհնիր մեզ։

Ս. Գրիգոր

Ամենակարողն Աստուած օրհնէ քեզ մեծ Թագաւոր Տրդատ. մեծ և անուանի լինիս աշխարհիս մէջ, մեծ և խնկելի լինիս լուսաղէններին մէջ. ամենամեծ Աստուածն օրհնէ ձեզ՝ մեծ Թագուհի Աշխէն և մեծ օրիորդ Խոսրովիդուխտ. օրհնէ և շնորհէ ձեզ, սրտի և կամքի այնպիսի ոյժ՝ որ դուք, ձեր ազգասիրական և առաքինական գործքերովը գերազանցէք Յուդիթիցն էլ և Եսթերիցն էլ, օրհնէ և ձեր զօրքին, տայ նորանց՝ սրտի անընկճելի քաջութիւն, որ իւրեանց անվեհերութեամբ հանդիսանան Յեսուններ, Սամփսոններ և Դաւիթներ։

Ալբիանոս

Մեծ Թագաւոր, ահա ձեր մեծութեան հրովարտակի պատասխանը՝ որ յանձնեց մեզ Կեսարիայի ս. Ղեւոնդիոս եպիսկոպոսապետը հասցնելու ձեր մեծութեանը։

(Թագաւորը կոնդակն առնում է եւ ինքը կարդում)

Տրդատ Թագաւոր

Այս կոնդակովն յայտնում է ս. Ղեւոնդիոսը, որ մեր խնդիրը ուրախութեամբ ընդունել և ձեզ սուրբ Հայր՝ եպիսկոպապետ է ձեռնադրել Հայոց մեծաց աշխարհի վերայ, այլ և օրհնում է մեզ, որ հրաշքներով արժանացել ենք ընդունել քրիստոնէութիւնը։

Ս. Գրիգոր

Բայց դուք մեծ Թագաւոր, դեռ կատարելապէս չէք ընդունել քրիստոնէութիւնը, որովհետեւ դեռ չէք մկրտուել, եւ դեռ Յիսուսի կենարար մարմնից եւ արիւնից չէք հաղորդուել։

Թագաւոր

Սուրբ Հայր, ես և իմ ընտանիքը պատրաստ ենք ընդունել այն ամենը՝ ինչ որ մեզ քրիստոնէական օրէնքը կը պարտաւորեցնէ։

Ս. Գրիգոր

Մեծ Թագաւոր, ձեր եկած օրից սկսած, ձեր և բոլոր զօրքի վերայ դրած ամսօրեայ պահեցողութիւնը արդէն լրացել է, ուստի իջնենք Եփրատ գետը՝ այնտեղ բոլորիդ էլ մկրտեմ։

Թագաւոր

Աշխէն Թագուհի և իմ քոյր Խոսրովիդուխտ. զօրքն արդէն սպասում է, իջնենք Եփրատ գետը և մկրտուինք։

Ս. Գրիգոր

(Մկրտում է Թագաւորին իւր արքայական ընտանիքովը, այլեւ զօրքին եւ ժողովրդին)։

Ո՛վ Թագաւոր, Թագուհի, Խոսրովիդուխտ օրիորդ և բոլոր հաւատացեալ զօրք և ժողովուրդ. ահա ձեզ մկրտում եմ Հօր, և Որդւոյ և ս. Հոգւոյ անունովը, ինչպէս որ այս ջրովը լուանում եմ ձեր մարմինը՝ հաւատացէք, որ ձեր հոգիներն էլ լուացուած կլինին սկզբնական մեղքից։

Ահա այս սուրբ իւղը հեղումեմ բոլորիդ վերայ՝ որով Հոգւոյն սրբոյ շնորհքը իջնի ձեր սրտի և հոգւոյ վերայ, որ լինիք տուն և տաճար Հոգւոյն սրբոյ։

Ահա հաղորդում եմ ձեզ, այս Հացի և Գինու երևոյթի տակ ծածկուած՝ նոյն իսկ Յիսուսի Քրիստոսի Մարմինը և Արիւնը, որով միանաք Յիսուսի Քրիստոսի հետ և անցնիք Քրիստոնեաների կարգը։

Հայր Եւսեբի (Մկրտութիւնից յետոյ)

Հայր Ալբիանոս, տեսար այսօրուայ հրաշքն էլ, որ եղաւ մկրտութեան ժամանակ։

Հ. Ալբիանոս

Հայր Եւսեբի, ի հարկէ տեսայ այն՝ որ բոլորի աչքի առաջ կատարուեցաւ, առաջին՝ Եփրատ գետի ջրի յետ դառնալ և կանգնիլը. երկրորդ՝ լուսեղէն սիւնի իջնելը մկրտուողների վերայ. և երրորդ՝ մեռոնի շրջան առնելը և բոլոր մկրտուողներին մասնաբաժանելը։

Հ. Եւսեբի

Հայր Ալբիանոս գիտէք մկրտուողների թիւը։

Հ. Ալբիանոս

Այսօր միմիայն Թագաւորի զօրքիցը մկրտուեցան 150,000 զինուոր։

Հ. Եւսեբի

Հայր Ալբիանոս, երբ ենք ուղևորուելու Վաղարշապատ։

Հ. Ալբիանոս

Սուրբ քահանայապետը և Թագաւորն այնպէս խօսացին որպէս թէ վաղն և եթ ուղևորելու են։

Հ. Եւսեբի

Ուրեմն մենք էլ մեր պատրաստութիւնը տեսնենք։

Հ. Ալբիանոս

Այո՛, այո՛ տեսնենք։

Թագաւոր

Սպասաւոր, մեր ճանապարհորդական կառքերը և բոլոր կազմը պատրաստ են։

Սպասաւոր

Մեծ Թագաւոր, բոլորը ձեր ուզածինպէս պատրաստ են։

Թագաւոր

Ուրեմն յայտնիր բոլորին՝ որ այսօր ժամը 4-ին (10-ին) ուղևորուելու ենք դէպի Վաղարշապատ։

Հ. Ալբիանոս (ուղեւորում են. ճանապարհին)

Հայր Եւսեբի, ահ, այս ինչ քաղցր են հնչում հայկական ճանապարհորդական փողերը. և մենք այս ոգեպիսի դրախտավայր հովիտներով սլանում ենք դէպի Վաղարշապատ. ս. քահանայապետը՝ որ նստած է ոսկեպատ կառքը՝ արդեօք նա էլ Արարչի այս հրաշալիքներովը հիանում է։

Հ. Եւսեբի (Հասնում են Վաղարշապատ)

Ալբիանոս Հայր, ահա՛ մեր արքայանիստ Վաղարշապատը։

Հ. Ալբիանոս

Բարի լինի մեր մուտը, այս պատմական մեծ քաղաքը։

Սուրբ Գրիգորիոս

Մեծ Թագաւոր, ահա եկանք Վաղարշապատ, բայց միտդ բե՛ր, որ ժամանակը դադար չունի, միշտ սլանում է դէպի առաջ, դէպի առաջ, այսուհետև էլ պէտք է մենք դադար չունենանք, պէտք է միշտ և անդադար աշխատինք, նորա ամեն մի բոպէիցը մեր օգուտը քաղենք, ուստի քո առաջի գործը պէտք է լինի ոչ միայն քո արքայանիստ քաղաքումը՝ այլև Թագաւորութեանդ բոլոր կողմերում բանալ դպրոցներ՝ որտեղ ժողովել առաւելապէս քուրմերի որդիքը, ուսուցանել նորանց դպրութիւն, մի մասին Ասորերէն և մի մասին էլ Հելլեներէն, որ նորանցից ձեռնադրեմ քահանաներ՝ այն նպատով, որ նորանց քուրմ հայրերը չըզրկուին իրանց ապրուստից։

Թագաւոր

Սուրբ Հայր, այդ և իմ ցանկութիւնն է, որովհետև ճշմարիտ հաւատքի լոյսը՝ բղխում է ճշմարիտ և մաքուր գիտութիւնների ուսմունքից. ես գիտեմ և սովորել եմ Յունարէն լեզուի ուսումը, գիտեմ ուսման յարգը և այս նպատակով էլ բանալու իմ դպրոցներ և որքան կարելին է՝ նորանց թիւը աւելացնելու եմ։

ս. Գրիգոր

Ես էլ կաշխատեմ մաքրակեաց, իմաստուն և լուսամիտ ուսուցիչ հայրերի թիւն աւելացնել, որով տգիտութեան մութ և մառախլապատ գիշերը՝ ուսման և գիտութեան լուսովը՝ պայծառափայլ արեգակնային ցերեկի փոխարկենք։

Թագաւոր

Սուրբ. Գրիգորիոս հայր, դու՝ մեր խաւար Հայաստան աշխարհը սուրբ Աւետարանի լուսաւոր խոսքերովը Լուսաւորեցրիր, երեք վկայարանները. և սուրբ Մայրը տաճարը լուսեղէն ձևակերպութեանը համապատասխան վանդեցրիր, բազմաթիւ մեհեաններ կործանեցիր և նորանց տեղերումը՝ սուրբ եկեղեցիներ կառուցիր, քուրմերի տեղերը՝ քահանաների թիւն աւելացրիր, Հայոց մեծաց աշխարհի մի ծայրից մինչև միւս ծայրը սուրբ Աւետարանի լուսովը լուսաւորեցրիր, անթիւ և անհաշիւ արք և կանայք մկրտեցիր, Սատաղացւոց քաղաքիցն սկսած՝ մինչև Խաղդեաց աշխարհը, մինչև Կաղարճը, մինչև Մասքթաց սահմանը, մինչև Ալանաց դուռը, մինչև Կասպից և Հայոց թագաւորութեան Փայտակարան քաղաքը, Ամդացւոց քաղաքից մինչև Մծմբին քաղաքը, Ասորւոց սահմանը. Նոր-Շիրական երկրովը և Կորդուքը մինչև Մարաց երկիրը, մինչև Մահքրդան իշխանի տունը և Ատրպատականը՝ ուստի դու՝ քո այսքան դերազանց արժանիքներովն այսուհետև առանց տարակուսանաց կոչուելու ես Հայաստանի «Լուսաւորիչ» և այսուհետև բոլորը քեզ ճանաչելու են «Գրիգոր Լուսաւորիչ» անունով. և այսքան աշխատելուց յետոյ՝ մեծ բաւականութիւն կունենայի՝ եթէ հաճիք յանձն առնել ինձ հետ բնակիլ պալատումս, որ մեր վերջին օրերը հանգստութեամբ անցնենք։

Լուսաւորիչ

Մեծ Թագաւոր, մենք եկել ենք այս աշխարհ մեր նմանների՝ թէ հոգևոր և թէ մարմնաւոր օգտի համար աշխատելու, իսկ աշխատելու ժամին հանգստութիւն սիրող Մշակը չի կարող հասնիլ իւր նպատակին, մենք մի փախչող ներկայ ունինք, եթէ այդ ներկան էլ հանգստութեան համար դործ դնենք, այն ժամանակ յաւետենական հանգստութիւնը կը կորցնենք։

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Թագաւոր

Մանդակունի մեծ իշխան, մեր Գրիգոր լուսաւորիչը Հայաստանը լուսաւորելու համար անհանգիստ աշխատում է. անդադար գիւղից՝ գիւղ, աւանից՝ աւան, քաղաքից՝ քաղաք շրջում է, այսքան նեղութիւնները բաւական չհամարելով՝ ամիսներով պաս է պահում և անապատներում մշտամռունջ աղօթում. թէև աղաչեցի՝ որ գայ և պալատումս բնակելով՝ մի փոքր հանգըստութիւն ունենայ, բայց այս էլ յանձն չառաւ. և ես մտատանջութեան մէջ եմ, թէ սորանից յետոյ սորա տեղը ով կարող է բռնել, որ ժողովրդի մէջ տրտունջներ չը վերկենան։

Մանդակունի

Մեծ-Թագաւոր. ուղիղ է այդ մասին ձեր մտատանջութիւնը, թէև ինքը ձեռնադրել է 400-ից աւելի եպիսկոպոսներ, որոնց շատերը՝ իմաստուն և սրբակրօն հայրեր են, սակայն ոչ ոք չի հաւասարի նորանից ծնուածին։

Թագաւոր

Երանի կլինէր, որ մեր Լուսաւորիչն ամուսնացած լինէր և որդիներ ունենար։

Մանդակունի

Ես գիտեմ և ճիշտը տեղեկացել եմ, որ մեր լուսաւորիչը՝ իւր պատանի հասակում ամուսնացել է և ունի երկու որդի, մեծի անունը՝ Վրթանէս է, իսկ կրտսերինը՝ Արիստակէս, առաջինը՝ ամուսնացած է, երկրորդը՝ կրօնաւոր է։

Թագաւոր

Մեծ իշխան, այդ լուրը ինձ վերին աստիճանի ուրախացրեց, մթթէ մեր Լուսաւորիչը որդիք ունի, ո՞ւր են և ո՞րտեղ են գտնվում։

Մանդակունի

Նորանք գտնվում են Կապատովկացւոց աշխարհում, Վրթանէսը աշխարհական՝ Կիսարիա քաղաքումը, իսկ Արիստակէսը հոգևորական՝ անապատումը։

Թագաւոր

Մեծ իշխան, դու, Տաճատ իշխանը. և իմ Կարապետ դատը, իմ հրովարտակով կըգնաք Կիսարիա՝ Վրթանէսին և Արիստակէսին պատուով կըբերէք։

Մանդակունի

Ահա այսօր և եթ կուղևորինք։

Թագաւոր

Գնացէք բարեաւ, տէրը ձեզ հետ։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Սպասաւոր

Մեծ Թագաւոր, Կիսարիա գնացող իշխանները դարձել են։

Թագաւոր

Ո՞ւր են՝ ներս հրաւիրիր

Սպասաւոր

Պատրաստվումեն ներկայանալու Ձեր մեծութեանը։

Մանդակունի

Ողջոյն քեզ մեծ Թագաւոր։

Թագաւոր

Ո՛ղջ եկիք մեծ իշխաններ։

Մանդակունի

Մեծ Թագաւոր, յաջող գնացիք Կեսարիա, դատանք մեր Լուսաւորչի երկու որդւոցը, որոնք իրանց սրբակեաց կեանքովը՝ իրանց սրբակրօն Հօր համատիպն են, փախչում են պատուից՝ իսկ պատիւը նորանցից չի հեռանում. Վրթանէսին դատանք Կեսարիայում, իսկ Արիստակէսին անապատում. որ չէր յանձն առնում անապատի սուրբ մենաստանիցը դուրս գալ, սակայն համոզելով հազիւ հաճեցրինք. և ահա երկուսն էլ դահլիճումն են։

Թագաւոր

Մեծ իշխան ներս հրաւիրեցէք։

Վրթանէս և Արիստակէս

Ողջոյն քեզ տէր Թագաւոր։

Թագաւոր

Ողջ եկիք մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի հարազատ զաւակներ, այսուհետև ես և Հայ ազգը մխիթարուելու ենք ձեզանով։

Վրթանէս

Տէր Թագաւոր. մենք թէև չունինք այն արժանիքը՝ սակայն կջանանք կամքի տոկուն աշխատութեամբ ձեռք բերել այն ոյժը՝ որով յաջողինք մխիթարել ձեզ և ժողովրդին։

Թագաւոր

Ես՝ ձեզ երկուսիդ էլ հետս առնելու եմ՝ և տանելու ձեր հօր՝ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի մօտ։

Արիստակէս

Տէր Թագաւոր, օրհնեալ լինի ձեր կամքը, մենք համաձայն ենք։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Թագաւոր (Լուսաւորչի մօտ)

Օրհնէր մեզ, մեր Լուսաւորիչ հայր։

Լուսաւորիչ

Ամենաբարձրեալն Աստուած օրհնէ ձեզ։

Թագաւոր

Լուսաւորիչ հայր, տեղեկանալով՝ որ դուք գտնվում էք Դարանաղեաց Մանայարկ լեռան անապատումը, ուստի արքունի շքախմբիս հետ բերի այս երկու հրեշտակակրօն սուրբ հայրերին, և ուրախ եմ ձեզ այստեղ գտնելուս վերայ։

Լուսաւորիչ

Ո՞վ են այս սուրբ հայրերը։

Թագաւոր

Սորանք երկուսն էլ քո հարազատ որդիքն են Վրթանէսը և Արիստակէսը։

Վրթանէս և Արիստակէս

Մեր հարազատ հայր, թող համբուրենք՝ քո հայրական սուրբ աջը. մեր ծնող սուրբ հայր, դու՝ որ մեզ յանձնեցիր Աստուծոյն և զնացիր քո սուրբ պարտականութիւնը կատարելու, քո Աստուածը քո աղօթքովը մեզ իւր ձեռքի տակին անբիծ պահեց և ահա այսօր մեզ՝ մեծ և բարեպաշտ թագաւորիս ձեռքովը քեզ է յանձնում։

Լուսաւորիչ

Եկէք առաքինի որդիքս, եկէք համբուրեմ ձեր պարզ և պայծառ երեսը, որ դուք առաքինութեան և սրբութեան շաւղիցը չէք շեղուել և երեսիս ամօթ ու նախատինք չէք դարձել։

Թագաւոր

Լուսաւորիչ սուրբ Հայր, ես Տրդատ թագաւորս, Աշխէն թագուհին և Խոսրովիդուխտ քոյրս. նախարարներս և ամբողջ Հայ ժողովուրդը ցանկանումենք՝ որ Արիստակէս որդիդ ձեռնադրես եպիսկոպոս և Հայրապետ Հայաստանի, որ քո տեղը սա յաջորդէ՝ երբոր դու յամենաս անապատումը։

Լուսաւորիչ

Տէր թագաւոր, համաձայն եմ, և բոլորի կամքի և ցանկութեան համաձայն Արիստակէսին կընձեռնադրեմ եպիսկոպոս և Հայրապետ Հայաստանի։

Թագաւոր

Լուսաւորիչ սուրբ Հայր, շատ ուրախ ենք, որ մեր խընդիրը առանց դժուարութիւն յարուցանելու՝ յանձն առար կատարել։

(Լուսաւորիչը Արիստակէսին ձեռնադրում է եպիսկոպոս)

Լուսաւորիչ

Արիստակէս սիրելի որդիս, ահա այս սուրբ հայրերի եպիսկոպոսների և քահանաների մասնակցութեամբ, մեծ թագաւորիս, նախարարների և բոլոր ժողովրդի հաւանութեամբ՝ ձեռս դնելով քո գլխի վերայ՝ քեզ ձեռնադրումեմ եպիսկոպոս և իմ տեղը Հայաստանի Հայերին Հայրապետ։

Որդի, դու այժմ Քրիստոսին ես նուիրվում՝ գործողէլ պէտք է Քրիստոսին նմանուիս։

Քրիստոսը աշակերտներին հաւասարապէս սիրում էր, դու էլ քո եկեղեցականներին պէտք է առանց խտրութեան հաւասարապէս սիրես. և հոգաս նորանց ապրուստի պատուաւոր միջոցը. որ նորանք այդ կողմից հոգս չունենան, այլ իրանց հոգսը դարձնեն ժողովրդի զանազանակերպ օգտի և եկեղեցիների պայծառութեանը վերայ։

Որդի, չափ ու սահման որոշիր, որ ամեն մէկը՝ իւր որոշ չափն ու սահմանը գիտենալով՝ նորա համեմատ տայ ընթացք իւր գործող քայլերին։

Որդի, քիչ բարձիր, որ կարողանան բեռը տանել, չը ընկճին բեռին տակը ի վնաս քեզ և ի վնաս իրանց։

Որդի, հօտիդ միջի հիւանդին՝ աչքից մի ձգեր, այլ նորա վերայ աւելի հոգս ունեցիր. ծնողը իւր ուշադրութիւնը առաւելապէս դարձնում է և նոյն իսկ մահամերձ հիւանդ որդու վերայ. իմանալով՝ որ ոչ ոք իւր կամքովը չի հիւանդանում. յիշիր՝ քո Փրկիչն եկաւ կորած և հիւանդ ոչխարի համար աշխարհ՝ որ գտնելով դրեց խաչի հետ ուսին վերայ և տարաւ իւր թագաւորութիւնը։

Որդի, մի զուարճանար յանցաւորներին պատժելու վերայ՝ այլ աշխատիր պատժի առիթը մէջ տեղից վերացնել։

Որդի, յետ ընկած գիւղերումն անգամ բաց ուսումնարաններ և արհեստանոցներ, որովհետև ազգի ոյժը և յառաջադիմութիւնը այդ երկու հաստատութիւններից են կախուած. լաւ և պիտանի մարդիկ՝ այդ երկու շէնքերից են դուրս գալի։

Որդի, գործող աշխատաւորի յարգն իմացիր, նորա առաջ բաց գործելու ընդարձակ ասպարէզ, նորա վիճակը արա նախանձելի՝ որ նրանց հետևողների թիւն աւելանայ։

Որդի, նա՝ որ իւր հանճարովը և փորձառութեամբը կարող է երկու մեծ վիճակ շատ լաւ և շատ գեղեցիկ բարեկարգութեամբ կառավարել՝ նորան մի թողներ անգործ։

Որդի, նա՝ որ թէև ունի բարձր ուսումն՝ բայց չունի քաղցր լեզու, չունի քաղաքավարութիւն, նորան մի՛ ընդուներ քո ընտրեալների փարախի մէջ, որովհետև անօգուտ է բարձր ուսումը, երբոր բնաւորութիւնը անընկճելի կերպով վայրենի է։

Որդի՛, նա՝ որ թէև չունի բարձր ուսումն, բայց խոնարհ և հեզ հոգւով, մաքուր վարքով, և վառուած սիրով կապուած է հոգևորականութեանը՝ նորան մի՛ մերժել ընդուներ քո ընտրեալների փարախի մէջ։

Որդի, շուրջդ ունեցիր բարեխիղճ անձեր. և որ և է մի կարևոր գործի մասին՝ բոլորին մօտեցրու. խօսեցրու, բոլորի կարծիքն իմացիր, որովհետև կարծքների բաղխումը՝ ցրվում է կասկածի մռայլը և ճառագայթում սիրահամբոյր ճշմարտութիւնը, և ապա ըստ այժմ զբաբին ի բարի ամանս ժողովիր. և զխոտանն դիր ի բացեայ։

Որդի, հրաւիրիր պաշտօնի առաւելապէս փորձառու և պատկառելի ծերունիներին՝ քան անփորձ երիտասարդներին. յիշիր Սողոմոնի խրատը. երիտասարդն եթէ օդը վերանայ՝ նորան մի՛ հաւատար, յիշիր նորա որդի Ռոբովամի տխուր փորձը։

Որդի. ուսումը՝ մարդուս առաջի կատարելագործումն է. բնաւորութեան աղնուութիւնը՝ երկրորդ կատարելագործումն է. իսկ փորձառութիւնը՝ երկու կատարելագործութեանց պսակն է։

Որդի, Ցիսուսը 40 օրուայ փորձից յետոյ եկաւ գործելու ասպարէզ, դու էլ քո երիտասարդ պաշտոնեաներին գոնէ քսան տարի մանր պաշտօնների փորձի բովիցն անցնելուց յետոյ՝ աստիճանաբար բարձրացրու գործելու մեծագոյն ասպարէզները։

Որդի, անգործ մի՛ թողներ և ոչ մէկին. անգործները սատանայի կամաւոր գործավարներն են։

Որդի, չարախօսների և զրպարտողների լեզուներովը՝ շատ անմեղներ՝ պատուից ընկել են, շատերն՝ անբաղդացել են և շատերը՝ չարաչար տուժել են, զգոյշ պահիր քեզ այն թունաւոր օձերիցը, որ չը թունաւորեն քո մաքուր լսելիքը, որոնց կորստեան համար՝ ինքդ ես պատասխանատու ահեղ դատաւորի առաջ։

Որդի, երբոր քո եկեղեցականներն իրանց սուրբ կոչմանց համաձայն՝ իրանց բարձր դիրքի վերայ լինին. այն ժամանակ կլինին լոյս աշտանակի վերայ և լոյս կտան ժողովրդին. պայծառութիւն՝ եկեղեցիներին. և պատիւ՝ քո հմուտ ղեկավարութեանը։

(Լուսաւորիչը Տրդատին)

Լուսաւորիչ

Մեծ թագաւոր, ահա այս սուրբ հօր ձեր մեծութեան բաղձանաց համաձայն ձեռնադրեցի եպիսկոպոս և Հայաստանի

Հայրապետ, այսուհետև սորա հետ ի միասին շրջեցէք Հայաստանի բոլոր կողմերը և տարածեցէք սուրբ Աւետարանի լոյսը բոլոր Հայերի մէջ. ես էլ երբեմն երբեմն կիջնեմ անապատից և կօգնեմ ձեզ։

(Լուսաւորիչը համբուրում է Արիստակէսին և Տրդատին և մնաս բարեաւ ասում ու հեռանում է անապատը)

Լուսաւորիչ

Մնաս բարեաւ մեծ թագաւոր, ամենամեծ Աստուածը թող ընդ միշտ օրհնէ և պահէ ձեզ՝ առողջ՝ հոգւով, առողջ՝ մարմնով և առողջ՝ աղգօգուտ գործքերով. ցկրկին տեսութիւն։

Տրդատ

Դաս բարեաւ մեր լուսաւորիչ բարի Հայր, քո օրհնութեամբ և քո կրկին գալստեան յուսովը՝ կաշխատինք աւելի մեծամեծ գործքեր կատարել՝ որ գաք, տեսնէք և ուրախանաք։

ՁՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

(Տրդատ և Արիստակէս)

Տրդատ

Արիստակէս սուրբ Հայր, սիրելով ընթերցանութիւն՝ միշտ կարդումեմ սուրբ Գիրքը, և հոգւովս ցանկանում եմ՝ որ նորա ուսումը գիտենան իմ ազգը՝ և իմ բոլոր հպատակները. բայց ինչպէս կարող են գիտենալ՝ երբոր ուսումն չունին, զուրկ են կարդալ ու գրելուց. և այսպէս զրկուած են մնում սուրբ գրքի բարոյական և փիլիսոփայական գերազանց գիտութիւնից. ուստի պէտք է դպրոցների և ուսուցիչների թիւն աւելացնէք, առաջադիմութեանց վերայ՝ խիստ և շրջահայեաց ուշադրութիւն դարձնէք, իսկ նորանց բոլոր ծախքերի միջոցը ես ինքս կապահովացնեմ։

Արիստակէս

Տէր թագաւոր, ձեր հրամայածը նոյն իսկ իմ սրտի ցանկութիւնն է և իմ լուսաւորիչ հօր սուրբ պատուէրն է, ուստի ամենայն ուրախութեամբ աշխատելու եմ ուսումնարանների և ընդ նմին արհեստանոցների թիւն աւելացնել։

Օտայ

Ողջոյն քեզ մեծ թագաւոր։

Թագաւոր

Ո՞ղջ եկիր Օտայ իշխան, ի՞նչ լուր ունիս։

Օտայ

Այն լուրն ունիմ՝ որ Կոստանդիանոս թագաւորն ընդունել է քրիստոնէութիւն և մեծամեծ բարի գործեր է կատարում։

Թագաւոր

Եթէ ուզիդ, Կոստանդիանոսը քրիստոնէութիւն է ընդունել՝ շատ ուրախ կլինիմ, մանաւանդ որ՝ այսօր մեր Լուսաւորիչը գալու է. նորա հետ կը խորհրդակցենք և ի միասին կը գնանք Հռոմ և յայտնելու Կոստանդիանոսին մեր ուրախակցութիւնը նորա քրիստոնէութիւնը ընդունելու համար։

Օտայ (Լուսաւորիչը գալիս է)

Մեծ Թագաւոր, Լուսաւորիչն ահա գալիս է։

Թագաւոր

Շատ լաւ, ես ինքս էլ ցանկանում էի նորան տեսնել։

Լուսաւորիչ

Ողջոյն քեզ մեծ Թագաւոր։

Թագաւոր

Օրհներ ինձ սուրբ Հայր։

Լուսաւորիչ

Փառք եմ տալի ամենաբարձրեալ Աստուծոյն՝ և օրհնումեմ քեզ. ով Տրդատիոս մեծ Թագաւոր, որովհետև տեսնումեմ, որ զուր չէ անցել իմ արտասունքները և իմ արիւնի հոսելը, այլ նորանք ոռոգելով Հայաստանի անտերը ու անդաստանները և ձեր իսկ օգնութեամբ կենդանութիւն են սփռել բոլորի վերայ և վառ ի վառ ծաղկեցրել. այսուհետև ցնում է ինձ՝ իմ վերջին օրհնութիւնը տալ և անդարձ քաշուիլ անապատը։

Թագաւոր

Սուրբ Հայր, մի խնդիր էլ ունիմ քեզանից՝ այն էլ կատարիր և յետոյ դարձիր անապատ։

Լուսաւորիչ

Մեծ Թագաւոր, հրամայիր, յանձն եմ առնում կատարել, որովհետև այժմեան հրամաններդ՝ գիտեմ, որ հաւատքի և հոգու դէմ չեն լինելու։

Թագաւոր

Հաստատ տեղեկացայ, որ Կոստանդիանոս կայսրը ընդունել է քրիստոնէութիւն, ուստի կամենումեմ Քեզ և Արիստակէս հօր հետ գնալ Հռոմ և յայտնել նորան մեր ուրախակցութիւնը։

Լուսաւորիչ

Մեծ Թագաւոր, հոգւոյս հրճուանքով լսեցի այդ ուրախաբար լուրը և պարտաստ եմ գնալու։

Թագաւոր

Իշխան Օտայ, պատրաստութիւն տեսէք, որովհետև մեծ շքախմբով գնալու ենք Հռոմ. հետներս լինելու են մեր Լուսաւորիչը. Արիստակէս սուրբ հայրը, Ալբիանոս եպիսկոպոսը. իսկ զինուորական կարգից՝ կլինին չորս գահերէց կուսակալները, Ա. Նոր—Շիրականի կողմի։ Բ. Ասորեստանի կողմի։ Գ. Արուեստական կողմի։ Դ. Մասքթաց կողմի։ Այլև Անգեղ տան մեծ իշխանը։ Թագակիր Ասպետը. Մեծ սպարապետը. Մոկաց իշխանը։ Սիւնեաց իշխանը. Ռուշտունեաց իշխանը. Մաղխազութեան տան իշխանը. Շահապիվանի Շահապը. և Սպարապետութեան իշխանը, այլև շատ մեծամեծներ և 70,000 ընտիր զօրք։

Օտայ

Մեծ Թագաւոր, բոլորն էլ իւրեանց կազմերովը շատ շուտով պատրաստ կլինին։

Թագաւոր

Ուրեմն շտապիր և շուտ պատրաստիր։

Օտայ

Մեծ Թագաւոր, բոլորը պատրաստ սպասումեն ձեր մեծութեանը։

Թագաւոր

Ահա և ես պատրաստ եմ։

(Թագաւորը պալատից դուրս է գալի եւ բոլորը աղաղակումեն)

Ժողովուրդ զօրք և նախարարներ.

Կեցցէ, մեր մեծ Թագաւոր Տրդատիոսը. կեցցէ մեր Լուսաւորիչ Գրիգորիոսը, կեցցէ մեր հայրապետ Արիստակէսը կեցցեն, կեցցեն և միշտ կեցցեն, ուրախ գնաք և կրկնակի ուրախութեամբ վերադառնաք։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Սպասաւոր (Հռովմում)

Մեծ կայսր, Հայոց մեծաց Տրդատ Թագաւորը, Գրիգորիոս Լուսաւորչի հետ իրանց մեծ շքախմբով գալիս են և ահա մօտեցել են քաղաք մտնել։

Կոստանդիանոս կայսր

Սուրբ Սեղբեստրոս հայր, դուք ձեր եկեղեցական շքախմբով. և ես իմ նախարարներովը դուրս գանք և պալատիս դռան առաջը՝ մեր յարգելի մեծ հիւրերին շքեղաշուք պատուով ընդունենք։

սուրբ Սեղբեստրոս

Մեծ կայսր, մենք ահա պատրաստ ենք մեր տեղերումը։

Կայսրը

Իմ շքախումբն էլ պատրաստ է իւր տեղումը։

Սպասաւոր

Մեծ հիւրերն ահա եկան։

Տրդատ

Ողջոյն ձեր մեծութեանը, Քրիստոսապսակ ինքնակալ մեծ կայսր Կոստանդիանոս, ես՝ Հայոց մեծաց Տրդատ Արշակունի թագաւորս, լսելով ձեր մեծութեան քրիստոնէութիւն ընդունելը՝ հոգոյցս հրճուանքով ցանկացայ մեր Լուսաւորիչ Գրիգոր ս. հայրապետիս հետ մեր շքախմբովը գալ Հռոմ և մեր ուրախակցութիւնը յայտնելու Ձեր Մեծութեանը։

Կոստանդիանոս

Հայոց մեծաց Տրդատիոս մեծ թագաւոր, և Գրիգորիոս Լուսաւորիչ սուրբ հայր, անհնարին է բերանով բացատրել իմ և մեր Սեղբեստրոս սուրբ Հայրապետիս սրտերի անսահման ուրախացուցիչ զգացմունքը, և միմիայն մեր գրկախառն համբոյրներովը՝ ամբողջը լրութեամբ հասկացէք։

Գրիգոր Լուսաւորիչ

Մեծ ինքնակալ Կայսր Կոստանդիանոս և Սեղբեստրոս սուրբ Հայրապետ, իմ կրած սոսկալի չարչարանքների և 15 տարի դառնաշունչ օձերի մէջ բնակուելու մխիթարութիւնների հետ, ահա այսօր և այն մխիթարութիւնը հոգւոյս բուռն զգացմունքով հրճվումեմ, որ աշխարհի մայրաքաղաք Հռովմումն յայտնուել է մեր փրկիչ Յիսուս Քրիստոսը՝ այն էլ կայսերական պալատումը, թէև Հռովմը առաջին իսկ դարումը երկրպագել է Փրկչին՝ բայց ծածուկ, իսկ այժմ յայտնի. այն էլ հաւատումեմ՝ որ քրիստոնէական հաւատքի լոյսը տարածուել է թէ Ձեր Սրբութեան միջոցով և թէ սուրբ Թագաւորիս հրաշքով քրիստոնէութիւն ընդունելովը ուստի լիապատարուրախութեամբ եկայ համբուրել Ձեր Սրբութեանը և սուրբ Թագաւոր Կայսերիս՝ յայտնելով Ձեզ մեր սրտի անսահման ուրախակցութիւնը։

Սեղբեստրոս

Հայոց մեծաց Լուսաւորիչ սուրբ Գրիգորիոս, մենք լսեցինք ձեր կրած սոսկալի չարչարանքները, 15 տարի Խորվերապում օձերի մէջ բնակուիլը, այնտեղից կենդանի դուրս գալը, և բոլոր հրաշքները լսելով՝ ես և մեր մեծ Կայսրը հոգով ցանկանում էինք գալ և ձեզ տեսակցել և թէ ձեզ հետ համբուրուիլ. ահա այժմ անսահմանէ մեր ուրախութիւնը, որ այսօր այստեղ արժանացանք իրար տեսնել և իրար հետ համբուրուիլ։

Կոստանդիանոս

Տրդատիոս մեծ թագաւոր, փափագելի է ինձ լսել այն բոլոր անցքերն՝ որոնք կատարուեցան ձեզ մօտ։

Տրդատ

Ինքնակալ մեծ կայսր, այն անցքերն, ու հրաշքները մանրամասն պատմելը երկար կլինի, ես իմ ատենագրի միջոցաւ բոլորը ստուգութեամբ Յունարէն գրել եմ տուել, նորա մի օրինակը ահա հետս բերած եմ ինուէր Ձեր Մեծութեանը. ճիշտ և անսխալ է այլև այն կէտը, որ կատարեալ խոզի կերպարանքի փոխուեցայ ամբողջ մարմնովս և ինչպէս մի վարազ խոզ գնացի և նորանց մէջ բնակուեցայ, բոլորովին մերկ, և բոլորովին նորանց նման։

Կոստանդիանոս

Սարսափելով լսումեմ այդ սոսկալի հրաշքը և անհուն շնորհակալութիւնս յայտնում եմ Ձեր այդ անգնահատելի ընծայի մասին, և ի նշան մեր իրար տեսակցութեանց՝ կամենում եմ՝ որ այսօր և եթ կենք ժշտնջենական սիրոյ և միութեան դաշն, որ մեր երկու թագաւորութիւնները՝ յաւետեան իրար հետ հաշտ և սիրով միացած մնանք, մեր մէջը երբէք խռովութիւն և պատերազմ չընծագի և յամենայն դէպս օգնենք իրար։

Տրդատ

Մեծ Կայսր, Յիսուսն ասում է «Եթէ երկու հոգի իրար հետ միանան՝ ինչ որ խնդրեն կըկատարեմ» ուստի սրտագին համաձայնութեամբ և սիրով կը ստորագրեմ այդ նախանձելի դաշնագիրը։

Լուսաւորիչ

Յիսուսն ասում է «Մարդիկ սորանով կճանաչեն ձեզ՝ որ իմ աշակերտն էք, եթէ սիրէք իրար»։ Ուստի և ես համաձայն եմ և ուրախութեամբ կը ստորագրեմ։

Սեղբեստրոս

Յիսուսն ասում է «Երանի խաղաղարարներին, որովհետև նորանք կը կոչուին Աստուծոյ որդիներ։» Ուստի և ես համաձայն եմ և ուրախութեամբ կը ստորագրեմ։

Կոստանդիանոս

Յիսուսն ասում է «Նոր պատուիրան եմ տալի ձեզ, որ իրար սիրէք։» Ուստի ես էլ ուրախութեամբ այս նոր դաշնագիրը կը ստորագրեմ և կայսերական կնքովս կը վաւերացնեմ, որի վաւերացրած մի օրինակը կլինի զարդ Հայաստանի արքունի դիւանատանը՝ յիշատակ յաւետենական անխզելի սիրոյ, և միւսը կմնայ յաւերժայիշատակ զարդ մեր դիւանատանը։

Տրդատ

Ինքնակալ մեծ Կայսր, մենք արդէն պատրաստուել ենք վաղն և եթ վերադառնալ մեր թագաւորութիւնը։

Կոստանդիանոս

Տրդատիոս մեծ թագաւոր, մենք դեռ չենք յագել Ձեզանից և դեռ Ձեր Մեծութեանը համապատասխան այն յարգանքը՝ որ յատուկ է Հռովմի փայլուն հիւրասիրութեանը՝ չենք արտայայտել և դուք շտապում էք վերադառնալ։

Տրդատ

Մենք էլ դեռ չենք յագել Ձեզանից և Ձեր փայլուն հիւրասիրութեան չափն էլ, տեսնում ենք՝ արդէն անցաւ. և այս բոլորի գլխի թագն ու պսակն էլ սիրոյ դաշնագիրն էր՝ որ կըռեցինք, ուրեմն մեզ մնում է, ոչ այլ ինչ՝ եթէ ոչ մեր ջերմագին սէր և գոհունակութիւնը Ձեզ յայտնել և վերադառնալ մեր թագաւորութիւնը։

Կոստանդիանոս (նուէր)

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայր, ընդունեցէք իմ կողմից՝ նուէր ձեր սուրբ եկեղեցւոյն այս ոսկիները. ոսկեղէն Սկիհը. ս. Խաչը և ս. Աւետարանը։

Սեղբեստրոս (նուէր)

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայր, ընդունեցէք և իմ կողմից էլ այս ոսկեղէն ընծաները ի պայծառութիւն Ձեր Մայր տաճարին և վկայարաններին։

(Կայսրը Նախարարներին)

Կայսր

Գրիգորիոս սուրբ Հայրապետին և Տրդատիոս մեծ թագաւորին կնստեցնէք իմ ոսկեղէն կառքումը և այնպէս մեծ պատուով կուղղեկցէք։

Լուսաւորիչ և Տրդատ

Կրկին ու կրկին համբոյրներով և օրհնութիւններով մնացէք բարեաւ։

Սեղբեստրոս և Կոստանդիանոս

Սիրոյ և յարգանաց համբոյրներով և օրհնութիւններով գնացէք բարեաւ։

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Լուսաւորիչ

Մեծ թագաւոր, ահա եկանք Վաղարշապատ, ահա քո վերջին կամքն էլ կատարեցի քեզ հետ Հռովմ գնալով և վերադառնալով՝ ահա այժմ իմ հրաժեշտի վերջին ողջոյնը տալիս եմ քեզ Մեծ Թագաւոր և քեզ Արիստակէս սուրբ Հայր, ահա ձեր հոգացողութեանցն եմ յանձնում Հայ ժողովուրդը. եկեղեցականները, եկեղեցիները, ուսմանց տաճար դպրոցները, Հայ պատանիները. իսկ ես քաշվում եմ անապատը այնտեղ ցմահ մնալու, այսուհետև մենք իրար կտեսնենք յաւետենականութեան մէջ։

Տրդատ

Լուսաւորիչ սուրբ Գրիգորիոս հայր, օրհնէր մեզ, օրհնէր և մեր Հայ ազգին։

Լուսաւորիչ

Օրհնում եմ քեզ, Տրդատ մեծ թագաւոր, և քեզ ով Արիստակէս սուրբ քահանայապետ, օրհնում եմ հոգւոյս բղխած օրհնութիւններովը, որ դուք երկուքդ սուրբ եկեղեցւոյ ամրակուռ հաստատութեանը և շքեղաշուք պայծառութեանը լինիք երկու վիթխարի սիւներ։ Օրհնում եմ քեզ՝ Հայոց մեծաց Աշխէն թագուհի և քեզ սրբասուն օրիորդ Խոսրովիդուխտ, երկուքդ էլ արևի պէս լուսաւոր լինիք և երջանիկ կեանքի լոյս ճառագայթէք Հայաստանի և Հայերի վերայ։ Օրհնում եմ Հայոց ազգին, Հայոց ազգը օրհնութիւններ ընդունելով ապրի մինչև աշխարհիս վերջը, նորա կենդանութեանը նշան կտամ իմ արտասուքներովը լցուած մի մշտավառ կանթեղ, որ կլինի կախուած օդի մէջ Արագած սարի գլխի վերայ, այդ կանթեղը վառուած կտեսնեն Հայերից սրբակեաց մարդիկ, որքան Հայերն իմ լոյս հաւատը հաստատ պահեն՝ այն կանթեղը միշտ վառ կլինի, Հայի կեանքի ճրագն էլ միշտ վառ կլինի. իսկ երբոր Հայերը իմ լոյսը հաւատը թողնեն՝ այն ժամանակ իմ կանթեղը կհանգչի և Հայ անունն էլ կանհետանայ աշխարհից. մնացէք խաղաղութեամբ։

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Պետրոս

Տղերք, ես շատ եմ սիրում Դարանաղեաց գաւառի այն ամենագեղեցիկ սարը՝ որ կոչվում է։ Սեպուհ եկէք մեր ոչխարները տանենք արածացնելու այն սարը, որին «Գոհանամք» էլ են ասում։

Յակովբ

Պետրոս եղբայր, եթէ այն սարը գեղեցիկ չլինէր՝ Մանէ կոյսը չէր գնալ այնտեղ մի այրի մէջ ճգնելու։

Մատթէոս

Այն սարը, սրբերի բնակարան է, այնտեղ մի քիչ վերը մի մեծ ծառ կայ, որին Գի ենք ասում, նորա մէջը՝ կարծես թէ մի փոքրիկ տուն է. այնտեղ մի բարձրահասակ, սպիտակամօրուս և գեղեցկադէմ ծերունի սուրբ մարդ է ճգնում, ես մի քանի անգամ նորան տեսել եմ,

Գրիգոր

Տղերք, մենք թուով եօթը հոգի ենք, մեր ոչխարները քշենք այն կողմը. գնանք այն սուրբ մարդուն աղաչենք, որ օրհնէ մեզ, մեր ընտանիքը և մեր ոչխարները։

Բոլորը

Գնանք, գնանք։

Յովհաննէս (ոչխարները քշում են դէպի սարը)

Տղերք, ահա երևեցաւ Մատթէոսի ասած այն սուրբ մարդը՝ տեսէք՝ նա նստած է, աջ ձեռին խաչ ունի՝ կրծքի վերայ դրած, ձախ ձեռին գաւազան՝ ծնգների վերայ, բաց աչքով նայում է վեր դէպի արևելք, առաջը դրած է փայտից սեղան. նորա վերայ սկիհը մաղզմայով՝ նա աղօթում է։

Գրիգոր

Յովհաննէս եղբայր. այդ անունները՝ որ ասացիր՝ ո՞րտեղ ես սովորել։

Յովհաննէս

Գրիգոր ջան, ես փոքր ժամանակս մեր քաղաքի մի սուրբ քահանայի տանը ծառայութիւն էի անում, այդ անունները նորա տանը սովորեցայ։

Բոլորը

Տղերք, եկէք մօտ գնանք։

Գրիգոր

Չէ, սպասենք աղօթքը վերջացնէ, յետոյ կգնանք։

Պետրոս

Հէր օրհնած, ճգնաւորի աղօթքը վերջ կունենայ։

Յակովբ

Եթէ այդպէս է, ուրեմն առաջ գնանք։

Բոլորը

Սուրբ ծերունի Հա՛յր, օրհնիր մեզ, մեր ընտանիքը և մեր ոչխարները։

Մատթէոս

Տղերք, տեղիցը չի շարժվում. կարծես թէ մեռած է։

Գրիգոր

Տղերք, մօտենանք, ուղիղ որ մեռած է, երանի՜ քո հոգուն։

Յովհաննէս

Գիտէք ինչ անենք, հէնց այսպէս անշարժ թողնենք, այս ծառի բերանը և շուրջը մեծամեծ քարերով շարենք և այն քարերի վերայ մանր քարեր լցնենք, որ բոլոր ծակ ու ծուկը փակուի. և յետոյ վերան հող լցնենք, որ սորան ոչ ոք չը մօտենայ՝ ո՛չ մարդ և ոչ գազան։

Բոլորը

Շատ լաւ ես ասում։ բայց մօտենանք բոլորս էլ սուրբ ձեռը համբուրենք, և յետոյ սկսենք մեր գործը։ (Մօտենում և համբուրում են)։

Պետրոս

Տղերք, այժմ սկսենք թաղելու գործը։

Բոլորը

Սկսենք. սկսենք, դէ՛ աղերք քարեր բերէք։

Պետրոս

Մատթէոս դու ու Յակովբը շէնքի վերայ աշխատեցէք իսկ մենք քարեր կբերենք։

Լևոն (թաղելուց յետոյ)

Տղերք, շատ գեղեցիկ կերպով թաղեցինք այս սուրբ մարդուն, և գերեզմանն էլ այնպէս անյայտացրինք, որ ոչ ոք չի կարծէ՝ թէ այս թումբի տակին մարդ կայ թաղուած։

Հրահատ

Պետրոս եղբայր, ինչ լաւ բան արինք. որ լսեցինք քո խօսքը, եկանք այս կողմը և այս մեծ վարձքն արինք։

Պետրոս

Շատ լաւ, վարձքն արինք՝ հիմայ էլ նստենք հանգիստ սրտով հաց ուտենք, հաւատացէք՝ սիրտս այնպէս ուրախ է, կարծում եմ թէ մի ոչխարս՝ հազար է դարձել։

Յակովբ

Ուղիղ ես ասում Պետրոս եղբայր, մեր բոլորի սիրտն էլ ուրախ է. բոլորս էլ համահաւասար վարձատրուած ենք հաւատում։

(Շարականը երգել)

Հովուին հսկողի ճշմարիտ և քաջ հովուին պատկերի հովիՙքն եղեն հետեւողք, զոր ամփոփեցին զմարմինն մաքուր մերձ ի յայրն Մանեայ մեզ զՙեղ՝ ախտից մաքրութեան. ՙրով սրբիմք հոգւով ի թունից վիշապին։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Լուսաւորիչ (Լուսաւորիչը երևում է Գառնիկ ճգնաւորին)

Ողջոյն քեզ Գառնիկ, սուրբ ճգնաւոր։

Գառնիկ

Ո՞վ ես դու, որ կամենումես ողջունելովդ խանգարել սաղմոսերգութիւնս, աղաչում եմ քեզ՝ հեռացիր ճգնարանիցս։

Լուսաւորիչ

Գառնիկ սուրբ ճգնաւոր, ճգնարանիցդ դուրս եկ և տես. թէ ես ո՞վ եմ։

Գառնիկ (Դուրս է գալիս)

Արդ՝ քո քառահեղ դէմքիցն այնպէս է երևում, որ դու պէտք է լինիս մեր սուրբ հայրերից մէկը, այսու ամենայնիւ աղաչում եմ քեզ, յայտնիր ինձ՝ դու ո՞վ ես։

Լուսաւորիչ

Ես Տրդատ մեծ թագաւորի դարձի բերող և մկրտողն եմ։

Գառնիկ

Ուրեմն մեր բազմաչարչար Գրիգոր լուսաւորիչն ես։

Լուսաւորիչ

Գառնիկ, տեղդ կանգնիր և ինձ լսիր, շատ տարիներ առաջ հովիւները գտան ինձ ճգնարանումս ննջած. նոյն տեղը և եթ թողին անշարժ, ճգնարանիս դուռը և շուրջը քարերով ծածկեցին և վերան հող լցնելով տեղը անյայտացրին, այն ժամանակը կռապաշտութեան խաւարը Հայաստանիցը դեռ բոլորովին չէր անհետացել, ուստի պէտք էր անյայտ մնալ. իսկ այժմ սուրբ հաւատքի լոյսը արդէն ճառագայթուել է ամեն տեղ

այս պատճառով կգնաս Սեպուհ սարը, այնտեղ կըգտնես Գի կոչուած մի հաստաբուն ծառ, նորա արևելք նայող ընի ցածրումը ճգնարանիս դուռն է՝ որ մտնում է նոյն ծառի ընի մէջ, այնտեղ է իմ նշխարքը, որ վեր կառնես և կդնես նոյնչափ մեծութեամբ պատրաստած մի փայտեայ արկեղի մէջ. կտանես Թորդան. և այնտեղ կթաղես. կաց խաղաղութեամբ։

Գառնիկ (Լուսաւորիչն աներեւութանում է)

Ո՜վ իմ ամենաբարձրեալ Աստուած, արդեօք այս ինչ տեսիլ էր՝ որ ինձ երևեցաւ և շուտով անհետացաւ, փառք քեզ Աստուած, փառք քեզ, որ ինձ արժանի արիր քո սիրելի և մեծ վկայի տեսութեանը. գնամ և շուտով գնամ մեր Գիւտ սուրբ եպիսկոպոսի մօտ տեսածս նորան պատմեմ։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

(Թորդանի Վանքի գաւթումը)

Գառնիկ

Ողջոյն քեզ Գիւտ սուրբ Հայր։

Գիւտ

Ո՞ղջ եկէր Գառնիկ սուրբ ճգնաւոր, բարի լինի գալուստդ։

Գառնիկ

Սուրբ Հայր բարի է գալուստս, բայց շտապողական։

Գիւտ

Պատմիր տեսնենք, այդ ինչպէս գործ է, որ շտապողական է։

Գառնիկ

Գիւտ սուրբ Հայր. առաւօտուս երբոր ճգնարանումս սաղմոսում էի, մեր սուրբ Գրիգոր լուսաւորիչն իւր փառահեղ դէմքովն երևեցաւ ինձ և ասաց «Գառնիկ, իմ մարմինը Սեպուհ սարումը այս ինչ տեղը թաղուած է, վեր կառնես այնտեղից և կտանես Թորդան՝ այնտեղ կթաղես»։

Այժմ եկել և ձեզ յայտնում եմ, որ նորա Սուրբ մարմինը տեղափոխելու պատրաստութիւն տեսնէք։

Գիւտ

Գառնիկ սուրբ ճգնաւոր, այս գիշեր հանգստացիր այստեղ, իսկ առաւօտուն շատ վաղ քեզ հետ իմիասին կգնանք. որովհետև լուսաւորչի մեծութեանը համեմատ պէտք է պատրաստութիւն տեսնենք,

Գառնիկ

Ես եկեղեցումը կաղօթեմ, դուք ձեր պատրաստութիւնը տեսէք։

Գիւտ

Պետրոս, Յակովբ, Մատթէոս, Գրիգոր, Լևոն, և Հրահատ սուրբ Հայրեր, մենք երջանիկ և բաղդաւոր ենք, որ մեր Լուսաւորչի սուրբ նշխարքը մեր օրով յայտնուեցաւ և մենք համբելու ենք նորա սուրբ աջը, ուրեմն թող ձեզանից միքանիսը արկղը պատրաստելու, մի քանիսը գերեզմանը փորելու և մի քանիսն էլ եկեղեցական հանդիսի պատրաստութիւնը տեսնելու աշխատի։

Պետրոս (Պատրաստութիւնը տեսնելուց)

Գիւտ սուրբ Հայր, բոլոր պարաստութիւնը տեսանք, արդէն արշալոյս է գնանք։

Գառնիկ (Բարձրանում են սարը)

Սուրբ Հայրեր, բարձրանանք, մի քիչ էլ բարձրանանք, ահա հէնց այս է Գի ծառը, այստեղ փորեցէք։

Յակովբ

Ահա դուռն երևեցաւ։

Գառնիկ

Թողէք դուռնը ես բաց անեմ

Գիւտ

Մատթէոս և Գրիգոր Հայրեր, մօտ եկէք և տեսէք, ահա մեր Լուսաւորիչ Հայրը փառահեղ նստած՝ նայում է դէպի արևելք, մօտեցէք համբուրենք սուրբ Աջը։

Գառնիկ (Համբուրելուց յետոյ)

Բոլորդ էլ Աջը համբուրեցիք, լաւ էլ տեսաք, բաւական է՝ ժամանակ չը կորցնենք, սկսենք, մեր գործը։

Ս. Գիւտ

Սուրբ նշխարքը՝ մի և նոյն նստած դիրքով զգուշութեամբ վերցրէք և դրէք արկեղի մէջ։

Գառնիկ

Սուրբ Հայրեր, արկղը վեր առէք, և հանգստութեամբ վերադառնանք։

Հայր Գրիգոր

Ահա մօտեցանք Թորդանին, բայց ժողովրդի բազմութիւնը խիստ շատ է, դժուարութեամբ կարող ենք ներս մտնել եկեղեցի։

Հայր Մատթէոս

Այսօր Հայերիս Լուսաւորիչ հայրն է մտնում Թորդան, հարկաւ կլինի ժողովրդի մեծ և խուռն բազմութիւն։

Հայր Յակոբ

Հայր Պետրոս. այսուհետև մեր Թորդանը լինելու է Թագուհի բոլոր վանքերի և մեծ ուխտատեղի բոլոր Հայերի համար։

ս. Գիւտ (Ժողովուրդը ս. Նշխարքը համբուրելուց յետոյ)

Պատուական հայրեր, սուրբ նշխարքը զգուշութեամբ իջեցրէք և նստեցրէք այն դիրքով՝ ինչ դիրքով ճգնարանումն էր։

Հայր Մատթէոս

Գիւտ սուրբ Հայր, տեսէք դիրքը կհաւանիք։

ս. Գիւտ

Շատ լաւ է, միայն գերեզմանի դուռը բաց թողնէք մինչև որ իմ կարճ ներբողը վերջացնեմ, յետոյ իսկոյն կփակէք։

Գառնիկ

Խոսիր ներբողդ սուրբ Հայր, ես միայն ներբողիդ եմ սպասում։

ս. Գիւտ

«Ո՜վ Գրիգորիոս, Հայաստանի Լուսաւորիչ սուրբ Հայր,

«դու քո սոսկալի չարչարանքներովը՝ ցաւերի կսկիծը հով-
«ցրիր. կրակի այրողական ոյժը՝ ոչնչացրիր. կայծակների զո-
«րեղութիւնը՝ կակղացրիր. ծխի մեղծութիւնը՝ շուշանի սպի-
«տակութիւն փոխեցիր. վիշապ օձերի չարութիւնը՝ ընտելաց-
«ցրիր. Վիրապի անդնդախոր դժոխքը՝ համբուրելի դրախտ դար-
«ձրիր. նորա մթութեան մէջ միայնութիւնը՝ հրեշտակի ընկե-
«ակցութեամբ նախանձելի հարսնարան դարձրիր. ամենա-
«բարձրեալ Աստուծոյն՝ երկնքիցը երկիր իջեցրիր։ Քաջերը՝
«վատթարացան, սպառնալիքները՝ դադարեցան, նահատակները՝
«բարձրացան, դևերը՝ հալածուեցան, կռապաշտական զոհերի
«ճենճերները՝ խափանուեցան, մոլորութիւնները՝ անհետացան,
«ճշմարտութիւնների դռները՝ բացուեցան, մէգ ու խաւարի
«մառախուղները՝ ի փախուստ դարձան, լոյսի ճառագայթները՝
«տարածուեցան, եկեղեցիների բարեկարգութիւնները՝ ապա-
«հովուեցան, ճրագների իւղերը՝ սահմանաչափ աւելացան, նո-
«րանց լոյսի բոցավառութեամբ՝ Հայաստանի բոլոր անկիւն-
«ները՝ լուսաւորուեցան. այլևս չեմ կարողանում քո շրջահայեաց
«և հեռանկատ մեծագործութիւնները մի առ մի թուել, որոնցով
«մեր Հայ ազգը և մեր հայրենիքը հրաշալի բարեզարդութեամբ
«նոր ի նորոյ ստեղծագործուեցան։ Երանի՜ քեզ սուրբ Հայր,
«երանի, որովհետև այսքան գործքերովդ՝ դու մարդ էիր՝ հրեշ-
«տակ եղար. երկրաբնակ էիր՝ երկնաբնակ դարձար, հողեղէն
«էիր՝ հրեղէն եղար. մահկանացու էիր՝ անմահացար։ Դու սի-
«րելի ես՝ Աստուծոյն, յարգելի ես՝ հրեշտակներին, խնկելի ես՝
«մարդիկներին։ Արդ, սուրբ Հայր, դու՝ որ քո նշխարների
«հանգստեան տեղ այս սուրբ եկեղեցին ընտրեցիր, աղաչում
«եմք քեզ, քո անդառնալի բարեխօսութեամբը միշտ բարեխո-
«սիր աշխարհի բոլոր ազգերի համար՝ սէր և խաղաղութիւն.
«թագաւորներին սէր և անկեղծ հաշտութիւն. ազգերին՝ մանա-
«ւանդ Հայրերիս՝ սէր և միութիւն, ներկայ ժողովրդիս՝ առողջ
«կեանք և անընդհատ յաջողութիւն. սուրբ տաճարների ծառայող-
«ներին՝ սրբութիւն. տկարութիւն և անպուգատիպ բարեկազմու-
«թեամբ նախանձելի միութիւն։ Ո՜վ Լուսաւորիչ Հայր, ինչպէս
«որ այժմ սուրբ նշխարներդ հանգստանում են այս սուրբ եկե-
«ղեցումը՝ նոյնպէս էլ հոգւովդ եղիր այստեղ, որ միշտ բարե-
«խօսիս ամենաբարձրեալ Աստուծոյն. որ իւր Աչքը՝ այս սուրբ
«եկեղեցումն ունենայ՝ տեսնելու այստեղ աղօթողների ցաւերը.
«Ականջն էլ այստեղ ունենայ՝ լսելու այստեղ դիմող ժողո-
«վրդի խնդրուածները, որով նորա ամենասուրբ Անունը օրհ-
«նուի ամեն տեղ՝ մանաւանդ այս սուրբ եկեղեցումը, այժմ և
միշտ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Երգել խմբովին

Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող, որ յառաջ
գիտութեամբդ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ, ի
Պարթևական մեղապարտ ազգէն Լուսաւորիչ մեզ շնորհեցեր,
վանորոյ բարեխօսութեամբ սորա Փրկիչ կեցո զմեզ, այժմ և
ի քո ահաւոր Գալստեանն։

(Վ Ե Ր Ջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. Մասեցյանի անվան
А. Мясникяна

գրքեր
516
20 ռ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0348948

41820